373
2-72

373
Ղ-72

ԱՐՍԷՆ ՂԼՏՃԵԱՆ
(Գեղջուկ իրատարակութեան)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵՒՈՐ ՎԻՃԱԿԱՅԻՆ

ԸՆԴ ՊՐՈՑԻ

(1840—1912)

Հրատարակութիւն Նոյն ղպրոցի

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գ. Սամայեանցի
1912

EIOS 11 MAR 2010

ԱՐՍԷՆ ՂԼՏՃԵԱՆ
(Դոկտոր իրաւաբանութեան)

373
2-72

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵՒՈՐ ՎԻՃԱԿԱՅԻՆ

100%
31714

Դ Պ Ր Ո Ց Ի

(1840—1912)

428

Հրատարակութիւն Նոյն դպրոցի

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ... Гос. Публ. Библиотека
ՀԱՅԿ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գ. Սաճոյեանցի
1912

51.644
19 JUN 2013

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Ս. Փրկչի վիճակային դպրոցի հոգաբարձութիւնն 1911 թ. նոյեմբերի 4-ին իր 12-րդ նիստում լսելով դպրոցիս տեսչի զեկուցումը, որոշեց՝ ի նկատի ունենալով այն կրթական-կուլտուրական դերը, որ մեր վիճակային դպրոցն անա մօտ եօթանասուն տարի է կատարում է մեր հասնաց գաւառում, տօնել դպրոցական այդ պատկառելի դարաշրջանը պատշաճաւոր եղանակով։ Յորելեան տօնելու ժամանակի մասին հոգաբարձութիւնն յանգաւ այն եզրակացութեան, որ ամենից յարմարն է ներկայ ուսումնարանական տարւայ վերջին՝ 1912 թ. մայիս ամսին կատարել այն։

Ի նկատ ունենալով մեր դպրոցի նշանակութիւնը, ցանկալի համարուեց որքան հնարաւոր է, այդ տօնը կատարել շքով և այն ձևով, որ հասարակական լայն խաւերը մասնակցութիւն ունենան նրան։

Աչքի առաջ ունենալով, որ մեր քաղաքի մէջ և քաղաքից դուրս սուար թւով համաքաղաքացի ինտելիգենտ ուժեր կան, ինչպէս և նախկին սաներ մեր դպրոցի, առանձնապէս հոգ տանել, որ նոքա գործնական մասնակցութիւն ունենան ոչ միայն հանդիսին, այդ քիչ է, այլ յատկապէս այդ տօնը կազմակերպելուն և կատարելուն։

Հոգաբարձական ժողովը առանձնապէս խորհրդածութեան նիւթ դարձրեց մեր դպրոցի դերը շօշափելի կերպով հասարակութեանը պարզելու խնդիրը։ Ի նկատ առնելով, որ մեր դպրոցի դերը հասարակութեանը պարզելու լաւ միջոցներից մէկն է դպրոցիս պատմութիւնը, ուր հանդէս պիտի բերւի վիճակային դպրոցն իր 70 տարւայ գոյութեամբ, որոշեց յանձնարարել դպրոցիս—տեսչին, ներկայ տողերը

գրողին—կազմել մեր դպրոցի համառօտ պատմութիւնը։ Դրա հետ միաժամանակ յանձնարարուեց, որ տեսուչը մանկավարժական ժողովի հետ կազմէ յոբելեանական ծրագիրը գրական երաժշտական բաժնով։

Նախնական այս որոշումներից յետոյ ձեռնարկուեց գործի։ Ամենքն անցան իրենց դերի գլուխը, որի մանրամասնութիւնը ընթերցողը կըկարդայ ներկայ պատմութեան համապատասխան մասում։

Յատկապէս դպրոցիս պատմութիւնը կազմակերպելիս, հանդիպել ենք մենք մեծ դժուարութիւնների։ Մեզ համար շատ մանրամասնութիւններ դպրոցիս նախնական-սկզբնական շրջանից մնացին անորոշ, մութ։ Հարկաւոր վաւերաթղթերը, որ մենք բնականօրէն պիտի որոնէինք տեղիս դպրոցների դիւանում ու Ալէքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեան ու յաջորդարանի գործերի մէջ, յատկապէս 40-ական և 50 թուականների վերաբերմամբ, չգտանք մենք։ Նոքա ոչնչացած և անհետ կորած են։

Դեռ 1906 թուին երբ ես պաշտօնավարում էի այս Ալէքսանդրապոլի փոխանորդութեան մէջ, կային մի քանի հին գործեր նաև Զախալ օղլի Ստեփան արքեպիսկոպոսի ժամանակներից։ Այդ նոյն թուականին ես զբաղուած էի այն խնդրի քննութեամբ, թէ այն հողաբաժինը, որի վրայ շինուած են Ալէքսանդրապոլի փոխանորդական բնակարանը, հոգևոր կառավարութիւնը, աթոռապատկան կրպակները, վիճակային նախկին դպրոցի տեղը ու նրա ետևի խանութների շարքը ո՞ւմն է պատկանում, ո՞ւմ է տրուած։ Այս խընդիրն անհրաժեշտ էր պարզել, որոշելու համար այն իրաւունքները, որ ունէին վիճակային հին դպրոցն ու Աստուածածին եկեղեցին այդ տեղի վրա։ Այդ նոյն թուում մտածում էի ես ձեռնամուխ լինել դպրոցական մի շէնքի կառուցմանը, որի յատակագիծն իր ներքին կրպակներով արդէն պատրաստ էր, շնորհիւ Արղութեան դպրոցի հոգաբարձութեան։

Ահա այդ խնդիրների լուսաբանութեան համար հարկադրուած էի ես հոգևոր կառավարութեան գործերը քրքրել, ուր և քանի մի կցկտուր տեղեկութիւններ գտայ թէ հին յաջորդարանի շինութեան մասին և թէ նոյն դաւթում (ներկայ յաջորդարանի դաւթում) քանի մի սենեակների կա-

ռուցման մասին։ Սրանից պարզ է, որ եթէ ես վիճակային դպրոցի սկզբնաւորութիւնը 1840 թուին եմ դնում, դա հոգևոր կառավարութեան գործերից քաղած իմ տեղեկութիւնների շնորհիւ է։ Չլինէին այդ տեղեկութիւնները, հնարաւոր չէր լինել վիճակային դպրոցի սկզբնական շրջանի մասին որոշ բան ասել, ու պնդել, թէ նա այս կամ այն թուին է հիմնուած։ Աւելի պակաս կարող էինք մենք վիճակային հին դպրոցի տեղի ո՞ւմ պատկանելու մասին խօսել, ինչպէս և այն եկամուտների, որով այդ դպրոցն էր կառավարուում։

Մեզ հետաքրքրում էր խիստ կերպով նաև դպրոցի տնտեսական վիճակը իր սկզբնական շրջանում։ Այդ տեսակ տեղեկութիւններն հարկաւոր էին մեզ մի քանի կարևոր խնդիրներ լուծելու համար։ Մեծաւ մասամբ մեզ պակասում էին պաշտօնական վաւերաթղթեր այդ առթիւ, ու այն էլ ինչ որ արուել է ակնարկածս խնդիրները լուծելու համար, արդիւնք է մեծ որոնումների։

Վիճակային հոգևոր դպրոցի այս պատմութիւնը կարդացողը թող գիտնայ որ սրա որոշ մասերը, տեղ տեղ լրիւ չեն ոչ այն պատճառով, որ այս պատմութիւնը գրողը չի ուզեցել լրիւ մի պատմութիւն տալ, այլ այն պատճառով, որ նոքա ինչպէս արդէն ասել եմ, ոչնչացած են։ Այստեղ այդ առթիւ կարևոր եմ համարում հետևեալն ասել։ 1909 թուին տեղիս Հոգևոր Կառավարութիւնը հրաման է ստանում այրել հին գործերը, նոցանից կարևորները պահելով։ Ալէքսանդրապոլի այդ կառավարութիւնն այրել է և ոչնչացրել է ոչ միայն իր ատեանի գործերը, այլ նաև գործեր, որ պատկանելիս են եղել հոգևոր դպրոցին և որոնք տրուած են եղել իրեն պահ։ Այդ գործերի հատ ու կտորներ ժամանակի ընթացքում գտնուել են այս ու այն մսագործի և մանրավաճառի մօտ՝ իբր միս և ապրանք փաթաթելու թուղթ։ Դատապարտելի այս ընթացքի որակումը թող անէ հասարակութիւնը։

Այստեղ կարևոր եմ համարում յիշել, որ այս պատմութիւնն իբր մեր դպրոցի հրատարակութիւն, տպագրութեան է տրուել ոչ այլ կերպ, քան դպրոցիս հոգաբարձական ժողովում նախապէս կարդալուց և հաւանութիւն տալուց յետոյ։

Այստեղ պարտք եմ համարում անկեղծ շնորհակալութիւնս յայտնել այն անձանց և հիմնարկութիւններին, որոնք նպաստեցին ներկայ պատմութիւնը գրելիս՝ իրենց տուած տեղեկութիւններով և խորհուրդներով։

ԱՐՍԷՆ.

1912 թ.
Ալէքսանդրապոլ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Նախքան թէ կանցնէի բուն խնդրին, թող ներուի ինձ մի շեղումն անել, ու պարզել միջավայրային մի քանի խնդիրներ։

Ամենից առաջ պիտի ասենք, որ Ալէքսանդրապոլը մի նոր՝ հազիւ 81 տարուայ քաղաք է։ Նա հիմնուել է անցեալ դարի երեսնական թուականների սկզբներին հին Գիւմրի գիւղին կից, ուր նախքան գաղթական հայերի տեղ բռնելը բնակելիս են եղել նաև թուրքեր։ Նոցա տներն եղել են ներկայ կաթոլիկաց թաղում ու դէպի վեր –հիւսիս տարածւած։

Հայ գաղթականութիւնը—Ալէքսանդրապոլի յետագայ բնակչութիւնը—չի կազմւած եղել միապաղաղ տարրերից։ Նա բաղկացած է եղել երեք ամբողջական հատւածներից. մեծը՝ Ղարսի գաղթականներ, երկու փոքրերը՝ Կարինի և Բայազիտի։ Դեռ այժմ էլ կարելի է մատնանշել հայկական տարբեր բնագաւառների այդ երեք ուրոյն տիպի և խառնւածքի տէր գաղթականներին։ Մինչ փոքրաթիւ Կարնեցիք համարեա ձուլւել են Ղարսեցիների հետ, Բայազիտցի (Բայազցի, ինչպէս մեզնում ասում են) գաղթականներին այսօր էլ դեռ կարելի է խիստ

կերպով որոշել։ Էրզրումցին մեղմ թոյլ, աւելի մեծ քաղաքի—մեր միջավայրի առմամբ մայրաքաղաքի—տիպ է, շուտ ձուլուող։ Դրան հակառակ Ղարսցին ու Բայազիտցին աւելի կոպիտ, թէ կուզէք, բիրտ, դիմացկուն տիպ է, տիպական-ցեղական յատկանիշները երկար պահող, բայց միևնոյն ժամանակ նոր, թարմ, առողջ տիպ։ Մեր բնակչութեան մէջ առանձնապէս աչքի էին ընկնում իրենց, եթէ այսպէս կարելի է ասել, անտաշութեամբ Բայազիտցոց տիպը ու իրենց միամիտ - պարզութեամբ Ղարսեցոց տիպը։

Համառօտ գծերով, ահա այսպիսի էտնոգրաֆիական միջավայր էր ներկայացնում Ալէքսանդրապօլն իր հիմնման հէնց սկզբում, եթէ դրա վրայ չաւելացնենք նորեկ մանր այլ տարրեր, որոնք ընդհանուր այդ երեք մեծ հատուածների դիմաց շատ փոքր միաւորներ էին, որ կարողանային մեր քաղաքի ազգագրական գունաւորման վրա որևէ ազդեցութիւն ունենալ։

Ինչպէս ասացի, քաղաքի հիմնման հէնց սկզբին բնակչութեան գերակշռող տարրը Ղարսի գաղթականներն էին ուստի և շատ բնական է, որ նոքա էլ առաջնակարգ դեր խաղային քաղաքի կեանքի մէջ։ Տիգրանեաններ, Բաբայեաններ և այլն քաղաքի հէնց հիմնման օրից սկսած նոր համայնքի մէջ ղեկավարներն են եղել։

Ինչպէս յետագայում կտեսնենք, արդէն անցեալ դարի վաթսունական թւականներին, բայց նամանաւանդ յետագայ տասնամեակում

հասարակական ասպարէզ է մտնում մի նոր սերունդ։ Այդ նոր սերունդը բուն Ալէքսանդրապօլցին է արդէն, ու իբր այդպիսին, նա խառնուրդ է գաղթական երեք տարրերի։ Եթէ մենք ուզենանք ընորոշել այդ Ալէքսանդրապօլցուն, բայց յատկապէս եօթանասունական ու ութսունական թւականների սերունդներին, մենք այնտեղ հասարակական յատուկ խիստ շերտաւորութիւններ չենք գտնիլ։ Այդ սերունդն իր ընաւորութեամբ, բայց նամանաւանդ իր խառնուածքով, իր հասարակական—ազգային մտածելակերպով ու իդէալներով ունի մի ընդհանուր անուն,—ազգային խնդիրների, ազգային ներքին կեանքի դիմաց հայրենասէր և զբաղարիւն ազգասէր. ընդհանուր առմամբ պահպանողական. խիստ պահպանողական է եղել նաև դէպի իր ազգային եկեղեցին։ Հաւատարիմ հին ազգային աւանդական կարգերին, պահպանողական լինելով հանդերձ, ձգտել է իր ներքին ազգային—հասարակական գործերը կառավարել սահմանադրական կարգերով։ Ալէքսանդրապօլցի թէ հին և թէ նոր պահպանողական սերունդների համար սրբագործուած մի սկզբունք է ընտրական ժողովրդական սկզբունքներով կառավարել, օրինակ դպրոցները, եկեղեցական գոյքը և այլն։

Այդ հողի վրայ Ալէքսանդրապօլցին ընդհարումներ շատ է ունեցել իր ազգային հիմնարկութիւնների գոյութեան ընթացքում, թէ հընումը և թէ նորերումս։ Դեռ մեր յիշողութեան մէջ շատ թարմ է Արղութեան դպրոցի և ս. Աստուածածին եկեղեցու ծխական հոգաբարձու-

թեան պայքարն Երևանի թեմական իշխանութեան կարգադրութեան դէմ, և թեմական հրամանով ապօրինի և անիրաւունք կերպով ծխական այդ հոգաբարձութեան արձակելու դէմ։

Իզմիրլեան կաթուղիկոսի միջամտութեամբ լուծուեց այդ խնդիրը յօգուտ ժողովրդական սկզբունքի. Ալէքսանդրապոլցին պաշտպանեց իր իրաւունքը, ծխական հոգաբարձութիւնը մնաց իր պաշտօնում։

Այսպէս է եղել Ալէքսանդրապոլում, կրկնում եմ, նոքա մնալով պահպանողական, միշտ էլ թանգ են գնահատել իրենց ինքնավար իրաւունքները։

Ալէքսանդրապոլցին զուրկ չէ եղել և քաղաքական իր իդէալներով, որ խիստ զուտը ազգայնական հայրենասիրական է եղել։ Նրա քաղաքական ձգտումների հորիզոնը, սակայն, ունեցել է շատ յայտնի սահմաններ։ Ռուս յաղթական զօրքերի շնորհիւ թիւրքական արիւնալից կարգերից նոր ազատուած, նա վայելում էր իր նոր հայրենիքում այն բոլոր քաղաքացիական ազատութիւններն ու իրաւունքները, որ նրան տալիս էին ռուս պետական օրէնքներն ու պետական կենտրոնական իշխանութիւնը։ Նոքա տիրապետութեան այդ փոփոխութեամբ դառան ռուս քաղաքացիների հետ հաւասար իրաւատէրեր։ Մինչդեռ թիւրքական ռէժիմի տակ նոքա հպատակներ էին առանց տիրապետող ժողովրդի հետ հաւասար քաղաքացիներ լինելու։ Սահմանի այս կողմում նոցա ձեռք բերած անդորը ու ազատ ապրելու և զարգանալու պայմանները բնականաբար նոցա աչքերը

պիտի դարձնէին սահմանի դէպի միւս կողմը տանջւող իր եղբայրակիցները։ Ալէքսանդրապոլցու քաղաքական իդէալն ահա, դրա մէջն էր կայանում. նա աչքերն ուղղել էր դէպի Մասիսից այն կողմ, ձգտում էր, որ սահմանի այն կողմը գտնուած իր եղբայրները ազատուէին այնպէս, ինչպէս իրենք են ազատուել։ Թէ 1829 թ. 1853—6 և թէ 1877 թ. ռուս-թիւրքական պատերազմներին, ռուս յաղթական զօրքերի առաջից միշտ գնացել են հայ կամաւորների շարքեր, իսկ սահմանի այն կողմ գտնուած հայ ազգաբնակութիւնը իբր փրկիչների է դիմաւորել այդ եկողներին։ Ու ամեն անգամ էլ թիւրքահայաստանի հայկական մեծ ու փոքր բեկորներ անցել են ռուսական հողը։

Ալէքսանդրապոլցի հայրենասէրը տարուած Հայաստանի թիւրքական լծից ազատագրելու քաղաքական ծրագրերով, քիչ զոհեր չի տուել դրան, ու միշտ էլ անցեալում բուն է եղել քաղաքական այդ խմորումների։ Խմորումներ, որ վանական, եօթանասունական և մասամբ ութսունականի սկզբների հայրենասիրական ձգտումների ծուծն է եղել, ու մի վերջնական նպատակ ունեցել՝ հայկական գաւառներն ազատուած տեսնել քրիստոնեայ թագաւորի հատու սրով։

Ռուս ներքին պետական կեանքի մէջ այլ մեծ ձգտումներ, քաղաքական մեծ պահանջներ չէ ունեցել Ալէքսանդրապոլցին, քան այն, որ իր ազգային ներքին ինքնավար մարմինները՝ դպրոց, եկեղեցի, եկեղեցական ազգայն կալուածքներ՝ ճանաչուին պետական օրէնքների կող-

մից։ Քաղաքական չափաւոր նրա իդէալներն ու պահանջները տեղական ազգային կեանքի նկատմամբ ճանաչւել են այդ օրէնքների կողմից, ու Ալէքսանդրապոլցին իբր քաղաքացի գոհ է մնացել համեստ իր պահանջներով ու իր սահմանափակ քաղաքական--ազատագրական տենչերով՝ թիւրքահայ եղբայրների նկատմամբ։

Ասել թէ տարբեր տիպի գաղթականներից կազմւած այս քաղաքում կեանքն ամբողջովին մի շաբլօնով էր ընթանում, որ հասարակական ազգային գործերը կառավարւում էին միապաղաղ, ճիշտ չէ։ Այստեղ էլ եղել են իրար դէմ գործող ու հակառակ տարրեր։ Ասել թէ այդ հակառակ տարրերը կանգնած էին իրար դէմ սկզբունքային խնդիրների երարից տարբեր հասկացողութեամբ, այսպէս ասած, նոքա ազատամիտ և պահպանողական բանակներ էին իրար դէմ կանգնած՝ դժւար է։ Այդպիսի հասարակական շերտաւորումներ այն ժամանակ չկային, չէին արտայայտւում պարզ, որոշ կերպով, բայց անկասկած կերպով իրար հակառակ այդ կողմերը պարունակում էին ապագայի պահպանողական և ազատական հասարակական մտածելակերպի սաղմերը։ Այն ժամանակւայ նկատմամբ, դա ամեն ժամանակների պայքարն է հայրերի և որդիների, հնի և նորի։ Այն տարբերութեամբ որ ներկայումս ձևակերպւել, որոշ կաղապարի տակ է մտել հասարակական գործեր և խնդիրներ կարգադրելու ու արծարծելու մտածելակերպը, իսկ այն ժամանակ, անցեալ դարի երկրորդ կիսի սկզբների

Ալէքսանդրապոլցու համար այդ ըմբռնողութիւնները շատ աւելի բնազդական էին։ Հին տիպի Ալէքսանդրապոլցին ուզում էր տանըտնու կարգադրէր հասարակական կարևոր խնդիրները, և մեծամեծների խորհրդակցութեամբ կառավարէր ազգային հիմնարկութիւնները։ Երիտասարդ սերունդը, սակայն, չէր ուզում հաշտւել այդ դրութեան հետ. հասարակական գործերին միջամտելու իր մասն էր ուզում նա։ Ոչ մի գաւառական քաղաքում հին տիպի պահպանողական և ազատագրական տարրերի ներքին կռիւներն այնքան զօրեղ չեն եղել ազգային դպրոցների և եկեղեցու շուրջը, որքան Ալէքսանդրապոլում։ Ու ոչ մի գաւառական քաղաքում, այդ թւականներին այնքան բուռն չի եղել ազգաբնակչութեան մասնակցութիւնը դէպի դպրոցական գործը և ոչ մի տեղ էլ այնքան մեծ ջանքեր չեն գործ դրւել դպրոցը այն բարձրութեան վրա դնելու, ինչպէս Ալէքսանդրապոլում։ Կարելի է հաստատ ասել, որ եթէ Ալէքսանդրապոլը թեմական քաղաք լինէր, նա դեռ անցեալ դարի վաթսունական թւականներին կունենար հոգևոր թեմական դպրոց. մինչդեռ Երևանը միայն ութսունական թւականների վերջերին հասաւ միջնակարգ դպրոցի այդ տիպին։

Ալէքսանդրապոլի համար մի մեծ դժբախտութիւն է եղել, որ նա չի կազմել իր գաւառով մի թեմ։ Թեմ լինելը հնարաւորութիւն կուտար այստեղ բանալու մի թեմական դպրոց, ու այն եկամուտները, որ երկար տարիների ընթացքում գնացել են մեր վիճակից Երևանի

թեմական դպրոցին, կենային մեր թեմական դպրոցին։ Ալէքսանդրապոլը թեմ չլինելու պատճառով միջնակարգ դպրոցից զրկված լինելու ամբողջ մեղքը ծանրանում է հայ հոգևոր իշխանութեան վրա։ Մենք իր տեղում ցոյց կըտանք թէ ինչո՞ւ այդ եկամուտները պիտի մնային տեղում ու ինչո՞ւ այժմ էլ պէտք է աշխատել, որ վիճակային եկամուտները գործ դրվին մեր վիճակային դպրոցի վրա։

Այսպէս. ահա այն բոլորը, որ համառօտ կերպով կարող ենք ասել հայ այս միջավայրի մասին։ Աւելի հեռուն այստեղ չէինք էլ կարող գնալ. սա Ալէքսանդրապոլ քաղաքի պատմութիւնը չէ. այդ պատմութիւնը գրողը պէտք է օգտուի այլ աղբիւրներից, պաշտօնական գրագրութիւնից, ու այդ պատմութեան մէջ մեր աղբիւրներն ու մեր վիճակային դպրոցը կարող է միայն մի փոքրիկ տեղ գրաւել, սակայն իրեն համար խիստ պատուաբեր տեղ։

Բաւականանանք առայժմ այս ասածներով, ու դիմենք մեր վիճակային դպրոցի պատմութեանը։ Ինչպէս ընթերցողը կտեսնի, մենք այն բաժանել ենք մի քանի շրջանների։

Առաջին շրջան՝ սկզբից, մօտաւորապէս անցեալ դարի 1840 թուականի սկզբից մինչև 1868 թիւը։

Երկրորդ՝ ծաղկման շրջան, երբ վիճակային դպրոցն ստանում է ներկայ տիպի դպրոցի բոլոր նշանները, 1868—1885 թ. այսինքն մինչի անգամ դպրոցների փակելը։

Երրորդ շրջան՝ 1886—1896-ը. այս շրջանը վիճակային դպրոցի կրթական մասի փոքրացման

շրջանն է. նա դառնում է անունով մի սոսկ ծխական երկդասեան դպրոց. դա Մակարի ստեղծած տիպի դպրոցն էր։ Այս մասին յետոյ, իր տեղումն։

Չորրորդ շրջան՝ 1896—1905-ը. այս շրջանը բնորոշվում է նրանով, որ դպրոցը դառնում է կառավարչական — մինիստրական։

Հինգերորդ շրջան՝ այս շրջանն սկսվում է 1905 թվի սեպտեմբերից կամ 1905—6 ուսումնարանական տարվանից։ Այս շրջանը կարելի է հաշվել երկրորդ շրջանի շարունակութիւնը, քանի որ ոչանք չի խնայվել ու խնայվում դպրոցը վերածել իր նախկին՝ վիճակային դպրոցի տիպին։

Այս իւրաքանչիւր շրջանի մասին հարկաւոր տեղեկութիւններն ու բնորոշումները կուտանք իր տեղում, երբ կանցնենք այդ ուրոյն շրջանների պատմութեանը։

I.

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1840—1868

Դպրոցի սկզբնաւորութիւնը.

Այս շրջանի պատմութիւնը վերականգնելու դժուարութիւնները մեծ են։ Ո՞ր թուականից սկսած, կոչւել է Ալէքսանդրապոլի ս. Աստուածածին եկեղեցուն կից դպրոցը Հոգևոր Վիճակային։ Այս հարցին պատասխանելն անհնար է, քանի որ տեղական փոխանորդական և Հոգևոր Կառավարութեան գործերն այրւած են։ Այս խնդրի վրա մեծ լոյս կարող էին սփռել յատկապէս անցեալ դարու քառասնական թուականների գործերը, որոնք իրապէս գոյութիւն ունէին։

Սկզբնական այդ շրջանն եթէ ուզենանք բնորոշել, նրան կարող ենք մի ընդհանուր անուն տալ — Խալֆայական։ Վիճակային դպրոցն իբր այդպիսին մնացել է մինչի 1868 թուականը։

Դպրոցի սկզբնական շրջանի և նրա հիմնւելու մասին կարող ենք հետևեալն ասել։ Հոգևոր Կառավարութեան 1835 թւի մի գործից որի մէջ կային զանազան տարիներից տեղեկութիւններ, ինձ յայտնի է, որ Ալէքսանդրապոլի

բերդի վարչութիւնը տւել է Ալէքսանդրապոլի վիճակին յանձին ժամանակւայ առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոսին 1837 թւի օգոստոսի 7-ին № 214 վկայագրով այն հողաբաժինը, որի վրա շինւած են ներկայ յաջորդարանը, տակի կրպակները, հին վիճակային դպրոցի տեղն ու Աստուածածին եկեղեցու նորաշէն կրպակները, ըստ պատմական այդ վաւերաթղթի, հողաբաժինը տրւում է յաջորդարան, շտեմարան և դպրոց շինելու համար։

Մեր հոգևոր դպրոցը հիմնելու գործում անկասկած մեծ դեր են խաղացել Ստեփան արքեպիսկոպոս Խաժակեանն (Զախալօղլի), որ վախճանել է 1842 թւին և թաղւած է մեր հին գերեզմանատանը, և ժամանակի տեղական առաջնորդ Նիկողայոս եպիսկոպոսը։

Իրօք ե՞րբ է շինւել դպրոցը, դա մեզ հնար չեղաւ պարզել։ Մ. Արաբաջեանի յիշողութեամբ (Արարատ 1869 թ. սեպտեմբեր) նա հիմնւել է 1839-ին։ Հին գործերից քաղած իմ տեղեկութիւնները հաւաստում են, որ դպրոցը 1840 թւին գոյութիւն ունէր արդէն։ Յամենայն դէպս այս — 1840 թ. դուրս է ամեն կասկածներից, որն և մենք հաշւում ենք իբր դպրոցի սկզբնաւորութեան տարի։

Այդ հողաբաժինը կիսւում է հիւսիսից հարաւ, արևմտեան կէսը բաժին է ընկնում յաջորդարանին, միւս կէսը պահւում է համայնքի պէտքերի համար։ Մի հին հաշւեմատեանից իմ քաղած մի տեղեկութեան համաձայն տեղային արդիւնքներով շինւում է այստեղ մի յաջորդարան՝ հողաբաժնի արևմտեան կիսի վրա։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ԼԻՊԱՀ — СССР

իմ, իբր ականատեսի յիշողութիւններով, այդ շինութիւնը ընկած էր այն տեղում, ուր այժմ հոգևոր կառավարութեան շտեմարանն է։ Նա սպիտակ սւաղած մի հին խարխուլ շինութիւն էր դեռ 1878 թւին։ Նրա մուտքն էր հիւսիսային կողմից, իսկ արևելեան կողմից լուսամուտները նայում էին վիճակային դպրոցին։ Յառաջնորդարանի և դպրոցի գաւիթները բաժանւած չէին իրարից. իսկ այդ ժամանակում արդէն նա չէր ծառայում այլևս իբր բնակարան Ալէքսանդրապոլի փոխանորդի։ Դպրոցի մուտքը հիւսիսային, Պուշկինեան փողոցից էր ու նոյն տեղումն էր, ուր և ներկայ շինութեան կողք կողքի երկու մուտքերն են։

Յաջորդարանի այդ շինութեան դէմը, հին հոգևոր դպրոցի շինութեան ցածի մասում, այսինքն նրա հարաւային ծայրում, նոյն զործերի միջից իմ քաղած տեղեկութիւններով, շինւում է մի քանի սենեակ «վասն նորավարժից»։ Ճիշտ նոյն ձևով են եղել մեր ազգային դպրոցներն այդ թւականներին ու նրանից առաջ Հայաստանի այն գաւառներում, որտեղից և Ալէքսանդրապոլցին էր գաղթել, էլ չեմ ասում, որ ուսումնասէր և ազգասէր Ալէքսանդրապոլցու վրա կազդէր նաև Ներսիսեան դպրոցի անունն ու հմայքն այդ թւականներում, այն մտքով, որ իրենք էլ տեղական մի դպրոց ունենային։ Այդ վասն նորավարժից դպրոցն հէնց սկզբից կոչւում է վիճակային հոգևոր դպրոց։ Յետագայ շատ տեղեկութիւններից երևում է, որ նա կոչւել է նաև Ալէքսանդրապոլու Հայոց թեմական դպրոց։

Այդ դպրոցն ահա Ալէքսանդրապոլի Հոգևոր դպրոցի սկզբնաւորութիւնն է, որն իր ծաղկման վիճակին է հասել 1868—85 թւականներին։

Նիկողայոս եպիսկոպոսի ժամանակ ոչ միայն հիմնւում է վիճակային հոգևոր դպրոցը այլ նաև ծաղկում։ Սրա օրով վեարտեսուչ է կարգւում իւր ձեռնասուն Յակովբ վարդապետ Շահպազեանցը։ Անցեալ դարի յիսունական թւականների սկզբներում հոգևոր դպրոցում ուսումը նորից ծաղկում է Մխիթարեանցի (յետոյ Յակովբ քահանայ) ջանքերով։ Նա մնում է դասատու այդ դպրոցում, ինչպէս յետոյ մենք կտեսնենք, մինչև 1863 թւի ամառը։

Այդ դպրոցի վրա առանձին հոգ է տանում Սիրական աղա Գորոյեանը, որ Ներսէս կաթուղիկոսի ժամանակ վերջինիս նշանակած աշխարհական փոխանորդներից կամ գործակալներից մէկն էր, ինչպիսիք կային Կովկասի նաև միւս գաւառներում։ Նրա ջանքերով դպրոցն իր գոյութիւնը շարունակում է, մինչև որ առաջ է գալիս վերատեսչութիւն կամ հոգաբարձութիւն հաստատութիւնը։

Այսպէս, եթէ մենք ամփոփելու լինինք մար ասածները հոգևոր դպրոցի սկզբի տարիների համար, այսինքն 1840—58 թւերի համար, մենք կտեսնենք, որ մինչի 1843 թիւը դպրոցի դասատուների և վերատեսչի մասին ոչ ինչ չգիտենք։ 1843—48 թւերին դպրոցի տեսուչ և ուսուցիչ է եղել Յ. վարդապետ Շահպազեանը. այնուհետև երևի 1850 թւից Մխիթարեանը մինչի 1856 թիւը։ Մատթէոս կաթուղիկոսի օրով հաստատւում է վերատեսչու-

թիւն։ Սա ինչպէս գիտենք հոգաբարձութիւն է։

Ասածներիս վրա կաւելացնենք որ Ներսէս V-ի ժամանակ մտածում են հոգևոր դպրոցի համար նոր շէնք կառուցանել։ Նոյն դպրոցի պաշտօնական գրագրութիւններից երևում է, որ Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը դիմել է Ներսէս V-րդ կաթուղիկոսին հասարակական հաւաքական մի խնդրագրով և թոյլտուութիւն խնդրել կառուցանելի ս. Փրկիչ եկեղեցու համար յատկացրած տեղի հարաւային և հիւսիսային ճակատների վրա մի մեծ շինութիւն շինել վերան հոգևոր դպրոց և տակը կրպակներ։ Այդ խնդիրը բացատրւում է նրանով, որ դպրոցի հին շինութիւնը, որի մէջ եղել է Հոգևոր դպրոցը դեռ մինչի անցեալ դարի 80-ականի սկզբները, դպրոցի համար անբաւարար է։

Թողնելով դպրոցական շէնքի մասին յատկապէս մի առանձին գլխում խօսելու, այստեղ կարճենք խօսքը հետևեալ քանի մի տեղեկութիւններով։ Եղած պաշտօնական գրագրութիւններից մենք գիտենք, որ Ներսէս V-ը կոնդակով թողնում է այս տեղը Ալէքսանդրապոլի ամբողջ հայ հասարակութեան տրամադրութեանը։

Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը 1867 թւի յուլիսի 22-ին № 32 յայտարարութեամբ դիմում է տեղիս հոգևոր կառավարութեան միջոցով էջմիածնի Սինօդին յիշածս թոյլտուութեան համար։ Սինօդն ընթացք չի տալիս գործին, ուստի և հոգաբարձութիւնն առանձին խնդրով դիմում է Գէորգ IV կաթուղիկոսին։ Այս խնդիրն էլ մնում է անհետևանք, մինչև

որ ռուս-թուրքական 1877 թւի պատերազմից յետոյ հնարաւոր է լինում նոր դպրոցական շէնքի խնդիրը լուծել պատաւաւոր կերպով։

Այս տեղեկութիւնն էլ, որ դեռ Ներսէս V-ի ժամանակ գոյութիւն է ունեցել հոգևոր դպրոց ու ունեցել է հոգաբարձութիւն, լաւ ապացոյցներից մէկն է հոգևոր դպրոցի դեռ քառասնական թւականների գոյութիւն ունենալուն։

Իբրև խալֆայական, բայց պաշտօնական դպրոց, նրա ուսուցիչները պէտք է լինէին ժամանակի զրագէտներն ու յատկապէս քահանաները. իսկ աւանդման առարկաներն էին լինելու հայոց լեզու, կրութիւն, քերականութիւն, ու այն ժամանակւայ իմաստութեան ուղն ու ծուծը՝ ճարտասանութիւն։

Թէ ովքեր են եղել յատկապէս դասատուները, դա մնացել է մինչի օրս էլ անյայտ։ Ս. Փրկչի դպրոցի դիւանաւորան այդ մասը կորած, անյայտացած, գուցէ ոչնչացրւած է։ Պաշտօնական վաւերագրից առաջին տեղեկութիւնը, որից մենք կարող ենք տեղեկութիւններ քաղել Ալէքսանդրապոլի հայ համայնքի այդ դպրոցի եկ և մուտքի, ուսուցչական կազմի մասին հետևեալն է։

Նախապէս ասենք, որ մեր ստորև տւած տեղեկութիւնները քաղում ենք 1863–65 թւերի մի հաշւամատեանից։

Այդ խիստ կարևոր մատեանը մեզ ասում է, որ 1863 թւի սկզբից, կամ 1862 63 ուսումնարանական տարում դպրոցն ունեցել է երեք դասարան։ Այսինքն ամբողջ դպրոցը բաղ-

կացած է եղել երեք բաժան մունքից։

Բուն մատեանը մեզ ասում է.—

Դեկտեմբեր 13. «Ծուաւ Ալէքսանդրապոլաբնակ Գասպարի Անմեղիկեան ի վարձ զանազան աշխատանաց վասն մեծ դօսքայի երրորդ դասատան երեք մանէթ. վասն տասն և մէկ լուսամուտից ձմեռնային շրջանակաց հանդերձ ապակօք քսան և եօթն մանէթ յիսուն կոպ. և վասն տասն և չորս ապակեաց ագուցելոց յամառնային շրջանակս երկու մանէթ եօթանասուն կոպ. ընդամէնն երեսուն և երեք մանէթ քսան կոպէկ»։

Ստորագրել է ըստացայ Գասպար Անմեղիկով

Ուսուցիչներ ունեցել է այդ դպրոցը եօթը հատ, աւանդել են 11 առարկայ։

Այսպէս, ուրեմն, 1862—63 ուսումնարանական տարուայ մասին մնացած փաստացի այդ տեղեկութիւնը միակն է, որ մեր առաջ պիտի պարզէ մի շարք կարևոր հանգամանքներ։

Շատ բնական է, որ դպրոցի այդ երեք բաժանմունքները միանգամից չէին բուսնել, այլ նոքա կամաց կամաց, երկար տարիների ընթացքում պիտի բացուէին։ Այստեղ չպէտք է մոռանալ, որ այդ դպրոցը պիտի մրցէր Ալէքսանդրապոլի այն ժամանակուայ տնային բազմաթիւ խալֆայական այս ու այն տիրացուի, տէրտէրի ու զրագէտ վարպետների (կանանց) մօտ եղած դպրոցների հետ։ Խալֆայական այդ դպրոցները դեռ անցեալ դարի 70-ական թուականներին խիստ ծաղկման մէջն էին, ուր մնաց, որ դրանից տասը, քսան, երեսուն տարի առաջ։

Ու եթէ ի նկատի ունենանք, որ այդ երեքդասարանեան դպրոցն իր այդ կազմով հասել է 1862—63 ուսումնարանական տարուն, այն ժամանակ պարզ կլինի, թէ ինչքան դժուար կըլինէր նրանից առաջ եղած շրջանում դպրոցն այդ տիպի հասցնելը։ Այս հանգամանքը մի ցայտուն ապացոյց է այն ջանքերի, որ այդ դպրոցի վարչութիւնը ցոյց է տուել այդ դպրոցը մի կողմից կանոնաւոր դպրոցի տիպի նըմանեցնելու և միւս կողմից երեքդասեան դարձնելու և պահպանելու համար։ Իսկ թէ այդ շատ դժար է եղել, այդ երևում է պարզ կերպով նրանից, որ դպրոցն այդ տիպի մնացել է մինչև մեր ասած թուականը, հակառակ ինտելիգենտ ուժերի բազմապատկելուն։ Դրան արգելարիթ էր նաև, անկասկած դպրոցի նիւթական վիճակը։

Այստեղ նաև պէտք է աչքի առաջ ունենալ մի խիստ կարևոր հանգամանք։ – Այդ տարուայ հաշուեմատեանը ցոյց է տալիս, որ աշակերտական թոշակներ կամ ուսումնավարձ չէ եղել։ Դպրոցը հարկադրուած է եղել կրթութիւնը ձրի տալ, մի կողմից խալֆայական դըպրոցների հետ լաւ մրցելու, միւս կողմից էլ աշակերտներ գրաւելու համար։

Երբ խօսեցինք դպրոցի մասին այն մտքով, որ նա երեք դասարան է ունեցել, պէտք է այդ բառը բառացի չհասկանանք։ Իւրաքանչիւր դասարան չէր կազմում միապաղաղ մի ամբողջութիւն՝ ներկայ դասարանների պէս։ Նոքա իրենց ներքին կազմութեամբ նմանւում էին վիացեալ դասարանների, ուր աշակերտները

շարքերի են բաժանված եղել. այդ այդպէս է եղել նամանաւանդ իր գոյութեան սկզբնական շրջանում։

1863 թուականի այդ մատեանը մեզ ասում է, որ դպրոցական տնտեսական տարին հաշուելիս են եղել յունուարից յունուար։ 1862 թուից մնացել է 2177 ր. 92 կոպ. յիշածս 2177 ր. 92 կոպ խնայողութիւնը, որ 1862 թուից անցել է 1863 թուին, պէտք է երկար տարիների առնակաւն 15 տարիների իրար վրա բարդուած տարեկան մօտ 150 ր. խնայողութիւնների արդիւնք լինի։

ՎԱՐՉԱԿԱՆ ՁԵՒԸ.

Խիստ հետաքրքրական է վարչական այն ձևը, որով կառավարել է Ալէքսանդրապոլի վիճակային հոգևոր դպրոցը մեր ասած այդ շրջանում։

Դպրոցի կառավարութեան ձևի մասին մեր ունեցած տեղեկութիւնը պարտական ենք մենք 1863 թուականի նոյն հաշուամատեանին, որն և ենթադրել է տալիս, թէ այդ թուականից առաջ էլ, այսինքն նախընթաց տարիներում էլ, հին սովորութեան յատուկ, ժողովրդական ձևով էին կառավարում դպրոցը, Այդ, ժողովրդի ներկայացուցչութեան ձեռքով ազգային հիմնարկութեանց գործերը վարելու եղանակն էր։

1863 թուի մատեանից մենք իմանում ենք, որ 1862-63 ուսումնարանական տարին հոգևոր դպրոցը ղեկավարել է մի «վերատեսչութեամբ» դրա ձեռքն է եղել դպրոցի ամբողջ վարչու-

թիւնը. ներկայի մտքով՝ տեսչութիւնն ու հոգաբարձութիւնը. այսինքն դպրոցի մանկավարժական և տնտեսական գործի ղեկավարութիւնը։

Նրա ձեռքին է եղել ուսուցիչներ վարձելը դասերի սրան և նրան բաշխելը, դպրոցի եկամուտների գանձելն ու ծախսելն և այլն։

1862-63 և յաջորդ տարիներին մինչի ուսումնարանական 1865-66 թիւը դպրոցը գտնուած է եղել մի եռանձնեայ վերատեսչութեան ձեռքը։ Նոքա են մեր քաղաքում իր ժամանակի ամենաազդեցիկ անձնաւորութիւններից, այն է Յովսէփ քահանայ Կոստանեանց, պօղպօրուչիկ Սիրական Գորոյեանց և Մահտեսի Մկրտիչ Բաբայեանց. երկուսը Ղարսեցի իսկ երրորդը Կարնեցի (Սիրական աղան)։

Մի որևէ պաշտօնէութիւն պիտի ընտրի անշուշտ որոշ թիւ տարիների համար։ Դրժբախտաբար հնար չեղաւ պարզելու, թէ այդ եռանձնեայ վերատեսչութիւնը ե՞րբ է ընտրել, առհասարակ տարիների ի՞նչ ամբողջական շրջանի համար, ու արդեօք որև իշխանութիւն, այս դէպքում Երևանի թեմական իշխանութիւնը կամ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը պաշտօնապէս հաստատել ու ճանաչե՞լ են մեր դպրոցի ասածս այդ վերատեսչութիւն-հոգաբարձութիւնը։ Այստեղ ի նկատ ունենանք, որ յատկապէս այդ թուականներին, Մատթէոս առաջին կաթուղիկոսի օրով էջմիածնի կամ աւելի շուտ հոգևոր բարձր իշխանութեան կողմից ճանաչուեց ժողովրդական-ընտրական ըստկզբունքը և դպրոցներ կառավարող հոգաբարձական հաստատութիւնը։ Անկախ այն բանից

որ վաթսունական այդ թվերում այլ կերպ չէր կարող դպրոցական մի վերատեսչութիւն առանց այլևայլութեան, ինքնակոչ կերպով մի ազգային հիմնարկութեան գլուխ անցնել, նրան ղեկավարել, առնել, տալ, հաշիւները ստուգել և տարեվերջին վաւերացնել ամբողջ կոլլեգիայով, կայ նաև մի, արդէն ակնարկած, հանգամանք։ Կարնից, Ղարսից և հայկական այլ կենդրոններից գաղթած, Ալէքսանդրապոլը կազմող, ազգաբնակութիւնը սովոր էր, որ ազգային գործերը կառավարէր համայնքի մեծերի խորհուրդը։ Այդ խորհուրդ-համայնական ժողովն էլ մէկին նշանակում էր եկեղեցու աթոռակալ-երեսփոխան, միւսին դպրոցի ուսուցիչ, գաւառին յաջորդ և այլն։ Ալէքսանդրապոլցին դրան սովոր էր, այդ տեսել էր, դրանով էլ ղեկավարում էր։

Այսպէս. եթէ մեր այդ եռանձնեայ վերատեսչութիւնը կանոնաւոր ծխական ժողով չի էլ ընտրել, յամենայն դէպս նա իսկական ժողովրդական ներկայացուցչութիւն է ըստ հին սովորութեան, ըստ կիրառուող հին ձևի։

Մնում է հաստատման խնդիրը։ Ըստ էութեան դա մի առանձին նշանակութիւն չունի. էականն այն է, թէ ազգային մի հիմնարկութիւն, լինի սա դպրոց, թէ մի այլ բան, կառավարւում է ինչ ձևով. միահեծան իշխանութեամբ, միապետական սկզբունքով, թէ սահմանադրական-ժողովրդական սկզբունքով։ Միապետական թէ սահմանադրական կարգերում կարող է մի հիմնարկութեան գլուխ դրուած լինել մի անձն կամ մի կոլլեգեալ վարչութիւն։

Մեր հոգևոր դպրոցի վերատեսչութիւն կոչուած հիմնարկութիւնը ցոյց է տալիս, որ Ալէքսանդրապոլցին պատաւոր կերպով է լուծել ազգային մի հիմնարկութեան վարչութեան եղանակը։ Նա ցոյց է տալիս, որ վերատեսչութիւնը սահմանադրական է և կոլլեգիալ։

Գալով ընտրուած անձնաւորութիւններին, հարկաւոր ենք համարում վերն ասածներիս վրա աւելացնել, որ նոցանից իւրաքանչիւրը, բերուած ժամանակի նկատմամբ, նոցա ռամկօրէն ընորոշելով, կարելի է անուանել «ատամով» մարդիկ, ինքնուրոյն, կամքի տէր մինչի յամառութիւն և խելացի։ Գործի մէջ նոցանից և ոչ մէկը միւսին իր ետևից քաշ տուող չէր. նոքա կերթային իրար հետ հաւասար մի գծի վրա։

Այս բոլորից պարզ է, որ Ալէքսանդրապոլի հոգևոր վիճակային դպրոցի վարչութիւնը, որ կոչւել է վերատեսչութիւն և եռանձնեայ է եղել, եղել է իրապէս ժողովրդական մի ներկայացչութիւն աւել կամ պակաս չափով։

ԴՊՐՈՑԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ.

Մեր աղբիւրը մեր յիշած 1863 թ. Թւելի հաշուեմատեանն է նորից։

Մի թեթև հայեացք այդ գեղեցիկ վաւերագրի վրա, ու մենք կտեսնենք, թէ հոգևոր կոչուած այդ դպրոցի գոյութեան աղբիւրները որտեղից են բղխում։

Այստեղ հարկաւոր է շեշտել մի խիստ կարևոր հանգամանք, որ միաժամանակ բնորոշում է և հոգևոր դպրոցի տնտեսապէս անկախութիւնը որևէ եկեղեցուց։

Ինչպէս մենք տեսանք, հոգևոր դպրոցի վերատեսչութիւնը տնօրէնն է եղել և այդ հիմնարկութեան տնտեսական վիճակի։ Նրա կազմի մէջ չկայ Աստուածածին աւագ եկեղեցու երեսփոխանը, որ հնումն առհասարակ աթոռակալ է կոչւել, որպիսի անուն նա պահպանել է ներկայումս դեռևս գիւղերում։

Հոգևոր դպրոցն ունեցել է իր սեփական եկամուտներն ու իր սեփական դրամագլուխը։ Մեր այդ մատեանը ցոյց է տալիս, որ նա 1863—65 թուերի ընթացքում, ինչպէս և առաջ, իր պահպանութեան համար ս. Աստուածածին աւագ եկեղեցուց չի առացել որևէ նպաստ, նոցա եկամուտներն իրար խառը չեն եղել, մի վարչութեան—հոգաբարձութեան տակ չի գտնուել։ Եկեղեցին ունեցել է իր միջոցներն ու հաշիւները ու իր երեսփոխանը. դպրոցն ունեցել է իր եկամուտներն ու դրամագլուխը ու այդ բոլորը կառավարող-տնօրինող իր վերատեսչութիւնը։

Այստեղ կարևոր եմ համարում առաջ բերել 1862 թուի եկամուտների յաւելեալի փոխանցումը 1863 թուի մատեանի մէջ։ Դա ինքնին արդէն ցայտուն կերպով բնորոշում է դպրոցի տնտեսապէս անկախութիւնը մի այլ հիմնարկութիւնից։ — Համար ըստ կարգի 1. փետրուարի 1 գրեցան ի մուտս դրամք մնացորդք յանցեալ 1862 ամէ ցներկայս ըստ հաշուոյ ժա-

պաւինեայ մատեանի նոյն ամի յամենատեսակ արդեանց Հոգևոր ուսումնարանի Հայոց Ալէքսանդրապոլու ընդամենն երկու հազար մի հարիւր եօթանասուն եօթն ռուբլի իննսուներ կու կոպէկ, յետոյ յիսուն և հինգ ռուբլի քառասուն երկու կոպէկն է պատրաստական դրամ. իսկ մնացեալքն մուրհակագրօք ի վերայ զանազան անձանց 2177 ռ. 92 կոպէկ»։

Սա ցոյց է տալիս, որ այն եկամուտները, որոնցով կառավարել է Հոգևոր այդ դպրոցը, կոչւել են այդ հաշուեմատեանում «արդիւնք հոգևոր ուսումնարանի հայոց Ալէքսանդրապոլու»։

Բացորոշ այս փաստը մատնանշում է նաև մի այլ հանգամանք։ Հոգևոր դպրոցն անկախ լինելով ըստ տնտեսականի որևէ եկեղեցուց, թէկուզ մի հատիկ, նա չէ եղել ու չէ դառել ծխական դպրոց։ Յետագայ փաստերը ցոյց կուտան, որ նրա գլխաւոր և հիմնական եկամուտի աղբիւրը մասնաւոր մի եկեղեցու կամ ծուխի-համայնքի պատկանող մի աղբիւր չէ, այլ ընդհանրութեանը, Ալէքսանդրապոլը շրջապատող վայրերի մի սրբութեան եկամուտները։

Ալէքսանդրապոլի հոգևոր դպրոցը խօսքի նեղ մտքով չլինելով ծխական դպրոց, մնում էր իբր կրթական հիմնարկութիւն ամբողջ հայ համայնքի։ Նա համայնական դպրոց էր նամանաւանդ իր գոյութեան յաջորդ շրջանում ոչ միայն քաղաքի այլև գաւառի հայ մանուկների համար, ոչ միայն հայաղաւան այլ նաև օտարադաւան հայերի, համաքաղաքացիների համար։ Այդ մտքով և արդարանում է նրա

«Վիճակային դպրոց» անունը։

Դառնանք նորից եկամտի աղբիւրների խնդրին։

Դպրոցի ընթացիկ ծախսերը ծածկող եկամուտներն են 1. դպրոցի դրամագլխի տոկոսներ, և 2. Աստուածածնայ խորանի բոլոր արդիւնքները։

1 Դրամագլուխ. ինչպէս տեսանք, 1862 թուին նա հասնում էր 2177 ր. 92 կոպէկի, որն և անցել է 1863 թուի հաշուեմատեանի մէջ առաջին յօդուածով։

Այդ ժամանակներում հոգևոր դպրոցի վարչութիւնն այլ կերպ չէ շահեցրած և չէր էլ կարող շահեցնել դպրոցապատկան գումարները, քան մասնաւոր մարդոց տոկոսով տալով։ Եւ իրօք էլ այդպէս է եղել, ինչ որ մենք տեսանք 1863 թուի հաշուեմատեանի առաջին յօդուածի ամբողջական արտագրութիւնից։

Հակառակ այն բանի, որ ժամանակի վաշխառուական %%-ը 20-ից էլ անց են եղել, դպրոցի գումարները տուել են ցած %-ով. նա չի բարձրացել 12 առ հարիւրն և ցած չի եղել քան 10%-ը։ Ինչպէս և ուզենանք բացատրել այս հանգամանքը, այնուամենայնիւ չի կարելի աչքաթող անել, որ դրամ %-ով տուողը այդ դէպքում մի մասնաւոր վաշխառու չէ եղել, այլ բարոյական բոլորովին այլ հիմունքներով ղեկավարուող մի կրթական հիմնարկութիւն։ Որն և անշուշտ պատճառներից գլխաւորն է եղել դպրոցական դրամագլխի շահեցման գործում։

Դպրոցի դրամագլխի գոյութիւնն ինքնին ապացոյց է, որ հոգևոր դպրոցի վարչութիւնն

աշխատել է այդ ուղղութեամբ։ Նա երբէք մի կողմից հետամուտ է եղել դպրոցը նոր տիպի վերածելուն, ու երբէք-դասարանեան այդ դպրոցի բիւդճէն հասել է այն ժամանակւայ համար պատկառելի մի գումարի, այն է աւելի քան ութն հարիւր ռուբլու, միւս կողմից էլ խնայողութիւններ է արել։ Այդ խնայողութիւններն ունեցել են, թւի թէ, մի կենտրոնական նպատակ,—ապահովել դպրոցը մի հիմնական գրամագլխով։ Դրա հետ միասին դպրոցի հոգաբարձութիւնը ծախսեր է արել դպրոցի շէնքին, նամանաւանդ ձմեռւայ համար, պատշաճաւոր յարմարութիւններ տալու։ Ասելս այն է, որ հոգաբարձութիւնը խնայողութիւններն արել և անում էր, առանց որ աչքաթող անէր դպրոցի առօրեայ կարիքները։

2 Աստուածածնայ պատկերի արդիւնքները։

Նոյն հաշուեմատեանը ցոյց է տալիս, որ եկեղեցու և խորանի եկամուտներն իրարից բաժանուած են եղել, թէև երկուսն էլ իրար կից նոյն եկեղեցին, նոյն շէնքն է եղել։ Աստուածածնայ պատկերի խորանը հոգևոր դպրոցին է պատկանել իր բոլոր եկամուտներով, քանի որ եկեղեցուց զատ է եղել նրա մոմավաճառութիւնը, նրա գանձանակատուփը, նրա ուխտաւորներից եկած ամեն տեսակ արդիւնքներն ու նուիրատուութիւնները, մատաղները, Բացի դրանից նա ունեցել է նաև պատկերը շրջեցնելու առանձին եկամուտ, որ դարձեալ խորանի ընդհանուր գանձարկղի մէջ է մտել միշտ։ Ինչպէս յետոյ մենք կտեսնենք, Աստուածածին եկեղեցու եկամուտները գործ են դրել շէնքե-

ըի վրա, որից յետոյ օգտուել է նաև դպրոցը։ Թօսքս հոգևոր դպրոցին կից եղած Աստուածածնայ հին կրպակների մասին է։

Ասածներից պարզ է, որ դպրոցի մշտական ու միակ ապահով եկամտի աղբիւրն է եղել Աստուածածնայ խորանն իր ամեն տեսակ եկամուտներով։ Դոքա են ա. Մոմավաճառութիւնը, բ. Գանձանակադրամները, գ. Մատաղներն ու այլ նուիրատուութիւնները՝ դրամով, թանկագին զարդարանքներով, թաշկինակներով և այլն և դ. Պատկերը շրջեցնելու արդիւնքը։ Դպրոցի եկամուտների, իսկապէս ասած, խորանի եկամուտների մէջ մի առանձին տեղ է բռնում նաև հետևեալ արդիւնքը։ Հին սովորութիւն է հայկական բոլոր գաւառների համար, որ խոստում են անում այս ու այն եկեղեցուն, ուխտատեղուն՝ ցորենի, անասնեղէնի և այլն, իւրաքանչիւրն իր բերքի ժամանակ վճարելու պայմանով. Օրինակ կալի ժամանակ՝ հացահատիկներ, աշնանը՝ գառներ, հորթեր և այլն։ Մեր առաջ բերած մատեանից տեսնում ենք, որ խորանի այդ տեսակ եկամուտները կազմում են բաւականին մի խոշոր գումար՝ ի նկատ առած խորանի սովորական միւս եկամուտները։

Աւելի երկար կանգ առնել դպրոցի եկամուտների վրա, հաշւում եմ աւելորդ։

Առաջ բերածներս արդէն բաւարար կերպով բնորոշեցին հոգևոր դպրոցի եկամուտների ընդհանուր պատկերը։ Դրամագլխի %-ներ և Աստուածածնայ պատկերի հասոյթներ. — ահա բոլորը. ու այդ բոլորի հետ միասին, ինչպէս

արդէն մի անգամ ասել է, ձրի ուսումն։

Նախքան թէ, այս պրակը կվերջացնէի, կարևոր եմ համարում հետևեալ երկու կէտը ուշադրութեան առնել։ ա) Աստուածածնայ եկամուտները չէին ամբողջովին հոգևոր դպրոցի վրա գործադրւում. նրա մօտ մի երրորդ մասը տալիս էր դպրոցի վարչութիւնը Հառիճեան ընկերութեանը նոյն անուն վանքի դրպրոցի պահպանութեան համար։ Դրանով, բնական է, զրկւում էր հոգևոր դպրոցն իր եկամտի մի զգալի մասից, սակայն, ամբողջ գաւառին պատկանող սրբութեան եկամուտը, արդար կլինէր, որ գործադրւէր հնարաւորութեան սահմաններում նոյն գաւառի հանրօգուտ հիմնարկութիւնների վրա։ Այդպիսի մի հանրօգուտ հիմնարկութիւն էր նաև Հառիճի վանքի դպրոցը, ուր սովորել են անցեալում մեր գաւառի գիւղական քահանաների մեծագոյն մասը, ու կարելի է՛ ասել նաև լաւագոյն մասը։ 1863 թւին վճարւած այդ մասն է եղել 282 ր. 56 կ. 1864 թւին 357 ր. 39 կոպ. և այլն։

բ) 1863 թւի զարմանալի այդ հաշուեմատեանի մէջ արձանագրւած է նոյն տարեվերջի դեկտեմբերի 30-ին № 18-րդ յօդւածի տակ հետևեալը — «Գրեցան ի մուտս դրամք հանեալք ի ռոճկաց հոգևոր ուսումնարանի տեղւոյս ի միոյ ռուբլոյ մի կոպէկ, բացի ռոճկէ հանդուցեալ Յակովբ քահանայի Մխիթարեանց, ընդամենն հինգ ռուբլի ինսնսուն ութ կոպէկ. (5 ր. 98 կ.)»։

Մեր որոնումները զուր անցան, թէ այդ ինչ %% էին, որ դպրոցի վարչութիւնը դրպրոցի ուսուցչական կազմի ռոճիկներից ետ էր

գնում, այն էլ տարեկան ամբողջ ռոճկից մի տոկոս։ Դա կենսաթոշակի համար արված խնայողութիւններ էին ուսուցչաց կողմից, թէ նրանց կողմից մի հարկ յօգուտ դպրոցի գանձարանի։ Այս վերջին գէպքում խիստ տարօրինակ է %-ի կիրառումն այդ գործում ու անհասկանալի, մինչդեռ առաջին դէպքում շատ պարզ ու հասկանալի։

Յետագայ տարիների հաշուեմատեանները 1864—1865 թ. նոյնպիսի գանձումներ չեն ցոյց տալիս, որն աւելի ևս դժուարացնում է որոշ ենթադրութիւններ անել։ Գործը մութն է մնում նաև այն պատճառով, որ այդ փաստի նկատմամբ մենք գործ ունենք միայն մի հաշուեմատեանի հետ, որն աւելի ցուցումներ չի կարող անել, քան նա արել է։ Իսկ նրա արածն է արձանագրութիւն մեր ակնարկած փաստի։ Այդ շրջանի հոգաբարձական օրագրական մատեաններ կամ պաշտօնական գրագրութիւններ չեն հասել մեզ, նոքա անհետ կորել են նախ հոգաբարձութեան գիւանի վատ պահպանութեամբ, երկրորդ դպրոցական գործերի Հոգևոր Կառավարութեան ձեռքով, վանգալական ձևով ոչնչացնելով, որոնք տրված են եղել այդ հիմնարկութեանը՝ պահելու համար։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Նոյն մատեանից քաղելով, տալիս ենք այն առարկաների ցուցակը, որ իրօք դասաւանդել են Ալէքսանդրապոլի Հոգևոր դպրոցում.

1. Քրիստոնէական վարդապետութիւն.
2. Երաժշտութիւն.
3. Քերականութիւն.
4. Ազգային պատմութիւն.
5. Քերականութիւն ռուսաց.
6. Թւաբանութիւն ռուսաց.
7. Ընդհանուր վայելչագրութիւն հայոց.
8. Ընթերցանութիւն ռուսաց.
9. Վայելչագրութիւն ռուսաց.
10, Ընթերցանութիւն հայոց.
11. Ճարտասանութիւն.

Ուսման ծրագրով, ինչպէս դասաւանդման առարկաների այս ցուցակը պարզում է, չի կարող պարծենալ հոգևոր դպրոցի պատմական այդ շրջանը։ Միայն ճարտասանութեան ներկայութիւնն ինքնին բաւական է, որ դպրոցի այդ տիպին խալֆայական անունը տանք։

Դասերի քանակն յայտնի չէ, բայց այդ բոլոր առարկաներն աւանդւում են երեք դասարանում։ Տեղեկութիւն չունենք նաև դասագրքերի մասին։ Այդ բոլորի դիմաց մեզ յայտնի է, թէ այդ առարկաների աւանդումը բաժանուած է եօթն ուսուցչի մէջ այսպէս.—

1. Յակովբ քահանայ Մխիթարեան, ուսուցիչ Քրիստոնէական վարդապետութեան և Ազգային պատմութեան։
2. Մկրտիչ Արաբաջեան, ուսուցիչ քերականութեան և ճարտասանութեան։
3. Յովհաննէս Լալայեան, ուսուցիչ ռուսաց լեզուի, քերականութեան և թւաբանութեան ռուսաց լեզուով։
4. Կարապետ քահանայ Տէր-Առաքելեան,

ուսուցիչ երաժշտութեան։

5. Կարապետ Զանիբէկեան, ուսուցիչ քերականութեան (I մասի) և հայոց վայելչագրութեան։

6. Մկրտիչ Տէր-Մարտիրոսեան, ուսուցիչ հասարակ ընթերցանութեան ռուսաց և վայելչագրութեան։

7. Բարդուղիմէոս Տէր-Թադէոսեան, ուսուցիչ հասարակ ընթերցանութեան հայոց։

Ուսուցիչների անունների մէջ առանձնապէս կանգ կառնենք երկու անձնաւորութեան վրա, որոնց մասին մեր ասելիքը շատ չի կարող լինել այստեղ։ Նոցանից մէկը մեր սիրելի Մկրտիչ խալֆէն (Մկրտիչ Արաբաջեանն) է, որին նրան աշակերտածներս երբէք չենք մոռանալ։ Դեռ կասես թէ երեկ էր, որ լսում էի նրա ձայնը. «Ծօ կտերը բերե՞ր ես». իսկ այդ «կտերը» հասկանալի էր ամենքիս. դա նշանակում էր, ուսման վարձը բերե՞լ ենք, թէ ոչ։ Եթէ նա բարձր փայլուն ընդունակութիւններով չէր օժտուած, բայց նա պարգևատրուած էր բնութիւնից մի մեղմ, քնքոյշ բնաւորութեամբ, ու իրեն մեզ ամենքիս սիրելի դարձնող վարուեցողութեան ձևով։

Երկրորդ անձնաւորութիւնը 1863 թւին, այսինքն 1862—63 ուսումնարանական տարուայ ամառը, վախճանած Յակովբ քահանայ Մխիթարեանն է։ Չեմ սխալուիլ ասած լինել, որ նա իր ժամանակի ամենալուսամիտ անձնաւորութիւններից մէկն է եղել մեր քաղաքում։ Իր ժամանակի կրթութեանը տիրապետող, տաղանդաւոր, բանաստեղծական ընդու-

նակութիւններով օժտուած, ահա Տէր-Յակովբը։ Այս բոպէիս էլ դեռ ինձ մօտ է նրա մի քնարերգական անտիպ գրուածքը, որ արժէքաւոր գրական մի աշխատութիւն է։

Ուսուցչական կազմի միւս անդամները որքան և յարգելի անձնաւորութիւններ, այնուամենայնիւ առանձին կերպով աչքի չեն ընկել հասարակութեան մէջ, որ հնարաւոր լինէր նրանց մասին առանձնապէս խօսել։

1863 թիւ.

Դպրոցը կառավարւում է եռանձնեայ վերատեսչութեամբ. դասարանների թիւը 3. դասաւանդած առարկաների թիւը 11, ուսուցիչների թիւը 7. դասագիրն յայտնի չէ. առարկաները վարձատրւում են տարբեր։ Երաժշտութեան ուսուցիչն ստանում է տարեկան 84 ռուբլի, Քրիստոնէական վարդապետութեան և ազգային պատմութեան ուսուցիչը տարին 120 ռուբլի. Քերականութիւն և ճարտասանութեան ուսուցիչը 180 ռուբլի, Քերականութեան և թւաբանութեան (ռուս լեզուով) ուսուցիչը տարին 120 ր. Ռուսերէն ընթերցանութեան և վայելչագրութեան ուսուցիչը տարին 84 ր. վայելչագրութեան և քերականութեան առաջին մասի ուսուցիչը տարին 84 ր, և հայերէն հասարակ ընթերցանութեան ուսուցիչը տարին 60 ռուբլի։

Մուտք դրամագլխով միասին 3199 ր. 51 կ. ծախք 1055 ր, 81 կոպ. փոխանցելի 1864 թւի

համար 2143 ր. 70 կոպէկ. 1055 ր. 81 կոպ. ծախքի մէջ մտնում է նաև Հառիճեան ընկերութեան վճարած գումարը՝ 282 ր, 56 կոպ.

1864 թիւ.

Դպրոցի վարչութիւնը գտնւում է նոյն եռանձնեայ վերատեսչութեան ձեռքը. ուսուցչական կազմը մնում է անփոփոխ. ուսուցիչներից մէկի՝ Յակովբ քահանայ Մխիթարեանի մահուան պատճառով չի աւանդւում Քրիստոնէական վարդապետութիւն և Ազգային պատմութիւն։ Դասարանների թիւը մնում է երեք, ուսման ծրագիրը նոյնը։

Դպրոցի մուտքն է 3314 ր. 48 կոպ. ծախքը՝ 941 ր. 23 կոպ. առձեռն մնում է ց՝1-ն յունուարի 1865 թ. 2373 ր. 25 կոպ. դպրոցի դրամագլխի հետ միասին։ Այդ թվին վճարւած է Հառիճեան ընկերութեանը 357 ր. 38 կոպ.

1865 թիւ.

Դպրոցի վարչութիւնը նոյնն է։ Դպրոցն առաջին քառամեակում ունի միայն երեք ուսուցիչ, այն է Կ. քահ. Տէր-Առաքելեան, Մ. Արաբաջեան և Յ. Լալայեան։ Չեն աւանդւել հեռացած ուսուցիչների առարկաները։ Մայիս ամսից սկսած ուսուցիչ է Սենեքերիմ Տէր-Մատթէոսեանը, որ աւանդում է հասարակ ընթերցանութիւն և վայելչագրութիւն. ռոճիկն է

5 ռուբլի ամսական։ Դպրոցն սկսում է ընկնել, հաշիւները լրիւ պահւած չեն. մուտքը տարւած է մինչի օգոստոսի 31-ը, իսկ ծախքը մինչի հոկտեմբերի 3-ը. այս ամսին ստացել են միայն 2 ուսուցիչ ռոճիկ։

Մուտքն է 4273 ռուբլի ծախքը 534 ր. 38 կոպ. առձեռն մնացել է 3738 ր. 62 կ. Հառիճեան ընկերութեանը վճարւած է 135 ր. 23 կ.

Պաշտօնական այլ թղթերի բացակայութեան պատճառով չի բացատրւում թէ ինչու է դպրոցն ետ գնացել, ինչու հեռացած ուսուցիչների տեղ չեն հրաւիրւել նորերը։ Անցեալ շրջանների սովորութեան համաձայն վերատեսչութիւնը չի կատարել այս տարի որևէ ստուգութիւն։ Դպրոցի այդ տարտամ և խառնակ վիճակը չպէտք է արդեօք դպրոցի ղեկավարների անհամաձայնութեան մէջ որոնել։ Գրաւոր փաստեր չկան, բայց դա հաւանական պատճառներից մէկը կարելի է հաշուել, քանի որ դպրոցի պահպանութեան համար անհրաժեշտ միջոցը—նիւթականը—կար։ Սա պատմական իրողութիւն է, որ 60-ական և 70-ական թուականներին, յատկապէս, կային Ալեքսանդրապոլում երկու իրար հակառակ կուսակցութիւններ և Բաբայեաններն ու Կոստանեանները միևնոյն կուսակցութեանը չէին պատկանում։ Գնահատումներ այդ կուսակցութիւնների վերաբերմամբ չենք կարող այստեղ անել, քանի որ դա մեր դպրոցին չի վերաբերում. բացի դրանից, երկու կողմերն էլ աշխատել են իրենց կարողացածի և հասկացածի ձևով օգտակար լինել վիճակային հոգևոր դպրոցին։

1866—67

Այս թվականից մենք հանդիպում ենք հոգաբարձական այլ կազմի, որ երևի ընտրությամբ է պաշտոնավարում։ Այդ կազմը գործում է մինչի 1872 թվի մարտ ամիսը, ասել է մոտ վեց տարի։

Նոր հոգաբարձուք են Յովսէփ աւագ քահանայ Կոստանեան, պօղպօրուչիկ Սիրական Գորոյեան, Գուբերնսկիյ սեկրետար Արշակ Վարդապատրիկեան և կապիտան Թադէոս Տիգրանեան որ և հոգաբարձութեան գանձապահն է։ Այս շրջանում, ինչպէս տեսնում էք, այն ժամանակուայ տեղական մի կուսակցութեան ընտրեալներն են հոգաբարձուք։ Այս թվականներում և մինչև 1868 թվի կէսը ուսուցիչները մնում են համարեա նոյնը. աւելանում է վերջերքը Աղաբէկ Արշակունի։

Ռոճիկն է ամսական 5—15 ռուբլի, ըստ նախկինի, նայելով ով և ինչ առարկայ է աւանդում։

Ուսումնական տարին այս ամբողջ շրջանի համար եղել է յունուարից յունուար և այն, առանց արձակուրդի, տարին բոլոր ուսումը շարունակելով։ Ուսումն եղել է միշտ ձրի, դասարանների թիւը մնում է միշտ նոյնը։ Չնայելով յարաճուն ծախքերին, աւելացել են նաև եկամուտները։ Ինչպէս յետոյ կտեսնենք 1867 թվից սկսած մինչի 1872 թիւը, 5 տարուայ ընթացքում դպրոցը ծախս է ունենում 10118 ռ. 21 կ. միջին հաշուով աւել քան 2000 ռուբլի տարեկան։

1867 թվին այդ հոգաբարձութիւնը տեղիս Հոգևոր Կառավարութեան միջոցով միջնորդութիւն է յարուցանում, որ իրեն թոյլ տրվի կրպակներ և վերան դպրոցական շէնք շինել այն տեղի վրա, որ Ներսէս V կաթուղիկոսը հայրապետական կոնդակով թողել էր Ալէքսանդրապոլի հայ հասարակութեանը։

Սինոդը հոգաբարձութեան այդ միջնորդութեանը չի պատասխանում։ Այդպիսով հոգաբարձութեան այդ լաւ ցանկութիւնը մնում է անկատար։ Այդ տեղի վրա յետոյ շինեցին ս. Փրկիչ եկեղեցին, կրպակներն ու ներկայ դպրոցական շէնքը (1880 թ.)

1867—1868 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ.

Հոգաբարձական կազմը՝ վերևն յիշածս է, ինչպէս և ուսուցչական խումբը

Դասարանների թիւն է 4 աշակերտների թիւը մնացել է ինչպէս և նախընթաց ամբողջ շրջանի համար, անյայտ։ Բայց ենթադրելով, որ իւրաքանչիւր բաժնում 40 - 50 հոգի հազիւ լինէին, հապա այդ հաշուով նոցա թիւը կլինէր 150 - 200.

Հետաքրքրական են նաև դասագրքերը. ահա նոքա, որ քաղում ենք դպրոցի աշակերտներին ձրիապէս բաժանուող դասագրքերի ցուցակից 1868 թվից։

1. Պարգև մանկանց 2. Другъ дѣтей, 3 Քրիստոնէական մանր ուսմունք, 4. Ռուսերէն այբբենարան, 5. Ռուսերէն գեղագրութեան օ-

ըինակներ, 6. Քերականութիւն Պալասանեանի 7. Հայոց պատմութիւն Գ. Աբովեանի։

Եկամուտների և ծախսերի մասին նոր ասելիք չկայ, դոցա համապատասխան մատեանները չկան։ Այստեղ հնարաւոր ենք համարում ասել, որ դպրոցի դրամագլուխը տարեց տարի աճել է, ու այդ տարումն էլ, ինչպէս և հնումն, դպրոցը փող է խնայում։ Դպրոցի գումարների շահագործումը գնում է նոյն եղանակով, այսինքն մանաւոր մարդկանց ձեռքով 12%-ով։ Այդ մասին խօսք կլինի 1872 թւի մէջ։

Շէնքը նոյնն է. հին խարխուլ. նորի թոյլտուութիւն դեռ չկայ։

Սրանով փակւում է այս շրջանը։

II.

ԾԱՂԿՄԱՆ ՇՐՋԱՆ

(1868–85)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Դպրոցի գոյութեան այս շրջանն իրաւամբ կարող է կոչւել ծաղկման շրջան, քանի որ 1868—69 ուսումնարանական տարուանից ըսկսած դպրոցը մտնում է ներկայ տիպի դպրոցների շարքը։ Այդ տարուանից սկսւում է այնպիսի առարկաների դասաւանդութիւն, ինչպէս են Սրբազան պատմութիւն, աշխարհագրութիւն և այլն, որ հին շրջանին մնացել են միշտ խորթ։ Բայց որ գլխաւորն է, փոխւում է դասարանական հին սիստեմը, աշակերտները բաժանւում են ըստ գիտութեան և հասակի ու ամեն դասարան ստանում է մի ամբողջական պատկեր՝ ուսուցման ընդհանուր մի ծրագրով, որ քանի գնում ճոխանում է նոր առարկաներով և ծաւալով։ Դուրս է ձգւում հին ժամանակւայ գիտութեան գլուխ գործոցը՝ ճարտասանութիւնը։

Այդ շրջանի հէնց սկզբում դպրոցը բաժան-

ւած է եղել երկու մասի, նախակրթարանի կամ պատրաստական բաժանմունքի և դասարանի։ Նախկին երեք դասարանը բաժանւում է երկու պատրաստականի և առաջին դասարանի։ 1871—72 ուսումնարանական տարում մենք հանդիպում ենք դպրոցում 2 պատրաստական բաժանմունքի և 3 հիմնական դասարանի։

Այս ամբողջ շրջանի դպրոցի ծաղկման պատճառները պիտի որոնենք ոչ միայն ընդհանուր մտաւոր շարժումի մէջ ռուսաստանում և մեզ մօտ, այլ նաև այն հանգամանքի մէջ, որ ժամանակի լաւագոյն ուժերից հրաւիրւում են հոգևոր դպրոցի տեսուչ և ուսուցիչ։ Այս քիչ է, որպէսզի այդ ուժերը գնահատւին, պէտք էր որ ժողովուրդն ինքն էլ հետաքրքրւէր դպրոցական գործով, ու դպրոցի դեկավարութեան համար առաջ քաշէր մարդիկ, որոնք իր ժամանակի էն առաջադէմ տարրերն էին կազմում։

Այսպէս, 1872 թւից սկսած հոգաբարձուի պաշտօնում տէսնում ենք համալսարանաւարտ մարդիկ։ Այդպիսիների մէջ առաջինն է եղել բժշկապետ Աւետիք Բաբայեանը (1872 թւին) և նոյն կազմի մէջ անձնափոխանորդ՝ բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանը։ Մանկավարժական կազմի մէջ եղել են սկզբներում Ս. Բէկնազարեան, Ղազարոս Աղայեան, բժ. Գ. Յովհաննիսեան, Հայկ Մատակեան և այլն, որոնք, թէ համաքաղաքացի և թէ օտարներ եղել են ժամանակի լաւագոյն ուժերից, և որոնց շնորհիւ դպրոցը նոր—այս շրջանին յատուկ կերպարանք է ստացել ու լաւ անուն հանել։

1868 թւից սկսած վերանում է նախկին եռանձնեայ վերատեսչութիւնը, նա կոչւում է հոգաբարձութիւն, կազմւած չորս հոգուց։ Այդ և յետագայ բոլոր ժամանակի ընթացքում, մինչև որ Մակարի տւած կազմակերպութեամբ մեր դպրոցները կդառնային ծխական դպրոցներ, հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնն ընտրւում է Ալէքսանդրապօլի հայ համայնքի ձեռքով։ Նոյն էր, ինչպէս տեսանք, նաև նախընթաց շրջանում։ Հոգաբարձական կազմն ընտրելու ժողովը չէր հրաւիրում եկեղեցին, այլ քաղաքի դեպուտատական վարչութիւնը։ Այդ շրջանից սկսած, պահանջ է դառնում, որ ժողովրդից սկսած հոգաբարձական կազմը հաստատւի հոգևոր բարձր իշխանութիւնից։ Այդ ժամանակից է սկսւում նաև կրկնակի հաշւետւութիւնը. մէկը հասարակական՝ իրենց ընտրող ժողովին և միւսը հոգևոր իշխանութեանը։ Այդ թւից սկսած ամենայն տարի ուղարկւում են դպրոցի տարեկան ել և մտից մատեանները տեղական հոգևոր կառավարութեան ձեռքով թեմական տեսանին։

Դպրոցի եկամուտները մնում են նոյնը, մի փոփոխութիւն սակայն, աչքի է ընկնում։

Մինչ այդ, Աստուածածնայ պատկերի խորանի ամբողջ եկամուտն ու նրա վրա հսկողութիւնը գտնւում էր հոգևոր դպրոցի վարչութեան ձեռքը. նա գանձւում էր նախ դպրոցի դրամարկղը և ապա ամբողջ եկամտի մի մասը տրւում էր Հառիճեան ընկերութեանը։ Այդ կարգը փոխւում է 1868 թւից։ Հոգևոր իշխանութեան միջամտութեամբ Աստուածածնայ

խորանի հսկողութիւնը վերցնում են հոգաբարձութեան ձեռքից և յանձնում երկու քահանայի։ Դոցանից մէկն է Յովսէփ աւ. ք. Կոստանեանը, որ միաժամանակ և Հառիճեան ընկերութեան անդամ էր, և միւսը Մարտիրոս ք. Տէր-Կարապետեան։

Սա անկասկած, մի սարքւած անվստահութիւն էր դէպի հասարակական հսկողութիւնն ու նրա ընտրած հոգաբարձութիւնը։ Արդէն պիտի ասենք, որ Հառիճեան ընկերութեան առթիւ այնուհետև բազմանում են հասարակութեան մէջ մտքերի և հասարակական գործերը կառավարելու եղանակի իրաւ բաղխելը։ Դա լինում է մի առիթ, որ մեղանում դպրոցական գործի և նրա ղեկավարելու շուրջը կազմւեն իրար հակամարտ երկու ուժեր, հասարակական երկու հոսանքներ։ Այդ հոսանքները կորիզն էին ապագայ երկու – պահպանողական և ազատական կուսակցութիւնների։

Սկսած այս տարւանից շարունակաբար նաև յետագայ շրջաններում, պահպանողական կուսակցութիւնը և Հառիճեան ընկերութիւնը յենւել է միշտ հոգևոր բարձր իշխանութիւնից ձեռք բերած հրամանների վրա. իսկ ժողովրդական սկզբունքներով ղեկավարւող ու գործունէութեան իր իրաւունքը ժողովրդական ընտրութեամբ ստանձնած հոգաբարձութիւնները յենւում էին նոյն ժողովրդի, իրենց ընտրող հասարակութեան իրաւունքի վրա։ Իսկ այդ իրաւունքն էր ղեկավարել գործերը համայնքի ընտրութեամբ, հաշիւ տալ և իր գործունէութեան համար պատասխանատու լինել ամենից

առաջ իրեն ընտրող հասարակութեանը։

Ինչ որէ, փաստն այն է, որ 1868 թւից սկսած Աստւածածնայ խորանի եկամուտներն յիշածս երկու քահանայք նախապէս ներկայացնում էին Հոգևոր Կառավարութեանը, ու յետոյ բաժանւում երեք մասի, երկուսը յանձնւում էր հոգևոր դպրոցի կառավարութեանը իսկ մնացած մի մասը Հառիճեան ընկերութեանը։

Նշանակալից է այն, որ հոգևոր իշխանութեան զօրեղանալն ինչպես ժողովրդական սկզբունքի մեղանում սկսւում է Գէորգ կաթուղիկոսի օրով։ Պատմութիւնից մեզ յայտնի է, որ նա Պոլսում ազգային սահմանադրութեան գլուխ գալու շրջանում, հակասահմանադրական է եղել։ Հոգով պահպանողական, նա պէտք է և այստեղի գործերում նոյն ոգով արտայայտւէր։ Այդ պարզ կերպով երևան է գալիս Աստւածածնայ խորանի եկամուտների նկատմամբ արւած կարգադրութեամբ։ Այդ եկամուտներն եկեղեցական եկամուտներ են, իսկ եկեղեցին կառավարւում է ժողովրդի ձեռքով, ժողովուրդն էլ իր ընտրած հոգաբարձութեան միջոցով պիտի դանձէր այդ եկամուտներն ու ծախսէր, ինչպէս այդ նոյն ժողովուրդը կարգադրել էր, հոգևոր դպրոցի վրա։

Այդ եկամուտների նկատմամբ արւած վերջին կարգադրութիւնը, որի մասի վերը խօսեցինք, յայտնի կերպով կրկնակի միջամտութիւն էր հոգևոր իշխանութեան կողմից ի վնաս ժողովրդական իրաւունքների։ Յետագայ բոլոր ժամանակներում մեր հոգևոր վարչութիւնը կարգադրել է Աստւածածնի խորանի եկամուտ-

ների բաշխումն ըստ իր հայեցողութեան։ Իրաւունքի այդպիսի կիրառմամբ հոգևոր դպրոցն այսօր զրկուած է եկամտի այս աղբիւրից։ Ամբողջ գաւառին պատկանող և ամբողջ գաւառից իր հասոյթներն ստացող մի սրբութեան եկամուտներն իրաւամբ կարող էին ամբողջ վիճակին պատկանող մի դպրոցի վերապահուել։

Դպրոցի գոյութեան առաջին շրջանում դպրոցում տիրապետել է գրաբարը։ Հոգաբարձութեան գործերն ու թղթերը գրաբառ են գրւել։

Դպրոցի ծաղկման-երկրորդ-շրջանում իրար են բաղխւում հին ու նոր լեզուները։ Հոգաբարձութիւնը մնում է գրաբարեան, մանկավարժական ժողովն աշխարհաբարեան, բայց ոչ հէնց սկզբից, այլ 1872—73 ուսում. տարեանից վերջնականապէս։ Հոգաբարձութիւնն իր բոլոր գրագրութիւնների մէջ մնում է գրաբարեան մինչի 1876 թիւը. այնուհետև գործերն ու այլ թղթեր գրւում են աշխարհիկ նոր լեզուով, այդ լեզուով է գրում նոյն իսկ Ս. վ. Պարզեանը։ Գրաբառ են գրւում միայն հոգևոր իշխանութեան հետ եղած թղթակցութիւնները։

1868 - 69 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ.

Հոգաբարձական կազմը նոյնն է, դպրոցի նիւթական միջոցները շարունակում են մնալ հինը։ Այս թւի տւած տեղեկութիւնները շատ հարուստ են դպրոցական ուսման ծրագրի և դասարանների կազմի մասին։ Դասարանները 5 են՝ այս ձևով, կայ պատրաստական մի դասարան, մի առաջին, մի երկրորդ, էլի մի երկրորդ, սակայն ոչ զուգընթաց, այլ իր ծրագրով աւելի պակաս, որ իսկապէս պէտք է առաջին դասարան հաշուել, իսկ առաջինը մեծ պատրաստական, և վերջապէս մի երրորդ դասարան։

Այդ դասարաններում աւանդւում են ընդհանուր առմամբ հետևեալ առարկաները. —

1. Քրիստոնէական,	Հայոց լեզուով աւանդւող
2. Կարևոր աղօթք,	
3. Սրբազան պատմութ.	
4. Ընթերցանութիւն,	
5. Հայոց պատմութիւն,	
6. Քերականութիւն,	
7. Աշխարհագրութիւն,	
8. Երաժշտութիւն,	
9. Վայելչագրութիւն,	
10. Ընթերցանութիւն,	Ռուս լեզուով դասաւանդւող
11. Առակախօսութիւն,	
12. Թւաբանութիւն,	
13. Թարգմանութիւն,	
14. Վայելչագրութիւն,	

Ուսման այս ծրագիրը բաժանելով դասարանների վրա՝ կստանանք այս պատկերը. — Գ. և երկրորդներում աւանդւում են առաջ բերւած բոլոր առարկաները՝ բացի հայերէն ընթերցանութիւնից։ Ա. դասարանում չեն աւանդւում սրբազան պատմութիւն, քերականութիւն, աշխարհագրութիւն, և ռուսերէն աւանդւող առարկաներից առակախօսութիւն. նախակրթարանում աւանդւում են կարևոր աղօթք, ըն-

թերցանութիւն (հայ և ռուս.) և թուաբանութիւն։

Ուսման այս ծրագիրն սկսել է գործել այս ծաւալով 1868 ուսումն. տարուանից։

Աշակերտների թիւն այդ բոլոր դասարաններում եղել է 149, դասաւորուած լինելով այսպէս.—Նախակրթարան 59, ա. դասարան՝ 60, բ. դասարան 15, բ. բարձր դասարանում 6, և գ. դասարանում 8 աշակերտ։

Դասագրքերն են, «Պարզև մանկանց», «Քրիստոնէական մանր ուսմունք», «Другъ дѣтей», «Ռուսերէն այբբենարան». «Քերականութիւն Պալասանեանի», «Աշխարհագրութիւն Կորնելի» ռուսերէն, «Գործնական դաս. ռուս լեզուի», «Ընդհանուր պատմութիւն» ռուսերէն, և այլն։

Սա բերինք իբր նմուշ, ցոյց տալու համար, թէ այս շրջանի հէնց սկզբում ինչ կերպ է նայւում ուսուցման գործի վրա։ Մենք յետոյ կտեսնենք, որ յաջորդ տարիներում ուսման ծրագիրն աւելի ու աւելի ստանում է ժամանակակից դպրոցին վայել կերպարանք։

Ուսումնարանական այս տարուց սկսւում է ամառնային արձակուրդներ անելու սովորութիւնը, դպրոցական տարին վերջացնելով ընդհանուր քննութիւններով։ Սակայն ժամանակակից մի ուսուցչի—պ. Աղաբէկ Արշակունու ցուցմունքով սկզբի տարում այդ արձակուրդը լրիւ ամառնային արձակուրդ չի եղել. այդպիսի արձակուրդներ անելն յետոյ՝ տարեցտարի է առաջ եկել և սովորութիւն դարձել։

Ուսուցչական կազմի վրա 1868 թւի առաջին կիսումն աւելացել է բացի Ա. Արշակունուց

նաև Մարտիրոս ք. Տէր-Պողոսեանը։ Վերջինս նշանակւել է ուղղակի էջմիածնի սինոդի կողմից (23 մարտ № 527 հրաման) հոգևոր դպրոցի կրօնուսոյց։ Այդ պաշտօնում նա մնում է մինչի 1873 թւի օգոստոս ամիսը, երբ նա համաձայն իր հրաժարական գրութեան արձակւում է դպրոցի կրօնուսոյցի պաշտօնից։

1869–70 ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԻ

Այս ուսումնակ. տարւայ մասին առանձին բան չունենք ասելու, ամեն ինչ շարունակւում է ըստ նախընթաց տարւայ։ Բայց այս տարին պիտի հաշւել խմորումների տարի դպրոցի ծրագրի մէջ խոշոր փոփոխութիւններ անելու համար։ Այդ փոփոխութիւնները մըտնում են յաջորդ տարում։

Ուսումնարանական տարին վերջացել է յուլիսի 2-ին. այս և յաջորդ դարում մինչի 1870-ի վերջը դպրոցում եղել է և տեսուչ, որ էր Միքայէլ Միքայէլեանը

1870—71 ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԻ

Այս ուսումնար. տարում յատկապէս նրա երկրորդ կէսից դպրոցն ստանում է մի պատկառելի կերպարանք. նա ուսման ծրագրի նըկատմամբ անում է մի խոշոր քայլ դէպի առաջ։

Աւադնուել են հետևեալ առարկաները։

1. Կրօն,
2. Հայոց լեզու,
3. Հայաստանի և ընդհանուր աշխարհագրութիւն,
4. Տեղագրութիւն (ներկայ մտքով հայրենագիտութիւն),
5. Թելագրութիւն,
6. Ռուսաց լեզու,
7. Գերմաներէն,
8. Բնական պատմութիւն,
9. Թւաբանութիւն,
10. Երկրաչափութիւն,
11. Նկարչութիւն,
12. Վայելչագրութիւն (Հ. և Ռ.),
13. Երգ (ազգային),
14. Երգ (շարականներ),
15. Մարմնամարզութիւն,

1871 թւից (փետրուարի 1) դպրոցում ընկնում է պաշտօնավարել Սարգիս Բէկնազարեանը, որ ուսել էր Ցիւրիխ Կանտոնի Կիւսնախտ (Küssnacht) քաղաքի ուսուցչական սեմինարեան, որ բաւականին լաւ համբաւ ունի։ Բէկնազարեանն աշխատում է հոգևոր դպրոցին ժամանակի պահանջներին յարմար մի պատկեր տալ։ Նրա ջանքերով մտնում են դպրոցի ուսման ծրագրի մէջ գերմաներէն, բնական պատմութիւն, երկրաչափութիւն, տեղագրութիւն, մարմնամարզութիւն և այլն։ Սա բնական հետևանքն էր իր ստացած կրթութեան։

1871 թւից փոխւում է դպրոցի դասարանների անուանումը։ Նոքա կոչւում են առաջին և երկրորդ դուզընթաց բաժանմունքներ՝ առաջին աստիճանի, և ապա երկրորդ աստիճանի դասարան։ Այդ երեք բաժանմանց մէջ եղել են 111 աշակերտ։ Մնացած դասարանների մասին չեն մնացել տեղեկութիւններ։ Դասարանների այդպիսի անուանումները շարունակւում են սրանից յետոյ էլ առժամանակ՝ քննական ցուցակներում։

Հոգաբարձական կազմը նոյնն է, դպրոցի մուտքի և ելքի հաշիւմատեան չկայ։

1871—72 ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԻ

Հոգաբարձական կազմը նոյնն է մինչև 1872 թիւ մարտը։ Այս տարուայ փետրուարին տեղի են ունենում հոգաբարձական ընտրութիւններ, որոնք և որոշում են հոգաբարձական կազմի համար մի նոր խնդիր։ Մինչ այդ, հոգաբարձութիւնը քառանդամ էր, այդ շրջանից սկսում է հոգաբարձութեան կազմը լինել վեց հոգուց և օժանդակ անդամներ (անձնափոխանորդներ) նոյնպէս վեց։ Ընտրութիւնը կատարել է Աղէքսանդրապոլի հայ հասարակութիւնը, իսկ ընտրական ժողով հրաւիրողն եղել է ոչ թէ հոգևոր իշխանութիւնը կամ ծխական եկեղեցին, այլ քաղաքի դեպուտատները։ Այստեղ կարևոր ենք համարում առաջ բերել հոգաբարձական այդ ընտրութիւնն հաստատող հայրապետական կոնդակը։

«Գէորգ՝ ծառայ Քրիստոսի և անհամանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթո-

դիկոս ամենայն հայոց ծայրագոյն պատրիարգ համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Հոգևոր Կառավարութեան Հայոց Աղէքսանդրապոլու ծանուցանեմք։

Ի յայտարար գրութենէ ձերմէ, որ ի 10-ն այսր փետրուարի համարաւ 149 ծանեաք զի բարեպաշտ և Աստուածասէր ժողովուրդք մեր որ յԱղէքսանդրապոլ քաղաքիդ ի ձեռն դեպուտատաց իւրեանց ընտրեալ են ի պաշտօն հոգաբարձութեան հոգևոր ուսումնարանի տեղւոյդ ի տեղի կամովին հրաժարեալ նախկին հոգաբարձուաց գյարգելի անձինս զԱւետիքն Նալբանդ, զՊրապրչիկ Յակովբն Մատակեան, զԳուբերնակիյ սեկրետար զԱրշակն Վարդապարիկեանց, զԲժիշկ Աւետիք Բաբայեանց, զՅովհաննէսն Սահրատեանց և զՎարոսն Քեօսայեանց. և յօժանդակութիւն նոցին հոգաբարձուաց ընտրեալ են զՅարութիւնն Վանեցեանց զՅովհաննէսն Կոստանեանց, զԿարապետն Անանիկեան, զՄարքարն Տէր-Պետրոսեանց, զԸշտապս-կապիտան Թադէոս Տիգրանեանց և զբժիշկ Գաբրիէլն Յովհաննիսեան, ուստի այսու մերով Հայրապետական կոնդակաւ հաստատելով զյիշեալ պարոնայսն ի պաշտաման իւրեանց, լիայոյս ենք ըստ ամենայնի թէ՝ նոքա զատանձնեալ պաշտօնն իւրեանց տեառն շնորհիւ ամենայն արիութեամբ և արդիւնաբերութեամբ յառաջ վարել ազգասիրական եռանդեամբ փառաւոր կացուցանել յաշխարհի և նշանաւոր առնել, առ որ և մեք մաղթեմք առ Աստուած զօրացուցանել և արիացուցանել զդ-

յարգելի հոգաբարձուսն և զօժանդակն նոցին ի պաշտաման իւրեանց յօգուտ ազգի և եկեղեցւոյ, և զհրաժարեալ անդամս հոգաբարձութեան վարձատրել յերկնային անսպառելի պարգևաց իւրոց։ Իսկ Հոգևոր Կառավարութեանդ պատուիրեմք յիշեցուցանելով հոգաբարձուաց այնոցիկ զպարտաւորութիւնս իւրեանց հրաւիրել ի վարումն պաշտաման ըստ ամենայնի ջերմեռանդութեամբ և անձնուէր ազգասիրութեամբ, առ ի ցաւել ևս բարեկարգութեան վերածել զդրութիւն դպրոցին ըստ ուսումնական և ըստ տնտեսական մասին»։

Գէորգ Կաթուղիկոս ամենայն Հայոց

№ 89

29 փետրուարի 187-ն ամի։

Շատ բնական է, որ հին հոգաբարձութիւնը գործերն ու դպրոցական գոյքն յանձնէր նոր հոգաբարձութեանը օրինաստանման կարգով։ Եւ իրօք, դպրոցի 1872 թւի № 1 գործի մէջ մենք գտնում ենք այդ առթիւ բոլոր ապացոյցները։ Նախկին կամովի հրաժարուած հոգաբարձութիւնը յանձնում է ուրբ զանազան ցուցակներով դպրոցի ամբողջ ստացուածքը նոր հոգաբարձութեանը՝ իր ամբողջ կազմի ստորագրութեամբ։ Առաջին ցուցակը պարունակում է դպրոցի դրամագլուխը՝ պարտամուրհակներով. երկրորդը՝ հին հոգաբարձութեան պաշտօնավարութեան ընդհանուր ծախուց և մտից է վերաբերում՝ սկսած 1867 թւից. երրորդը՝ նոյնի համառօտութիւնը. չորրորդը՝ դպրոցի

գործերինն է. հինգերորդը՝ հոգևոր ուսումնարանի կրպակներինն է, ուր նշանակված է, թէ ովքեր են կրպակապաններն ու տարեկան ինչ վճարով։ վեցերորդը՝ նոյն կրպակների երկու քառամսեակների վճարման մասին. եօթներորդը՝ դպրոցական գրքերի և այլ իրեղէններին մասին. ութերորդը՝ դպրոցի ամենատեսակ ստացվածքների։

Այդ ցուցակներից մեզ յայտնի է դառնում որ դպրոցը ունեցել է գործերը նոր հոգաբարձութեանն յանձնելու ժամանակ 12216 ր. 70 կ. հասնող մի դրամագլուխ։

Այստեղ խիստ աչքի է ընկնում, որ հին հոգաբարձութիւնը ցոյց տալով 1868 թւից սկսած մինչև յանձնման օրը 18964 ր. 55 կ. ընդհանուր մուտք, դրանից հանում է 1867 թւից մինչև յանձնման օրը ծախսված 8846 ր. 34 կոպ. գումարը։ Չի պարզւում, թէ ինչպէս է պատահել, որ 1867 թւի ծախսը հաշուել են, իսկ մուտքը ոչ։ Այդ յանձնողական ցուցակներից պարզւում է, որ հին հոգաբարձութիւնը բացի ժապաւինեալ մատեանների մէջ յիշված դպրոցական դրամագլխից, ունեցել է և այդ մատեանների մէջը չգրված գումարներ, որոնք և յանձնել է նոր հոգաբարձութեանը։ Դպրոցական արտաքոյ ժապաւինեալ մատեանի գումարն է 2098 ր. 49 կ. ինչպէս է հոգաբարձութիւնն այս վերջին գումարների հաշիւը պահել, հնար չեղաւ պարզել։

Դպրոցի դրամագլխի շահեցնելու եղանակը մնացել է նոյնը, բայց այժմ մի քանի անձանց վրա կան արդէն խոշոր գումարներ, օրինակ

պօղ-պօլկովնիկ Յովհ. Տիգրանեանի վրա 2800 ր. Ս. և Յ. Սահրատեանների վրա 1356 ր. Կ. Զալթիկեանի վրա 979 ր. 87 կ. Յ. և Մ. Տէր-Յակովբեանների վրա 1000 ր. Սահակ և Յակովբ Իսահակեանների վրա 735 ր. 60 կ. և այլն։

1867—72-ի մարտ ամիսը դպրոցի վրա եղած ծախսերի մեծ քանակութիւնը (8846 ր. 34 կ.) բացատրւում է նրանով, որ 1870 թւին շինւում է դպրոցի շէնքի շարունակութիւնը՝ մի դահլիճ և մի դասարան։

Դպրոցի ուսման ծրագիրը նոյնն է։ Ուսուցչական խումբը կազմված է հետևեալ անձերից։

1. Սարգիս Բէգնազարեան, տեսուչ.
2. Մկրտիչ Արաբաջեան,
3. Աղաբէկ Արշակունի,
4. Մարտիրոս ք. Տէր-Պօղոսեան,
5. Սենեքերիմ Տէր-Մատթէոսեան,

Մնացածների անունը անյայտ։

Դպրոցն ունի 5 դասարան—2 պատրաստական և 3 դասարան. աշակերտների թիւն է տարեվերջը՝ 132։

Հոգևոր դպրոցի այս կերպարանքն ընդունելուն մասնակից է եղել անշուշտ ժամանակի Հայրապետական փոխանորդ Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանը, որն և հոգաբարձութեան նախագահն է եղել։

Թէ ինչ կարգադրութեան հիմամբ է եղել որ փոխանորդն ի պաշտօնէ լինի հոգաբարձութեան նախագահ, մնաց անորոշ։ Յաջորդ տարւայ մի գործից երևում է, որ նոյն հոգաբար-

ձուլթիւնը հրաւիրում է Ալէքսանդրապոլի նոր փոխանորդ Սուքիաս վարդապետ Պարզեանին մասնակցելու իր նիստերին իբր նախագահ։ Հոգաբարձութիւնն այդ բանը հիմնաւորում է մի «կանոնով» որ մենք դպրոցի գործի մէջ չգտանք։

Դպրոցի գործերի մէջ չգտնուեց նոյն տարուայ հաշուեմատեանի ոչ սևագրութիւնը և ոչ էլ որևէ գործ, որ կարողանայինք եկամուտների և ծախսի մասին որևէ բան ասել։ Ընդունած նոր սովորութեան համաձայն տարեկան հաշուեմատեանները պիտի ղրկուէին Հոգևոր Կառավարութիւն։

1873 թուի մի գրութիւնից երևում է, որ դպրոցի նախկին հոգաբարձութիւնը հրաւիրել է Ս. Բէկնազարեանին 500 բուբլի ռոճկով։ Մնացած ուսուցիչների ռոճիկները ինչպէս երևում է դպրոցի գործերից, եղել է ամսական 10—50 բուբլի։

Դպրոցի 1872 թուի № 1 գործի մէջ գտնուում է մի խնդիր, որով թոյլտուութիւն են ուզում հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնից նրա հովանաւորութեան տակ «նախակրթարան» անունով մի դպրոց բանալ։ Այդ խնդրի հետ ներկայացրել են և մի կանոնադրութիւն։ Դպրոցի ղեկավարն էր լինելու Ղազարոս Աղայեանը՝ յետագայում մեր ամենիս սիրելի Ղազարոսը։ Այդ դպրոցը բացուում է, բայց շատ չանցած Աղայեանը հրաւիրուում է հոգևոր դպրոցի դասատու։

1872—73 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ.

Հոգաբարձական կազմն արդէն յիշածս է։ Հաշուեմատեանի սևագրութիւն դարձեալ չէ պահուած։

Դպրոցն ունի երկու պատրաստական և երեք դասարան. դասաւանդուող առարկաները մնում են նոյնը։ Աշակերտները բաժանուած են ըստ դասարանների։

Այս տարում ջանքեր են լինում դպրոցին մի նոր կանոնադրութիւն տալ, որ հաստատուել է նաև Գէորգ կաթուղիկոսից։ Գործերի մէջ այդ կանոնադրութիւնը չտեսանք։ Ջանքեր են լինում նաև ուսման նոր, մանրամասն ծրագիր կազմելու համար։ Դպրոցի տեսուչ Ս. Բէկնազարեանի մի յայտարարութիւնից երևում է (4 յունուարի 1873 թ.), որ թէ իր և թէ նախկին հոգաբարձական կազմի մեծ ջանքերից մէկն է եղել «զուն գործել բարձրացուցանելոյ զդրպրոցն յաստիճան թեմական դպրոցի»։ Եւ իրօք, մեր այս դպրոցն հէնց իր հիմման սկզբից՝ Երևանի թեմական դպրոցի նման կոչւել է հոգևոր դպրոց։ Ալէքսանդրապոլի փոխանորդներն էլ կոչւել են սկզբներում փոխանորդ Թեմին Հայոց Ալէքսանդրապոլու։ Սկզբնական թեմակալներն եղել են արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ։

Ուսուցչաց կազմը հետևեալն է. 1. Սարգիս Բէկնազարեան, նաև տեսուչ. ստանում է ամսական 58 ր. 63⅓ կոպ. 3. Հայրապետ Ղուկասեան 50 ր. 3. Հայկ Մատակեան, 33 ր.

63⅓ կոպ. 4. Աղաբէկ Արշակունի, 25 ր. 5. Սարգիս Արաբաջեան, 20 ր. 6. Սենեքերիմ Տէր-Մատթէոսեան, 14 ր. 25 կ, 7. Աղաբէկ Ամիրեան, 13 ր. 8. Մարտիրոս ք. Տէր-Պողոսեան, 10 ր. 9. Աղէքսանդր ք. Տէր-Ամատունեան, 10 ր. Այսպէս ուրեմն ինն ուսուցիչ՝ ամսական 234 ր. 52 կ. ռոճկով. սրա վրա աւելացնելով ծառայի ստացած 6 ռուբլին, կանէ 240 ր. 52 կ. այս հաշուով դպրոցի ծառայողներին տարեկան ծախսւում է 2886 ր. 24 կոպէկ. մի պատկառելի գումար՝ այն ժամանակների համար։ Տարւայ մէջ աւելացել են՝ իբր ուսուցիչ Նազարէթ Նալպանդեան, 14 ր, ռոճկով և իբր գործավար հոգաբարձութեան Կ. Ջանիբէկեան՝ 6 ր. ամսական ռոճկով։

Այդ տարին մուտք է եղել Աստուածածնայ խորանից 1590 ր, 43 կ. դպրոցի մնացած ծախսերը ծածկւել են Մուխթաֆեանի ընկերակցութեամբ շինած կայքերի եկամուտներով, պատահական նւէրներով, դրամագլխի %-սով, աշակերտական ուսման վարձով, որ 1870 թւից արդէն մուտք է գործել։ Այս տարում խորանին խոստացած նւէրների քանակութիւնն է 882 զան, 95 ուլ, 13 ոչխար. 4 դոշ, 76 հորթ, 29 մոզի, 2 երինջ, 4 արջառ, 4 թոխլի, 111 սոմար 14½ կոտ ցորեն և 11 սոմար 1 կոտ գարի։

Այստեղ աւելացնեմ, որ այդ և առաջի տարիներում սովորական է եղել ուսուցիչների ռոճիկը նիւթեղէնով, օրինակ գառով ուլով և այլն լրացնել։

Աշակերտական ուսման վարձը, մի ցուցակից քաղելով, տարբերւել է 1—22 ր. մէջ. աշակերտների մօտ 20%-ը այնուամենայնիւ ձրիավարժ է եղել։

Որովհետև հոգևոր դպրոցը չէ ունեցել սեփական արտաքնոց և աշակերտներն օգտւելիս են եղել հասարակաց արտաքնոցով որ գտնւում էր դպրոցից հեռու, հոգաբարձութիւնը որոշում է դպրոցի գաւթում մի արտաքնոց շինել։ Բայց դպրոցի նեղ գաւթում տեղ չկայ, ուստի և դիմում են Հոգևոր կառավարութեանը որ թոյլ տայ հին յաջորդարանի արտաքնոցին կից գետնից օգտւել արտաքնոցներ շինելու համար։

Հոգևոր իշխանութիւնը հնարաւոր է գտնում դպրոցին թոյլ տալ ժամանակաւորապէս օգտւել այն հողաբաժնից, առանց որ այդ հողաբաժինը յօգուտ դպրոցի օտարացնւի (25 յունւարի 1873 թ. № 201) ու միանայ դպրոցապատկան կից գետնի հետ։ Այստեղ այս կարևոր էր յիշել, ցոյց տալու համար, որ հոգևոր դպրոցն ու իր գաւիթը զատ է եղել հին յաջորդարանի և Էջմիածնապատկան կրպակների տեղից։ Այդ երկու հողաբաժինները պատկանելիս են եղել տարբեր հիմնարկութիւնների, մէկը դպրոցին միւսը Էջմիածնին։

1873-74 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

Հոգաբարձական կազմը նոյնն է, միայն տարւայ մէջ հրաժարւում են քաղաքից բացակայելու պատճառով բժ. Ա. Բաբայեան և Արշակ Վարդապարիկեան. նոցա տեղ հրաւիրւում են անձնափոխանորդները։ Ուսուցչական

խումբը կազմւած է հետևեալ անձանցից. 1. Ս. Բէկնազարեան, 2. Ղազարոս Աղայեան, 3. Հայրապետ Ղուկասեան, 4. բժ. Գաբրիէլ Յովհաննիսեան, 5. Մակար Տէր-Սարգսեան, 6. Աղ. Ամիրեան, 7. Աղ. Արշակունի, 8. Մինաս ք. Տէր-խաչատրեան, 9. Աբգար Գիւլումեան, 10. Ս. Տէր-Միքայէլեան, 11. Ն. Նալբանդեան, 12. Մ. Արաբաջեան, 13. Սենեք. Տէր-Մատթէոսեան 14. Սարգիս Արաբաջեան։

Այս ուսումն. տարին առաջինն է, որ մեզ իր մանկավարժական ժողովների արձանագրութիւններն է թողել

Մանկավարժական ժողովների թիւը 13-է, որոնց զբաղմանց կենդրոնական տեղը բռնում է դպրոցի ուսման ծրագիրը։ Սկզբում որոշել են յանձնել իւրաքանչիւր ուսուցչի իր աւանդած առարկաների ծրագիրը կազմել և ապա ներկայացնել ժողովին։ Ժողովում իւրաքանչիւր առարկայի ծրագիրը քննելով կազմել են մի ամբողջական ծրագիր։

Ուսման ծրագիրը սակայն հետևեալ տարուն է ստանում մի ամբողջական պատկեր։

Մանկավարժական ժողովն սկզբում և յաջորդ նիստերում զբաղւում է դասաւանդման եղանակների խնդրով, օրինակ թւաբանութեան, հայոց լեզուի և այլն։ Ընդունում է Ս. Բէկնազարեանի կազմած ընագիտութեան, բժ. Գ. Յովհաննիսեանի ռուսաց լեզուի, Հ. Ղուկասեանի հայոց և ընդհանուր պատմութեան, աշխարհագրութեան, Մակար Տէր-Սարգսեանի գծագրութեան և նկարչութեան, Ա. Ամիրեանի մարմնամարզութեան և Մ. ք. Տէր-Խաչատրեանի կազմած կրօնի ծրագրերը։

Թէև դպրոցը տեսուչ ունի, սակայն մանկավարժական ժողովների նախագահութիւնը կատարում են հերթով դպրոցի բոլոր ուսուցիչները։ Առհասարակ տեսչի եռանդուն գործունէութեանն ու նրա ընկերակից ուսուցիչների ջերմ աշխատակցութեանն է պարտական հոգևոր դպրոցն իր բարձրանալովն։ Այդ ժամանակներում դպրոցն արդէն այնքան անուն է հանած լինում, որ մեր քաղաքի հարուստ ընտանիքներ չեն քաշւում իրենց որդոցը տալ այնտեղ կրթութեան։

1873-4 ուսումնական տարում ոչ միայն դպրոցի ուսման ծրագիրն է աւելի մեծ ծաւալ ստանում, այլ նաև դասարանների թիւն է աւելանում՝ հէնց տարւայ սկզբից։ Դպրոցն ունի այժմ երեք պատրաստական և երեք հիմնական դասարան՝ իրենց ուսման ծրագրով թեմական դպրոցի համապատասխան դասարաններից ոչ պակաս, իսկ վերջին երկու դասարանում դեռ մի քիչ աւելի ուսման լայն ծաւալով։

Դպրոցի աշակերտների թիւն է 260, ա. պատրաստական 59. բ. պատր. 54. գ. պատր. 42. ա. դասարան 26. բ. դասարան 19 և գ. դասարան 10 աշակերտ։ Փոխադրել են 158 բ. (73%) մնացել են 52 (27%) աշակերտ։

Ինչպէս հոգաբարձական գործերից երևում է, դպրոցի տեսուչ Ս. Բէկնազարեանը հրաժարւել է տեսչութիւնից և խնդրել թողնել իրեն սոսկ ուսուցիչ 700 ր. ռոճկով։ Հոգաբարձութիւնը № 64 գրութեամբ 1873 թ. դեկտեմբերի 28-ին խնդրում է մանկավարժական ժողովին

վարել դպրոցի տեսչութիւնը խմբական վերահասութեամբ։

Մանկավարժական ժողովն ընդունում է այդ առաջարկութիւնը, սակայն 1874 թւի յունուարի 14-ի № 1 գրութեամբ խնդրում է հոգաբարձութեան, որ երբ վերջինս իր ժողովների մէջ մանկավարժական խնդիրներ շօշափելու լինի, այդ մասին նախօրօք տեղեկութիւն տայ մանկավարժական ժողովին։ Վերջնիս միտքն այն է, որ հոգաբարձական այդպիսի ժողովներին ուսուցիչներից մէկը ներկայ լինի։

Այս ուսումն. տարւայ մէջ, սկզբի կիսամեակում հրաժարւել են ռոճկի սակաւութեան պատճառով Սարգիս Արաբաջեան, Աղ. Ամիրեան, Սենեքերիմ Տէր-Մատթէոսեան և Գիւլումեան։ Ամիրեանի տեղ հրաւիրւել է Ալ. Ափրիկեան, որ նոյն պատճառով նորից հրաժարւում է, նրա տեղ վերստին հրաւիրւում է, Աղ. Ամիրեան։

Բոլոր ուսուցիչներն աւանդում են 164 դաս. ստանում են 2952 ր. ռոճիկ։ Դպրոցի բոլով ծառայողները միասին ստանում են 3192 ր. Դպրոցի բիւդճեն է մօտաւորապէս 3500 ր. Եկամուտները մնում են նոյնը։ Այդ տարւայ մէջ Աստուածաշնչի պատկերի հատոյթները կազմում են մուտքի գլխաւոր մասը, ինչպէս միշտ, այն է աւելի քան 2500 ռուբլի։ Նախկին տարիներից խոստացած նուիրատուութիւնները հաւաքւել և ի վաճառ են հանւել, որից գոյացել է 2956 ր. 26 կ. դրանից դպրոցն ստացել է 1970 ր, 84 կոպէկ, որպէս այդ երևում է հոգևոր կառ. № 2501 գրութիւնից 1873 թ. 31

դեկտեմբերի։ Աւելի մանրամասն հաշիւ հնար չկայ տալու, որովհետև հաշուեմատեանը ուղարկւած է հոգևոր կառավարութեան։

1874—75 ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԻ.

Հոգաբարձական կազմը փոփոխութեան չի ենթարկւել. հրաժարւածների տեղը պաշտօնավարում են արդէն յայտնի անձնափոխանորդները։ Դպրոցի գործերը տարւում են նոյն եղանակով, ինչպէս առաջ։ Հաշուեմատեան կայ 1875 թւի յունուարից։

Դասարանների թիւն աւելացել է, այս ուսումն. տարւայ սկզբից կայ արդէն չորրորդ դասարան։ Այդ պատճառով և դպրոցի ուսման ծրագիրն հարստանում է նոր առարկաներով։ Այժմ աւանդւում են.

1. Կրօն,
2. Եկեղեցական պատմութիւն,
3. Հայոց } լեզուներ,
4. Ռուսաց }
5. Գերմաներէն,
6. Ընդհանուր } պատմութիւն,
7. Հայոց }
8. Ընդհանուր } աշխարհագրութիւն,
9. Ռուսաստանի }
10. Երկրաչափութիւն,
11. Թւաբանութիւն (նաև ալգեբրա),
12. Ֆիզիքա,
13. Բնագիտութիւն,
14. Վայելչագրութիւն հայոց և ռուսաց,

15. Նկարչութիւն և գծագրութիւն,
16. Երգ.

Նախընթաց երկու տարիներում մանկավարժական ժողովի ջանքերով գլուխ է գալիս դպրոցի ուսման ծրագիրը, սակայն նա այս տարի է ընդունել վերջնականապէս (VII, ,XI XIII, XVI ժողովներ)։ Այդ ծրագիրն իր նախընթաց խորհրդածութիւններով այնքան հետաքրքրական է, որ չենք խուսափիլ դպրոցիս պատմութեանն իբր յաւելուած, այս բաժնի վերջում դնել։ Մանկավարժ. ժողովն ամեն բան արել է՝ այն նպատակայարմար անելու համար։

Դասարանների և ուսուցիչների այսպիսի թւով աւելանալը բնական էր, որ դպրոցի բիւրեղէն համապատասխան չափով բարձրանար։

Տեսուչ չկայ դպրոցում, նրա տեղը բռնում է մանկավարժական ժողովը, որը սակայն, դժգոհ է այդ բանից ու գրութեամբ խնդրում է յատուկ մի անձն նշանակել տեսուչ (XIV և XV ժողովներ)։ Այս խնդիրը մնում է առկախ։

Ուսուցչական կազմն է. 1. Ս. Բէկնազարեան, 2. Ղ. Աղայեան, 3. Հ. Մատակեան, 4. Հ. Ղուկասեան, 5. Մկրտիչ Արաբաջեան, 6. Ա. Ամիրեան, 7. Մ. Տէր-Սարգսեան, 8. Յովսէփ վարդապետ Փինաչեան, 9. Յ. Տէր-Սարգսեան, 10. Ն. Նալեան 11. Ա. Արշակունի, 12. Ս. Վեհապետեան, 13. Սաքիբէկ Տէր-Մելքիսեդեկեան, 14. բժ. Գ. Յովհաննիսեան, 15. Աբրահամ Ամիրխանեան, որ նոյն թւին հրաւիրւում է գերմաներէն և բնագիտական առարկաների համար։

Աշակերտների թիւն է 266 յառաջադիմական ցուցակներ չկան։

Մանկավարժական ժողովներն (21.) զբաղուել են հետևեալ խնդիրներով.—Բացի ծրագրի և տեսչական խնդիրներից, որոնց մասին վերն արդէն յիշուեց, ժողովն զբաղուել է զանազան կարգապահական, մեթոդի (գրաբար ուսուցանելու, թելադրութեան վերաբերեալ և այլն). աշակերտաց հագուստի միաձևութեան, դասագրքեր ընտրելու խնդիրներով։ Մանկ. ժողովին զբաղեցրել է նաև Սահականուշեան դպրոցի բացման և ծրագրի խնդիրները։

Դպրոցի IV-րդ դասարանի համար ընտրել են հետևեալ դասագրքերը. Կրիւգերի սկզբնական դասագիրքը, Ռուսաց պատմութիւն Իլովայսկու «Համառօտ Ձեռնարկ», Ընդհանուր պատմութիւն Գրուբէի «Նոր դար». Սիմէօնովի «Աշխարհագրութեան դասեր» գ. մաս, Եւրոպա, և այս բոլորը ռուսաց լեզուով, ու աւանդել են ռուսաց լեզուով։

Յունիսին ուսումնար. տարին վերջանալուց յետոյ, մանկավարժական ժողովը յուլիսի 1-ի № 12 գրութեամբ մի ընդհանուր տեղեկութիւն է տալիս հոգաբարձութեանը, և զեկուցանում դպրոցի կարիքների մասին։ Նախ խօսք է բարձրացնում շէնքի մասին, ապա մի յատուկ տեսուչ նշանակելու մասին, որ կարողանար դպրոցական գործը զեկավարէր, որի չլինելու պատճառով տուժում է, գրում է մանկավ. ժողովը, դպրոցը։

Դպրոցի եկ ու մուտքի պատկերն այս է. առ մէկն յունուարի 1875 ամի դպրոցն ունեցել է գրամագլուխ 11588 ր. 98 կոպ. ուսուցիչներին վճարում է այս ուսումն տարում ամսէնը

326 ր. 32 կոպ. բոլոր ծառայողներին միասին 346 ր. 32 կոպ. ըստ այդմ տարեկան 4155 ր. 84 կ. դպրոցի ընդհանուր ծախսն անցնում է 6000 ր. եկամուտներն են ա. դրամագլխի տոկոսներ մօտ 1000 ր. շահեցնելու %-ն է 10% առ հարիւր, բ. Աստուածածնայ խորանի եկամուտներ մօտ 2000 ր. գ. թոշակ մօտ 1500 ր. դ. կալուածների եկամուտներ հին ու նոր մօտ 1000 ր. Այս գումարները նշանակւեցին այստեղ մօտաւորապէս, քանի որ 1874 թւի հաշւեմատեանը չկայ, և 1874—75 ուսումն. տարւայ վերջին կիսի հաշիւը կայ միայն։ Այսուհետև, ինչպէս և իր ժամանակի հոգաբարձութիւնն է արել, մենք հաշիւը կանենք յունուարից յունուար՝ սկսած 1875—76 ուս. տարւանից։

1875—76 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ.

Փոփոխութեան է ենթարկւում ուսուցչական խումբը, բայց էլի չկայ տեսուչ. տարւայ մէջ նշանակում է հոգաբարձութիւնն իր կազմից Մկրտիչ Կոստանեանին մանկավարժական ժողովի հետ վարել տեսչական պաշտօնը։

1875 թւի սկզբից գործում է հոգաբարձական նոր կազմ. անդամներն են, հոգաբ. նախագահի պաշտօնակատար Յ. ա. ք. Կոստանեան, Յ. Զիթողցեան, Մ. Կոստանեան, մայոր Թ. Տիգրանեան, Յ. Ղազարեան, Կար. Անանիկեան, Յ. Սահրատեան։

Դասարանների թիւն է 7-ը, ըստ նախկինի՝ 3 պատր. և 4 հիմն. դասարան. աշակերտների թիւն է 284, փոխադրւել են 177 հոգի։ Դասաւանեելի առարկաները մնում են նոյնը։

Ուսուցիչներն են.—Ղ. Աղայեան, Հ. Ղուկասեան, Մ. Արաբաջեան, Ա. Արշակունի, Ա. Ամիրեան, Ա. Յակովբեան, Մ. Տէր-Սարգսեան, Ա. Եղեկեան, Ս. Տէր-Մելիքսեղեկեան, Մ. ք. Տէր-Պետրոսեան, Յ. Աբգարեան, Полтавцевъ (ռուս. լեզւի համար), Нелюбинъ (ռուս լեզւի, պատմութեան), Ն. Նալբանդեան։ Բէկնազարեանի և Ա. Ամիրխանեանի հեռանալու պատճառով վերացել է գերմաներէնը։ Ուսումն. տարին սկսւել է սեպտեմբերի 9-ին և վերջացել է (դասերը) յունիսի 4-ին։

Ինչպէս երևում է հոգաբարձութեան № 26 զրուցիւնից (1876 թ. մայիսի 26-ից) դպրոցի քննութիւններն ըստ նախընթաց տարիների եղել են հրապարակական, ընթացիկ տարում տեւել են նոքա յունիսի 7-ից մինչև 30-ը։ Քննութիւններից յետոյ մանկավարժական ժողովը ներկայացնում է հոգաբարձութեանը մի տեղեկագիր քննութեանց արդիւնքի և իր գործունէութեան ու դպրոցի վիճակի մասին առհասարակ։

Տարւայ մէջ տեղի է ունեցել 28 մանկ. ժողով։ Նրան զբաղեցրել են զանազան խնդիրներ, ինչպէս են կարգապահական, աշակերտական տարազի, կիսամեայ քննութիւնների, տեսչական՝ որ հոգաբարձութիւնն անպատճառ մի պատասխանատու տեսուչ ընտրէ, աշակերտական (դ. դասարանում) շարադրութիւններ յաճախ գրել տալու, դպրոցի մատենադարանը կարգաւորելու, դասաւանդման (գրելու) եղանակների, Ա. աւածածնայ գաւթում նորաբաց ծխական դպրոցի ծրագրի և ուսուցիչ նշանակելու (Վ. Գէօնջեանին և Մ. Հալաճեանին), կրօնի

դասաւանդումը (նամանաւանդ սաորին պատրաստականում) դիւրամատչելի անելու, ժողովի մէջ մանկավարժական յօդուածներ կարդալու մասին։

Առանձին ուշադրութեան է արժանի XIII-րդ ժողովի արձանագրութիւնը, որից մենք իմանում ենք, որ մինչ այդ սովորութիւն է եղել դասօրակարգն երկուսի բաժանել, ճաշից առաջ և ճաշից յետոյ, ինչպէս այդ եղել է և է Զուիցերական դպրոցների մեծագոյն մասում։ Այժմ որոշուում դասօրակարգը շարունակել ըստ այդմ միայն մինչի նոյեմբերի մէկը, դրանից յետոյ մինչի Զատիկ՝ օրուայ հինգ դասերը առանց ընդհատելու շարունակուին մինչի ճաշուայ ժամը 2-ը։ Զատկից յետոյ, ինչպէս և աշնանը մինչի նոյեմբեր պարապմունքն անել ըստ հնումն, ճաշից առաջ և ճաշից յետոյ՝ մի մեծ ընդմիջումով։

Հոգաբարձութեան գործունէութեան մասին պակասում են պաշտօնական զրութիւններ իսպառ։ Չեն մնացել զրութիւններ, թէ նոքա ե՞րբ են ընտրուել, ե՞րբ հաստատուել ու դպրոցն ի՞նչ վիճակի մէջ են ստացել նախկին հոգաբարձութիւնից։

Այս տարի ձեռնարկուել է դպրոցի կրպակների կառուցման գործը, որ աւարտուում է և յաջորդ ուսումն. տարուայ առաջին կիսում քրէհով տրուում։

Դպրոցի ուսման ծրագիրը հարստանում է նոր առարկաներով. աւելանում է ռուսաստանի աշխարհագրութիւն և մարդակազմութիւն։

Դպրոցից հեռանում է Ղազարոս Աղայեանը։ Աղայեան, Բէկնազարեան, բժ. Գ. Յովհան-

նիսեան, Հ. Ղուկասեան կարելի է ասել դպրոցի այս շրջանի կազմակերպողներն ու դպրոցն այդ փառաւոր անուան ու դիրքին հասցնողներն են եղել։ Իհարկէ, դոցա այդ եռանդուն գործունէութիւնը պայմանաւորուում է և հոգաբարձական կազմերի բարեխիղճ և սրտացաւ գործակցութեամբ։

Թող հետևեալ տախտակը ցոյց տայ, թէ դպրոցի նորակազմ ուսման ծրագիրն այս և յաջորդ տարիներում ի՞նչ առարկաներ է ունեցել, և որի՞ց որքան ժամ շաբաթական։

ԱՌԱՐԿԱՆԵՐ	Դասարան				Պատրաստական		
	Դ.	Գ.	Բ.	Ա.	Գ.	Բ.	Ա.
1 Կրօն.	2	2	2	2	2	2	2
2 Հայ. լեզու	5	6	6	6	6	6	12
3 Ռուս. լեզու.	5	5	5	6	6	5	—
4 Թուաբանութիւն.		3	3	4	5	4	4
5 Ալգեբրա.	2	—	—	—	—	—	—
6 Ֆիզիքա.	2	—	—	—	—	—	—
7 Երկրաչափութիւն.	2	—	–	—	—	—	–
8 Աշխարհագր. ընդհ.	2	3	2	2	—	–	—
9 Աշխարհագր. ռուս.	1	1	—	—	—	–	—
10 Պատմութիւն ընդհ.	2	2	2	2	—	—	–
11 Պատմ. հայոց.	2	2	2	—	—	—	—
12 Բնագիտութիւն.	—	2	2	2	—	—	—
13 Մարդակազմութիւն.	1	—	–	—	—	—	—
14 Նկարչութիւն.	1	1	1	—	–	—	–
15 Վայելչագր. հայոց.	—	1	1	2	3	3	—
16 Վայելչագր. ռուսաց.			1	1	2	2	—
17 Երգ.	2	2	2	2	2	2	2
18 Գրութիւն.							4

1875 թուի տնտեսական վիճակն է. -

Մուտք 17630 ր. 59½ կ. (11588 ր. 98½ կ. դրամագլխի հետ) ծախք 7008 ր. 41 կոպ. առ մէկն յունուարի 1877 ամի դպրոցն ունի 10622 ր. 18½ կ.

Մուտքը գոյացել է ա. պատկերի արդիւնքներից 215 ր. 41 կ. բ. կրպակներից 982 ր. 42 կ. գ. %%-ներ 1089 ր. դ. ուսման վարձ 1678 ր. 90 կ. ե. գրքերի վաճառումից 140 ր. 48 կ. և այլն.

Ելքը. ա. ուսուցչաց ռոճիկ 4155 ր. 84 կ. բ. եկեղեցու շուրջը շինող կրպակների շինութեան վերատեսչութեանը նոյն շինութեանց համար 2400 ր. մնացած մօտ 452 ր. 45 կ. գնացել է դիւանական ծախսերի, նորոգութեան, դասարանական պիտոյքների վրա։

Այս հաշուեմատեանը ցոյց է տալիս, ու հոգաբարձութիւնը ջանքեր է թափում դպրոցի եկամուտներն աւելացնելու, որի համար և ձեռնարկել է եկեղեցու գաւթի շուրջը կրպակներ կառուցանելուն։ Գործերից չի երևում, թէ այդ շէնքն ե՞րբ է սկսել, միայն թէ նախկին հոգաբարձութեան օրով։ Ներկայ մատեանով հոգաբարձական գանձարկղից այդ շինութեան համար դրամներ բաց թողնելն սկսւում է 1875 թուի փետրուարի 17-ից (100 ր.)։ Երևի դա պահանջել է նախապատրաստական աշխատանաց համար, քանի որ նոյն տարուայ մայիսի 22-ին բաց է թողնուում 1000 ր, սեպտեմբերի 6-ին 300 ր. և դեկտեմբերի 28-ին դարձեալ 1000 ռուբլի։

1876—77 ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԻ

Հոգաբարձութեան կազմը նոյնն է։ Սոյն տարուայ առաջին կիսամեակի հոգաբարձական ժողովների արձանագրութիւնները չկան, մնացել են երկրորդ կիսինը։ Նիստերի թիւն է 17 զբաղմունքի առարկաներն են. - նախկին հոգաբարձութեան հաշիւներն ու գործերն ստանալը, դպրոցի ունեցածի ցուցակագրելը, դպրոցի նորակառոյց կրպակները քրեհով տալը, դպրոցի հին պարտապանների դէմ դատ սկսելը։ Նախկին տարիներից մենք գիտենք որ դպրոցն ունեցել է դեռ 1872 թուին 12000-ից աւելի մի դրամագլուխ։ Հոգաբարձութիւնը չկարողանալով տնական եղանակով վերջացնել հին այդ մուրհակների գործը, որոշում է դատով ազատել կորստից դպրոցի այդ դրամները։ Նրանցից կան, որ խոշոր գումարներ են պարտք եղել դպրոցին, Յովհաննէս աղա Տիգրանեան 5000 ր. Արշակ Ն. Տիգրանեան 4400 ր. Մատինեանը 336 ր. Զալալեան 300 ր. կան և այնպիսիները, որ տասնամեակն անցած լինելու վրա վստահ, բոլորովին են մերժում պարտքերը վճարել, օրինակ Կ. Զանիբէկեան, և այլն։

Հոգաբարձական նիստերի կանոնաւոր տանելուց և դպրոցի յատկապէս նիւթական և ուսումնական մասի վրա եղած հոգացողութիւնից երևում է, որ հոգաբարձութիւնը ջանք չի խնայել դպրոցն հարկաւոր բարձրութեան պահելու համար։

Աշակերտների թիւն է 367. փոխուում (217) և աւարտում (10) են 227 աշակերտ։

Դպրոցը բաղկացած է 9 բաժանմունքից, 4-ը հիմնական դասարաններ, մի գ. պատրաստական, երկու բ. և երկու ա. պատրաստականների, որի պատճառով և աշակերտների թիւը 370-ի է հասել։ Տարեկան քննութիւններն բակսւել են յունիսի 7-ից և տևել մինչի 25-ը. իսկ ամառւայ արձակուրդներն ըստ սովորութեան մինչի սեպտեմբեր։

1876–77 ուսումն. տարւայ սկզբից դասախօսում են դպրոցում 16 ուսուցիչ այն է Հ. Ղուկասեան, Մ. ԱբրաՀամեան, Ա. Արշակունի, Ա. Սիմէօնեան, Մ. Ք. Տէր-Պետրոսեան, Ա. Խանզատեան, Յ. Աբգարեան, Ա. Ամիրեան, Ս. Տէր-Մելքիսեդեկեան, Ա. Մխիթարեան, Վ. Գեօնջեան, Մ. Տէր-Սարգսեան, Գ. Պապիկեան, Полтавцевъ, տարւայ մէջ հրաւիրւում է Մ. Իսահակեան։ Սոցա բոլորի ստացած ռոճիկն է այդ տարւայ ընթացքում մօտ 4100 ր. ուսման ծրագրի մէջ մտել է նաև հանրահաշիւ (ալգեբրա)։

Մանկավարժական ժողովներ եղել են տարւայ մէջ 37. ուսումն. տարին սկսել է սեպտեմբերի 2-ին, վերջացել յունիսի 4-ին, քննութիւնները նոյն ամի 25-ին։

Դպրոցում տեսուչ չկայ, մանկ. ժողովների նախագահութիւնը վարում է Հ. Ղուկասեանը մինչի յունւարի 10. այնուհետև որոշում են նախագահութիւնն անել հերթով։

Ինչպէս սեպտեմբերի 25-ի ժողովի արձանագրութիւնից երևում է հոգևոր վիճ. դպրոցի մանկավարժական կազմի վրա պարտք է դրւում հսկել Արղութեան օրիորդաց դպրոցի

վրա և փոխ առ փոխ տեսչութիւն անել։ Ժողովն ընդունում է միացեալ (հոգևոր վիճակային և Արղութեան դպրոցների) հոգաբարձութեան այդ առաջարկութիւնը։

IX ժողովում դրւում է կիսամեայ քննութիւններ անելու խնդիրը և որոշւում դրական մտքով, նոյն ժողովն զբաղւում է Արղութեան դպրոցի ուսման ծրագիր կազմելու խնդրով և յանձնարարւում է ծրագրի նախագծեր կազմել։ Այս հարցի բարձրանալը կապւում է ոչ միայն վերևում յիշածս հանգամանքի հետ, այլև որ վիճակային դպրոցի շատ ուսուցիչներ միաժամանակ դասատու էին և Արղութեան դպրոցում։

Յունւարի 10-իր ժողովում (16-րդ) Հ. Ղուկասեան առաջարկում է Սահականուշեան դպրոցի տեսուչ ընտրել Ա. Արշակունուն, որ և ընտրւում է ձայնից բազմութեամբ։ Այստեղ հարկաւոր է աւելացնել, որ Սահականուշեան դպրոցի ծագումն ու կարգաւորւիլ-կազմակերպւիլը պարտական է վիճակային դպրոցի այս տարիների մանկավարժական կազմի եռանդուն գործունէութեանը։ XVIII-րդ ժողովից սկսած կարդացւում են Արղութեան դպրոցի համար պատրաստած ուսման ծրագրի նախագծերն և ընդունում։

Թէ մանկավարժական ժողովի գործունէութիւնից և թէ հոգաբարձական գործերից յայտնւում է, որ այդ և յաջորդ տարիներում վիճակային հոգևոր և Արղութեան դպրոցները ունեցել են միացած հոգաբարձութիւն, բայց մուտքերն ու ծախսերն եղել են ջոկ, իրարից բաժան։

Դպրոցի բիւդճէն է 1876 թուին մուտք 15197 ր. 23½ կ. ելք 5937 ր. 32 կ. առ մէկն յունուարի 1876 ամի 9436 ր. 32 կոպէկ։ Տարեայ բուն մուտքն է (15197 ր. 23½ կ.—10622 ր. 17½ կ. որ է դպրոցի դրամագլուխը) 4675 ր. 5 կ. այս պարզ հաշիւը ցոյց է տալիս, որ դպրոցի ընթացիկ տարեայ մուտքը պակաս է ելքից (5937 ր. 32 կ.—4575 ր. 5 կ.) 1362 ր. 27 կոպէկով, որով և դրամագլուխն իջնում է 9436 ր. 92 կ. Այս տարում կրպակների շինութեան վրա ծախսել է 848 ր. 50 կ. դպրոցի բոլոր ծառայողներին 4386 ր. 85 կ. նորոգութիւնների, դիւանական և այլ ծախսեր 701 ր. 97 կոպէկ։

Մուտքերը նոյն յօդուածներից են, ինչպէս արդէն տեսանք նախընթացում. այս տարի ուսման վարձը հասել է 2058 ր. 34 կ.

1877 թուին ռուս-թուրքական պատերազմի պատճառով, դպրոցի հոգաբարձութիւնը տատանման մէջ է թէև, սակայն սեպտեմբերին բաց է անում դպրոցն ու սկսում դասերը։ Բայց հոկտեմբերից հարկադրւած է լինում դպրոցը վերաւոր և հիւանդ զինուորների համար զինուորական վարչութեանն յանձնել։ Հոգաբարձութիւնը որոշում է տալ ուսուցիչներին ոչ միայն ծառայած ամիսների ռոճիկը լրիւ, այլ նաև յետագայ երկու ամսի ռոճիկը կանխիկ. այդպէս էլ անում է. ուսուցիչներն ստանում են, ինչպէս այդ ցոյց են տալիս հոգաբարձական ժողովների արձանագրութիւնները մինչի յունուար իրենց ռոճիկները լրիւ։

Դպրոցի փակւելով, սակայն, հոգաբարձութիւնը չի դադարում գործելուց, մի կողմից

եկամուտներն է գանձում, միւս կողմից աշխատում է Փրկչի նոր կրպակների քրէհն աւելացնել, ի նկատ առնելով պատերազմի առթիւ եղած աղողութիւնը։ Ինչպէս գիտենք, այդ կրպակներն արդէն 1876 թւի վերջերքից պատրաստ և քրէհով են տրւած զանազան անձանց։ Սկզբի տարեայ վարձն եղել է 100—120 բուբլի այժմ աւելի քան կրկնակին է։ Այս և մասամբ յաջորդ շրջանի հոգաբարձուների անձնուէր աշխատանքին է պարտական Փրկչի դպրոցը, որ այժմ մօտ 10000 ր. արդիւնք է ստանում Փրկչի շուրջը շինած հին ու նոր կրպակներից։

1876 թուին դպրոցն ունեցել է մուտք 4912 ր. 46 կ. ելք 4278 ր. 76 կ. առ մէկն յունուարի 1878 ամի մնում է դրամով 653 ր. 70 կոպէկ։ Հաշուեմատեանից չի երևում թէ ինչ է եղել դպրոցի 1876 թւից մնացած 9436 ր. 32 կ. դրամագլուխը։ Յաջորդ 1878 թւի մատեանի մէջ չէ մուծւած նաև այդ 653 ր. 70 կ. նախընթաց տարեայ յաւելեալը։

1878—79 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

Ռուս-թուրքական պատերազմի պատճառով կորչում է մի ուսումն. տարի։ Դպրոցն իր կեանքն սկսում է 1878 թւի սեպտեմբերի 9-ից։ Կան 3 դասարան, 3 պատրաստական և 1 զուգընթաց բ. և 2 զուգընթաց տ. պատրաստականներ։ Աշակերտ. թիւն է 324 տեղաւորւած են 9 բաժանմունքում։ Չորրորդ դասարան չկայ։

Տարեայ սկզբին ռուսերէնի ուսուցիչ է դեռ Полтавцевъ-ը. ապա հրաւիրուում է Ամիրան Մանդինեանը. ապրիլի կէսից հրաժարուում են Վ. Գեօնչեան և Ս. Գրիգորեան, նրանց տեղը հրաւիրուում են Մ. Իսահակեան և Ս. Տէր-Մելքիսեդեկեան, երկուսն էլ աւանդում են հ. լեզու ստորին բաժանմունքներում։ Տարեայ սկզբից հրաժարուում է Ա. Մխիթարեան,, նրա տեղ հրաւիրուում է Մուշեղ Մամիկոնեան հայոց լեզուի և թուաբանութեան համար։ Երգի ուսուցիչ է հրաւիրուում Ա. Ասլանեանը։ Մանկավարժական ժողովներ եղել են 23. սեպտեմբերի 23-ի նիստում մանկավարժական ժողովն ընտրում է հ. լեզուի համար Ղ. Աղայեանի մայրենի լեզուն ա. բաժնի և մի զուգընթացի համար, միւս զուգընթացի բ. բաժնի և բ. և գ, դպսարանների համար Տէր-Ղևոնդեանի. գ. բաժնի և ա. դասարանի համար Հ. Ղուկասեանի «Ընթերցարանը»։ Թէ ով, ի՞նչ առարկայից քանի՞ դաս է աւանդում.—

1. Մ Արաբաջեան կրօն 12 դաս.
2. Ա. Արշակունի թուաբանութիւն 24 դաս.
3. Ա. Ամիրեան ռուսաց լեզու 22 դաս.
4. Ա. Ասլանեան, երգ 18 դաս.
5. Մ. Ք. Տէր-Պետրոսեան կրօն, 6 դաս.
6. Յ. Տէր-Սարգսեան վայելչագրութիւն հայոց և ռուսաց 25 դաս.
7. Ա. Սիմէօնեան աշխարհագրութիւն 4 դ.
բնագիտութիւն 2 դ.
8. Ա. Մանդինեան ռուսաց լեզու 12 դ.
9. Հ. Ղուկասեան հ. լեզու 5 դաս.
ընդհանուր պատմութիւն 7 դաս.

բնակ. պատմութիւն 1 դաս.
10. Մ. Տէր-Սարգսեան հ. լեզու 12 դ.
Հայ. պատմութիւն 2 դաս.
Գծագր. և նկարչութիւն 6.
Երկրաչափութիւն 4.
11. Մ. Իսահակեան Հ. լեզու 20 դաս.
12. Ս. Տէր-Մելիքսեդեկեան հ. լ. 18 դ.

Դպրոցի հաշուեմատեանից երևում է, որ դպրոցի ուսուցիչներն ու միւս ծառայողները դպրոցի բացումից յետոյ ստացել են ամսական 439 ր. 71 կոպ, որ ողջ ուսումն. տարեայ համար կանէ 5276 ր. 52 կ.

Ուսուցչաց ռոճկի աւելանալը, այսինքն դասագնի բարձրանալը սերտ կերպով կապուած է դպրոցի եկամուտների աւելանալու հետ։

Դպրոցի բիւդճէն է.—մուտք 8640 ր. 70 կ. ելք 2554 ր. 21 կ։ առ վէկն յունուարի 1879 թ. 5086 ր. 49 կ. Այս թուի դպրոցի ելքի քիչ լինելու պատճառն է ուսումն տարեայ (1878—79) միայն առաջին կիսին ուսուցչաց ռոճիկ տալը, քանի որ 1878 թ. յունուարից մինչի սեպտեմբեր դպրոց չի եղել. իսկ մինչի դեկտեմբերի վերջը դպրոցի բոլոր ծառայողներն ստացել են 1748 ր. 34 կ.

Մուտքը կազմուել է հետևեալ աղբիւրներից։ ա. նոր խանութներից 2592 ր. 90 կ. բ. Մութաֆեանի ընկերակցութեամբ շինած խանութներից 667 ր. 22 կ. գ. Աստուածածնի խորանից և պատկերի շրջեցնելուց 4465 ր. 90 կ. դ. ուսման վարձ 864 ր. և այլ մուտք 40 ր, 70 կ.

Մինչի 1878 թուի նոյեմբերը գործում է հոգաբարձութեան հին կազմը, երբ Գէորգ կա-

թուղիկոսի հաստատման կոնդակով մտնում է պաշտօնի մէջ հոգաբարձական նոր կազմ։ Յանձնողական ստացողականներ չկան։ Նոր հոգաբարձուք են.—Նախագահ հոգաբարձութեան՝ Գէորգ վարդապետ Սուրէնեան, անդամներ՝ Ալէքսանդր քահանայ Ամատունի, Պետրոս Զիթողցեան, Գէորգ Ղասապեան, Աղէքսանդր Լալայեան։

Տարւոյս առաջին կիսամեակում հոգաբարձութիւնն ունեցել է 15 հերթական նիստ, կազմել է ուսուցչական խումբ, արել է հարկաւոր ծախսերն ու գանձել դպրոցի եկամուտները։ Երկրորդ կիսի նիստերի արձանագրութիւններ չկան։

Չկան նաև մանկավարժական ժողովների արձանագրութիւններ։ Ուսումն. տարին սկսւել է սեպտեմբերի 9-ին, վերջացել յունիսի սկիզբը։ Հրապարակական հարցաքննութիւններից յետոյ 324 աշակերտներից փոխադրում են 212, մնում են 112, որ անասելի մեծ % է կազմում։

Պէտք է ասել, որ ընդհանրապէս դպրոցը մի քիչ ետ է գնում, նրանից լաւ ուժերի հեռանալու պատճառով, ինչպէս են Բէկնազարեան, Աղայեան, բժ. Գ. Յովհաննիսեան և այլն։

Մանկավարժական ժողովի գործերից երևում է, որ հոգևոր վիճակային դպրոցը կազմել է Արղութեան օրիորդաց դպրոցի համար մի ծրագիր։ Հետևեալ տախտակը ցոյց կուտայ թէ ինչ առարկաներ էին աւանդւելու այնտեղ և քանի՞ դասով.

ԱՌԱՐԿԱՆԵՐ	ԴԱՍԱՆՄՈՒՆԹՆԵՐ				
	IV.	III.	II.	I.	Գումար.
1. Կրօն.	2	2	2	2	8
2. Հ. լեզու.	5	5	5	12	27
3 Ռ. լեզու	5	5	4	—	14
4 Հ. պատմ.	1	1	—	—	2
5 Ընդհ. պատմ.	3	2	—	—	5
6 Աշխարհագր.	2	2	—	—	4
7. Թուաբանութիւն.	3	3	4	4	14
8. Գծագր. նկարչ.	1	1	2	—	4
9. Բնագիտութիւն.	2	2	—	—	4
10 Բնական պատմ.	1	—	—	—	1
11. Վայելչագր. Հ.	—	1	2	—	3
12. » Ռ.	—	1	2	—	3
13. Երգ.	2	2	2	2	8
14. Ձեռագործ.	3	3	3	4	13
	30	30	26	24	113

1879–80 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ.

Գործում է հոգաբարձական նոյն կազմը. նախագահն է Գէորգ վարդապետ Սուրէնեան։ Փետրուար ամսին, սակայն լրացւում է հոգաբարձական կազմը Գէորգ կաթուղիկոսի № 36 կոնդակով հաստատւած նոր հոգաբարձուներով՝ Հաճիպաշ Կարապետեան, Աստուր Իսահակեան և Արշակ Խան-Անուշեան։ Հեռացել են

Պետրոս Ջիլթողցեան, Ադ. ք. Ամատունի։ Հոգաբարձական ժողովների արձանագրութիւններ պակասում են։ Կայ 1879 թուի եւ մտից մատեանը։ Նրանից քաղելով գտնում ենք, որ 1879–80 ուսումն. տարում դպրոցում պաշտօնավարում է նոր հրաւիրուած տեսուչ Աբիսողոմ Յովհաննիսեան ամսական 83 ր. 83 կ. ռոճկով, Մին. ք. Տէր-Պետրոսեան 12 ր. 94 կ. Հ. Ղուկասեան 70 ր. Գ. Տէր-Պետրոսեան 51 ր. 91 կ. Գ. Շահբուդաղեան 42 ր. 40 կ. Ա. Ամիրեան 58 ր. 33 կ. Մ. Տէր-Սարգսեան 41 ր. 66 կ. Մ. Ա-բրաՀեան 30 ր. բժ. Գ. Յովհաննիսեան 15 ր. Ա. Մխիթարեան 33 ր. 33 կ. Ա. Արշակունի 38 ր. 50 կ. Յ. Տէր-Սարգսեան 25 ր. Յ. Ասգաբեան 22 ր. 22 կ. Գ. Բունեաթեան 18 ր. 75 կ. դպրոցի մնացած չորս այլ ծառայողների հետ 595 ր. 37 կ.

1879 թուի մուտքն է 6488 ր. 18 կ. նկը 6471 ր. 49 կ. առ 1-ն յունուարի 1880 թ. 16 ր. 68 կ. չէ վճարուած դեկտեմբերի ռոճիկ 595 ր. 37 կ., որ վճարուում է յաջորդ տարում։ Անբացատրելի է մնում, թէ ինչու մուտք չէ գրուած 1878 թ. մնացորդ 5086 ր. 49 կ. չեն ցոյց տրուած և դպրոցի մուրհակներով սահանալիքները։

Այս ուսումն. տարուայ սկզբից բացուում է նորից չորրորդ դասարան, որով և պէտք է բացատրել սովորական ծախսի աւելանալը։

Այս տարուայ հաշուեմատեանն արդէն ցոյց է տալիս, որ դպրոցն արտակարգ ծախսեր չի ունեցել, իսկ եկամուտները գլխաւորապէս կազմում են դպրոցի կալուածներն ու թոշակադրամները։

1879 թուին սկսում է իրականանալ, դեռ Ներսէս V-դի ժամանակ ծրագրուած, դպրոցի նոր շէնք շինելու ծրագիրը. այս թուից կամ ուսումնարանական այս 1879–80 տարուանից ձեռնարկում է դպրոցիս հոգաբարձութիւնն այդ շէնքին։

Աշակերտների ընդհանուր թիւն է 315, որ տեղաւորուած են 10 բաժանմունքում՝ 4 դասարան, 3 պատրաստական՝ 3 դուզընթացներով։

Դպրոցի գործերի մէջ այս տարուայ մանկավարժական ժողովների արձանագրութիւններ չեն մնացել։ Նոյնը կարող ենք ասել նաև հոգաբարձութեան մասին։

1880–81 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

Գործում է հոգաբարձական նոր կազմը։

Հոգաբարձական և մանկավարժական ժողովների արձանագրութիւններ չկան, ինչպէս և գործեր։ Եղած հաշուեմատեանից և օրագրական ցուցակներից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները. 1880 թուին մուտք է եղել 31182 ր. 24 կ. ծախք 29300 ր. 48 կ. առ մէկն յունուարի 1881 ամի 1881 ր 81 կ.

Մուտքը կազմուել է դպրոցի դրամագլխի գանձելուց (16320 ր. 50 կ.), որ մեծ մասն (13507 ր. 40 կ.) եղել է նախկին հոգաբարձու Յ. Վանեցեանի մօտ, իսկ մնացածը գոյացել է խորանի և դպրոցի կալուածների եկամուտներից, թոշակագրամներից և այլն։

1880 թուին հոգաբարձութիւնն սկսել է ս.

Փրկիչ եկեղեցու մօտ նոր դպրոցական շէնք կառուցանել, որի համար այդ տարում բաց է թողել 16191 ր. 50 կ. ուսուցչական խմբի վրա ծախսել է մօտ 8000 ր. Արղութեան դպրոցին տուել է փոխարինաբար 2788 ր. 62 կ. մնացածը ծախսուել է նորոգութիւնների և այլ պէտքերի համար։

Անցեալ ուսումն. տարուանից արդէն դպրոցի տեսուչն է Աբիսողոմ Յովհաննիսեանը, խումբը կազմուած է հետևեալ թեթև փոփոխութիւններով, ըստ որի հեռացել է մէկը, հրաւիրուել են երեքը հրաւիրուել է Ա. Ալլահվերդեան 60 ր. 97 կ. ամսական ռոճկով, Խ. Դիլանեան 38 ր. 10 կ. Ս. Գրիգորեան. հեռանում է դպրոցից Շահբուդաղեան։

Այս երկու ուսումն. տարիների ուսուցչական կազմը ցոյց է տալիս, որ հոգաբարձութիւնն աշխատում է դպրոցը բարձրացնել, ուստի և հրաւիրում է բարձրագոյն կրթութեան տէր տեսուչ և ուսուցիչներ։ Այս տարում այդպիսիների թիւը չորս է արդէն։ Այս և յաջորդ տարիների շրջանը համեմատելով Բէկնազարեանի, Աղայեանի և Գ. Յովհաննիսեան շրջանի (1872–76 թ.) հետ, սա կարելի է նրա շարունակութիւնը հաշուել, այն տարբերութեամբ, որ այժմ դպրոցը մի քանի քայլ առաջ է գնացել, մինչդեռ միջին շրջանում նա համեմատաբար յետադիմել էր և ուսման ծրագրով և դասատուների կրթութեան ընդհանուր մակերևոյթով։ Ապահով կարելի է ասել, որ մեր դպրոցի ծաղկման (1868—85 թ.) շրջանի մէջ 1880—85 թուերին ամենափայլուն տարիներն են,

երբ դպրոցը ցասել է իր անուան ամենաբարձր հռչակին։

Դպրոցն ունի 13 բաժանմունք. 420 աշակերտ. փոխադրել են 300, մնացել 104. աւարտել հեռացել 16 աշակերտ։

ԴՊՐՈՑԻ ՇԻՆՈՒԹԻՆԸ

Ինչպէս նախընթաց պատմութիւնից տեսանք. հոգևոր դպրոցի եղած (հին) շէնքը բաւարարութիւն չէր տալիս, ուստի և քանիցս դիմումն է եղել նոր շէնք կառուցանելու, բայց ապարդիւն։

Հին շէնքի տեղի մասին եղած բոլոր գրութիւններն ու ժամանակակիցների ցուցմունքներն այն են ասում, որ այդ տեղը պատկանելիս է եղել հոգևոր դպրոցին։ Դպրոցի յետին կողմը, Գենեբալսկի փողոցի վրա, շինուած են եղել Աստուածածին եկեղեցու միջոցներով մի շարք կրպակներ, որոնց եկամուտները գնում էին նախ Աստուածածնայ ծխ. դպրոցի վրա մինչև որ Արղութեան դպրոցը դառաւ ըստ էութեան Աստուածածնայ եկեղեցու միջոցներով կառավարուող մի դպրոց, նրա եկամուտները մտան այդ դպրոցի գանձարկղը։ Այդ հողաբաժինն, ինչպէս արդէն ասել ենք, բաժանուել է 2 մասի, մի մասը մնացել է դպրոցին, ուր շինուել է դպրոցական շէնք և եկեղեցական կրպակներ, իսկ միւս մասն անցել է յաջորդաբանին։ Փրկչի դաւթում նոր շէնքի կառուցանելուց յետոյ, հին շէնքն յանձնուում է Արղութեան դպրոցին, որն

և օգտուում է նրանից մինչի դպրոցների փակումը (1885 թ.)։ Կալուածների գրաւելուց առաջ այդ շէնքը, փլատակ արդէն, քանդում են կըրպակների հետ միասին, նրա տեղը մի նոր շէնք շինելու համար։ 1897 թուին, միանգամայն անբացատրելի կերպով այդ տեղը համարւում է էջմիածնապատկան, ու նրա վրա շինութիւն է շինել տրւում ոչ այլ կերպ, քան եկամուտի ⅓ մասը էջմիածնին հասցնելու պայմանով։ Այդպէս էլ լինում է։ Այդ տեղի ½-ը դեռ ամայի է։

Այսպէս 1880 թուին ձեռնարկւում է հին այդ շէնքից ազատւելու համար նոր դպրոցական շէնք կառուցանելուն։

Այդ շէնքի համար պահւած առանձին հաշիւմատեանից տեսնում ենք, որ դպրոցը դրա վրա ծախսել է 18335 ր. 99 կոպէկ։ Շինութեան վերակացուք են Հաճիպապ Կարապետեան, Մանուկ Կարապետեան, Մանուկ Խումարեան։

Շէնքն ընկնում է ս. Փրկիչ եկեղեցու գաւթի հարաւային և արևմտեան ճակատների վրա, սրբատաշ սև քարով, պարզ, մի յարկանի, հոդածածք։

Ամբողջ շէնքն ունի մի մեծ դահլիճ և 9 սենեակ, որոնց եօթի մէջ այժմ տեղաւորւած են դպրոցի եօթը բաժանմունքները, մի սենեակ յատկացրած է տեսչին և մի սենեակ էլ ուսուցչաց համար։ Սենեակներն են լուսաւոր, բարձը, բոլորի դռները բացւում են դէպի մի ընդհանուր միջանցք, դպրոցն ունի մի գաւիթ և ահա այս քանի տարի է նաև մարմնամարզութեան համար նաև մի քանի յարմարութիւններ։

Դպրոցական այս փառաւոր շէնքի սկզբնաւորութեանը շատ է աշխատել իր ժամանակի ընկերակից հոգաբարձուների աջակցութեամբ Գէորգ վարդապետ Սուրէնեանը (այժմ Վեհափառ Հայրապետ Կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. Գէորգ V) Ալէքսանդրապոլի հայրապետական փոխանորդ եղած ժամանակ։

Դպրոցի նոր շինութեան գլուխ գալու գործում երախտիքներ ունի և Յուսիկ վարդապետ Մովսիսեանը (այժմ Յուսիկ արքեպիսկոպոս Սինօդի անդամ և տեղակալ)։

Դպրոցը նոր շինութեան մէջ է արդէն. 1883 թ. իսկ հին շինութեան մէջ տեղաւորւել է Արդութեան օրիորդաց դպրոցը մինչի 1885 թիւը։

Ներկայ շինութիւնն արդէն չի բաւարարում եղած կարիքը. հարկաւոր է ոչ միայն նրա հողեայ ծածկը փոխել, այլ նաև երկրորդ յարկ շինել, դպրոցի աճող պէտքերին բաւարարութիւն տալու։ Զունենք զրադարան, ֆիզիքական կաբինետ, փորձնական դասերի համար յատուկ սենեակ իր յարմարութիւններով, դահլիճն անշուք է և ծառայում է իբր դասարան, և այլն։ Ինչպէս անցեալ սերունդն աշխատեց ժամանակի պահանջին առաջ գնալ և կառույց այս շէնքը, այնպէս էլ ներկայ սերնդին է մնում լրացնել այդ պակասը։

Ներկայ հոգաբարձութիւնք լի է յոյսերով, թէ դպրոցի 70-ամեայ գոյութիւնը ոգնելով, դրա հետ միասին պիտի կարողանայ նաև դպրոցի շէնքի այդ պակասը հասարակութեան աջակցութեամբ լրացնել։

Դպրոց

1881—82 ՈՒՍՈՒՄՆ ՏԱՐԻ

Հոգաբարձական կազմը նոյնն է. նախագահն է Յուսիկ վ. Մովսիսեան։ Պակասում են հոգաբարձական և մանկավարժական ժողովների գործեր։ Մեր տեղեկութիւնները քաղում ենք 1881 թ. ել և մտից մատեանից։

1881 թւին դպրոցն ունեցել է մուտք 14315 ր. 4 կ. ելք 11836 ր. 25 կ.

Ուսուցչական խումբն ստանում է ամսական 694 ր. դպրոցի միւս ծառայողների հետ միասին 739 ռուբլի, որ անում է մի ամբողջ ուսումնար. տարեայ համար 8868 ռուբլի։ Մնացած գումարները ծախսւել են ընթացիկ տարեայ կարիքների վրա և դպրոցական նոր շէնքի վրա (աւելի քան 3500 ր.)։

Դպրոցն այս տարեանից ձեռք է բերում եկամուտի նոր աղբիւր—մոմավաճառութիւնը։ Դեռ 1879 թւի դեկտեմբերի 8-ին № 25 յայտարարութեամբ դիմել է դպրոցիս հոգաբարձութիւնը Գէորգ կաթուղիկոսին և խնդրել քաղաքիս մոմավաճառութեան արդիւնքն յատկացնել հոգևոր վիճակային դպրոցին։ 1880 թւի մայիսին սինոդի № 3235 հրամանով այդ իրաւունքը տրւում է, սակայն տեղիս հոգևոր կառավարութիւնը ոտնձգութիւններ է անում։ Օրինակ գործը խանգարելու և ձգձգելու համար, նախ մի գրութեամբ № 1020 (10-ն յուլիսի) գրում է հոգաբարձութեանը, թէ ինքը—Հոգևոր կառավարութիւնը—տեղեկութիւն է տւել սինոդին, որ Ալէքսանդրապոլում մոմավաճառութեան յատուկ պահարան չկայ։ Այս ոտնձգու-

թիւններին վերջ տալու համար 1881 թւին, մայիս ամսին հոգաբարձութիւնը մի յատուկ պատգամաւորութիւն է ուղարկել Էջմիածին մոմավաճառութեան այդ խնդիրն առ տեղեաւն լուծելու համար։ Եւ այդպէս էլ լինում է. կաթուղիկոսն ու սինոդը յարգում են հասարակութեան խնդիրը և մոմավաճառութեան գործը վերջնականապէս յանձնում վիճակային դպրոցին։ Դպրոցի 1881 թւի հաշուեմատեանից երևում է, որ կէս տարեայ մէջ դպրոցն ստացել է մոմավաճառութիւնից 892 ր. չափ արդիւնք։

Դպրոցը կազմւած է 4 դասարանից և 3 պատրաստականներից՝ իրենց զուգընթացներով, բոլորը 14 բաժանմունք։

Ուսուցչական կազմի մէջ փոփոխութիւն է մտել. հեռացել են Աբիս. Յովհաննիսեան, Գ. Տէր-Պետրոսեան, Խ. Դիլանեան և Գ. Բունիաթեան. տեսուչ չկայ. նոր հրաւիրւել է Գ. Երզնկեան, Ս. Վեհապետեան, բժ. Խ. Բունիաթեան, Ն. Շահլամեան, Յակոբ Տիգրանեան, Մ. Պողոսեան և Ղ. Ղազարեան։

Ուսումն. տարին սկսւել է սեպտեմբերի 9-ին, վերջացել մայիսի 31-ին. մի համառօտ տեղեկագրից իմանում ենք, որ տարեայ մէջ տեղի են ունեցել 32 մանկավարժական ժողովներ։

Այս ուսումն տարեայ վերջը տեղի ունեցաւ հայ դպրոցների կեանքի համար խիստ նշանակալից մի ժողով. դա Կովկասեան հայ ուսուցչական առաջին ժողովն էր։ 1882 թ. յունիսին կայացած այդ ժողովին ներկայ լինելու համար

Ալէքսանդրապոլի հոգևոր դպրոցի մանկավարժական ժողովի կողմից ցանկութիւն են յայտնել գնալ Հ. Ղուկասեան, Ա. Ամիրեան, Մ. Ք. Տէր-Պետրոսեան, Մ. Տէր-Սարգսեան, Ս. Վեհապետեան, Յ. Աբգարեան։

1882—83 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

Հոգաբարձութիւնը նոյնն է մինչի հոկտեմբեր, որից յետոյ պաշտօնի է մտնում նոր կազմը. կան միայն տարուոյս երկրորդ կիսի մի քանի արձանագրութիւններ։

Տեսուչ չկայ, ուսուցչական խումբը կազմուած է 13 ուսուցչից։ Նոր հրաւիրուած են Յ. Տէր-Միրաքեան, Գ. Տէր-Գաբրիէլեան, Կ. Առաքելեան, Ա. Բաբայեան, հեռացել են Գ. Երզնկեան, բժ. Խ. Բունիաթեան, Յ. Տիգրանեան։

Ուսուցչաց ռոճիկն է սեպտեմբերին՝ դպրոցի այլ ծառայողների հետ միասին 683 ր. 86 կ. բայց հոկտեմբերից խմբի անդամների թիւն աւելանալու համար ռոճիկը բարձրանում է ամսական 802 ր. 78 կ. տարեկան 9633 ր. 36 կ. 1882 թ. մուտքն է 15228 ր. 58 կ. ելքը 15341 ր. 33 կ. առ մէկն յունուարի մնում է բաց 113 ր. 25 կոպէկ։

Հոգաբարձական արձանագրութիւններից երևում է, որ հոգաբարձական նոր կազմի մէջ են—Ամատունի, Տիգրանեան, Լալայեան, Սբորշչիկեան։

Այս կազմը յունիսի 6-ի իդ 28-րդ նիստում որոշում է եկող 1883—84 ուս. տարեայ

համար տեսուչ հրաւիրել բժ. Գ. Յովհաննիսեանին մի տարի ժամանակով 1200 ր. ռոճկով և շաբաթական 10 դասով։ Նոյն գործերից տեսնում ենք, որ տեսուչը մասնակցել է հոգաբարձական նիստերին. Յաջորդ նիստում որոշում է ա. պատրաստականի զուգընթացները փակել և եկող սեպտեմբերից նոր ընդունելութիւն չանել։

Դպրոցն ունի 4 դասարան I դասարանի մի գ. բ. և ա. պատրաստականի երկուական զուգընթացներ, 564 աշակերտով։

1883—84 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

Գործում է հոգաբարձական նոյն կազմը, կան ժողովների արձանագրութիւններ։

Տեսուչն է բժ. Գ. Յովհաննիսեան. նոր հրաւիրուել են Ն. Փիրումեան, Վարաժեան, Յ. Տէր-Աւետիսեան, Ա. Բրուտեան, Զարչօղլեան, Տէր-Գասպարեան, Ամատունի, Ս. Շիրակունի, Ն. Տէր-Վարդանեան, սոքա դպրոցի միւս ծառայողների հետ միասին ստանում են տարեկան 9888 ր. 84 կ.

Դպրոցն ունի նոյն չափ դասարաններ, իսկ բոլոր բաժանմունքների թիւն է՝ 16. աշակերտներինը 752. որովհետև տարեայ սկիզբը 350 խնդիր է տրուած լինում, ուստի և հոգաբարձութիւնը որոշում է երեք հատ թաղային ծխական դպրոց բանալ Լուսաւորչի, ս. Նշանի և Աստուածածնայ, որով և պիտի բացատրել ուսուցչական խմբի 23 հոգուց բաղկացած լինելը։

Մանկավարժական ժողովն այս տարի ունեցել է 26 նիստ և զբաղուել զանազան ընթացիկ խնդիրներով։

Հրապարակական հարցաքննութիւններ դեռ կան, այս 1արում մանկավարժական ժողովի որոշմամբ նոքա սկսուում են մայիսի 18-ին։

Քննութեան արդիւնքն է, փոխում են 444, անպայման մնում են 196, վերաքննելի 112։ Այս տարի, հակառակ իր որոշման դպրոցը բաց է անում I բաժնի 2 զուգընթաց մէկը՝ Լուսաւորչի և միւսը ս. Նշանի ծխական դպրոցներում։ 1883 թուին դպրոցի մնացն է 13933 ր. 22 կ. մուտքը 13950 ր. 77 կ. առ մէկն յունուարի 1884 ամի մնում է 17 ր. 55 կոպէկ։

1884–85 ՈՒՍՈՒՄՆ։ ՏԱՐԻ

Հոգաբարձութիւնը մնում է նոյնը, ժողովների արձանագրութիւններ չկան։ Դպրոցի տեսուչ է հրաւիրուած Գ. Տէր-Պետրոսեանը։ Ուսուցչական խմբին աւելացել են նոր ուժեր Իսահակ Թոխաթելեան, Դաւիթ Կարապետեան, Յ. Տէր-Պետրոսեան, Մ. Տէր-Մարտիրոսեան, Աղասի Պահլաւունի, Ստեփան Մամեան, Ե. Գեադուկեան, Ա. Շաթիրեան, Պ. Զախալեան, հեռացել են Փիրումեան, Զարչօղլեան, Շիրակունի, բժ. Գ. Յովհաննիսեան, Հ. Ղուկասեան։ Այս խմբի ժողովներն սկսել են օգոստոսի 16-ին, երբ արւում է դասագրքերի ընտրութիւն։

Աշակերտների ընդունելութիւնից յետոյ մանկ. ժողովի III նիստում պարզուում է, որ

այս տարի պիտի ունենայ դպրոցն իր մասերով 18 բաժանմունք, որից I բաժ. 4 հատ. II բաժ. 4 հատ. III բաժ. 4 հատ. I դաս. 3 հատ. II, III և IV դասարաններ։ Աշակերտների թիւն է 850, ամենաշատը հոգևոր դպրոցի ամբողջ գոյութեան ընթացքում։ Սկզբի բաժանմունքներում սովորական է եղել 60-ական աշակերտ ունենալն։

Ուսուցիչներն ստացել են ռոճիկ ամսական 546 ր. 43 կ. տարեկան 6557 ր. 26 կ. նախընթացի համեմատ վարձատրութեան չափն ընկել է։

1884 թ. տարեկան մուտք 12348 ր. 33 կ. ելք 12003 ր. 48 կ. առ 1-ն յունուարի 1885 թ. մնացորդ 344 ր. 85 կ.

Այս ուսումնարանական տարին ինչպէս յայտնի է, կիսատ է մնում 1885 թուի մարտի 8-ին հայ դպրոցների փակելու պատճառով։

1885 թուի մուտք մինչև սեպտեմբերի 3-ը 4359 ր. 28 կ. ելք մինչի հոկտեմբեր 3880 ր. 35 կոպ. առ ձեռն մնում է 475 ր. 90 կոպ. այստեղ մուտք չէ գրած 1884 թուի մնացորդն ու դպրոցի միւս եկամուտները մինչի 1885 թուի վերջը։

Այս շրջանին իբր վերջաբան կարող ենք ասել, որ ոչ Շուշին և ոչ նոյն իսկ Երևանը չեն ցոյց տուել իրենց հոգևոր դպրոցները (սեմինարիաները) յառաջ տանելու այնպիսի սէր և ձգտումն, ինչպէս Ալէքսանդրապօլը։ Այն ժամանակ, երբ տեղիս վիճակային հոգևոր դպրոցը չորս դասարանի հասաւ, յիշեալ երկու սեմինարիաները խեղճ երկդասեան դպրոցներ էին

ու տան և աւելի տարիներից յետոյ չորս և հինգ դասարանեան դարձան։

Դպրոցի դրութեան այս շրջանում գործել են Ալէքսանդրապոլու մի քանի բարեգործական ընկերութիւններ, որոնք որևէ կերպ նպաստել են թէ դպրոցին և թէ դպրոցի չքաւոր սաներին։ Դրանցից մէկը – Ընթերցասիրաց ընկերութիւնն իր բոլոր գրքերը թողել է դպրոցին։ Այդ ընկերութիւնն ունեցել է հոգևոր դպրոցում մի ընթերցարան, բերել է աւել զանազան լեզուով գրքեր և լրագրեր։

Մի ուրիշն եղել է վիճակային և ապա Սհականուշեան օրիորդաց դպրոցների չքաւոր աշակերտներին ձրիաբար գիրք և դասական պիտոյքներ բաժնող որբախնամ բարեգործական հիմնարկութիւն։ Այս ընկերութեան տուած դասական ամեն տեսակ պիտոյքների ցուցակն սկսած 1868 թւից մինչի դպրոցների առաջին փակումն, պահուած է դեռ դպրոցի գործերի մէջ։

Բացի դրանից մի խումբ մարդոց ջանքերով բացուել է մի դրատուն, որտեղ ծախսած դասագրքերից և այլ գրքերից մնացած զուտ արդիւնքը մտել է վիճակային դպրոցի գանձարանը։

ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

աւանդելոց ի Վիճ.-Հոգևոր դպրոցի Հայոց Ալէքսանդրապոլու.

Կազմեալ 187¹/₂ ուսումնական ամի

ԴՊՐՈՑԻ ՄԷՋ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՏԻԺԸ ՈՐՊԷՍ ԿՐԹՈՂԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐԻՑ ՄԻՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ ԹԷ ՈՉ։

(Ղ. Աղայեան)

Այս վերնագրին կարելի է մի կարի համառօտ պատասխան տալ, այն է «ոչ». բայց որովհետև մի սոսկ բացասական պատասխանը չի կարող բաւականացուցիչ համարուել, թէ այն անձանց համար, որոնք ծանօթութիւն չունին ներկայ ժամանակի դաստիարակութեան հետ և թէ պատժի գործադրութեանը ընտելացած վարժապետների, որոնց համար պատիժն այնքան անհրաժեշտ է, որքան դարբնի համար իւր կռանն ու սալը. այս պատճառով հարկաւոր եմ համարում նախ մի հարևանցի հայեացք դարձնել մեր աշակերտաց բնաւորութեան և նոցա յանցանք համարուող թերութիւնների վերայ, և ապա այն հնարի, որով միայն

հնարաւոր է արմատախիլ անել յիշեալ թերութիւնքը։

Ուրիշ մինչև տասնըչորս տարեկան աշակերտներին կարելի է մօտաւորապէս երեք կարգի բաժանել ըստ նոցա բնաւորութեան։

1) Կան աշակերտներ, որոնք իրանց ժրաջանութեամբ, կարգասիրութեամբ և այլ գովանի յատկութիւններով տրամադրում են վարժապետներին ամենայն զգուշութեամբ և մեղմութեամբ վերաբերել դէպի իրանց։ Այնպիսեաց մէջ երբեմնապէս երևցած մեծ թերութիւնն անգամ աչքի չեն զարնում, և եթէ զարնում է, մի թեթև հայեացք է միայն դարձնում վարժապետի կողմից, որով կարծես կամենում է ասել «քեզ որպէս հասկացող երեխայի վայելուչ չէ անել այդ անկարգութիւնը»։ Աշակերտները հասկանում են վարժապետի միտքը նորա ակնարկից և վարժապետն էլ նըկատում է այդ նորա գունափոխվելուց։

2) Կան աշակերտներ, որոնք մի տեսակ մթութեան և խաւարի մէջ են։ Այսպիսեաց համար պարզ չէ իրանց բռնած ընթացքը, գիտակցաբար չէ՝ իրանց ուսումնարան գալ գնալը, երբեմն շատ վաղ են գալիս, երբեմն շատ ուշ, երբեմն ամենևին չեն գալիս։ Այսպիսիք լինում են խեղճ հանդարտաբարոյ և չափազանց վախկոտ։ Դասատան մէջ չեն ըմբռնում վարժապետի ասածները, ձեռք են բարձրացնում միամտաբար, պատասխանում են անմտաբար։ Այսպիսիք ապուշ չեն, միայն տնական կեանքը ոչ մի գիտակցութեան սերմ չի ձգել իրանց ուղեղի մէջ, այլ մեծացրել է անանաբար։

3) Վերջապէս կան աշակերտներ էլ, որոնք թէ տանը և թէ ուսումնարանումը գործ են դնում մանկական բազմատեսակ չարութիւններ։ Այդպիսիք գերազանցում են միւսներին իրանց տարօրինակ ճարպիկութեամբը և խորամանկութեամբը բայց թոյլ է այսպիսեաց բնաւորութիւնքը, ամեն դժուարութիւնից փախչում են և ամեն հեշտութեան ետևից ընկնում. չեն ընկճուում, չեն սահմանափակուում մի որևիցէ կարգ ու կանոնի մէջ, այլ հակուում են դէպի ամեն տեսակ մանկական մոլութիւն։

Առհասարակ աշակերտական յանցանքները լինում են ծուլութիւն, անհաշտ բնաւորութիւն և հակումն դէպի մի որևիցէ աննորմալութիւն։ Ծուլութեան հետևանքն է բազմիցս բացակայ գտնուիլը դասերից կամ ուշ վերա հասնիլը և ըստ պատշաճին դաս չպատրաստելը։ Անհաշտ բնաւորութեան նշանն է ընկերաց հետ խաղաղ և սիրով չվարուելը. իսկ անարգ մոլութիւն է, եթէ ցոյց է տալիս անհնազանդութեան, ստախօսութեան, գողութեան, ծխելու և այլ այս տեսակ վատաբարոյական նշաններ։ Աւելորդ չէ ասելը, որ ինչպէս թմրածութիւնը, մոռացկոտութիւնը, վախկոտութիւնը և բթամտութիւնը չեն յանցանքներ, նոյնպէս կարելի չէ յանցանք համարել և չափազանց վառվռունութիւնը և նրանից առաջացած անվնասակար վարմունքները. բայց յանցանք է դասատան մէջ անուշադիր լինելը վարժապետին և ընկերաց հետ խօսելը և այլն։ Սրանք են վերջապէս յանցանք համարուող աշակերտական թերութիւնները, որոնց առաջն առնելու համար հարկաւոր է

դաստում թեթև կամ ծանր ֆիզիքական կամ բարոյական պատիժներ գործ դնել, որոնք տեղի պիտի չունենան իմ կարծիքով կրթութեան գործի մէջ։ Ասում եմ կրթութեան, բայց որովհետև մեզանում կրթել, զարգացնել, մարզել, վարժել, ուսուցանել, սորվեցնել, ընտելացնել և այս տեսակ բառերը շատ անգամ իրարու հետ շփոթում և միմեանց փոխանակ են գործ դնում, այս պատճառով ես կամենում եմ կրթութիւն բառին մի նպատակայարմար նշանակութիւն տալ առ այժմ իմ միտքս պարզելու համար միայն։

Կրթել և զարգացնել միևնոյն նշանակութիւնը ունին, որոնք չեն նշանակիլ ոչ ուսուցանել և ոչ մարզել, այլ թէ ուսուցանելուն և թէ մարզելուն տալ այնպիսի ձև որ նոքա լինին կրթողական զարգացուցիչ։ Կրթել միայն բանականին կարելի է. իսկ անբաններին միայն մարզել և սովորեցնել առանց կրթութեան, պատճառ կրթութիւնը հոգու և մտքի հետ ունի գործ. իսկ մարզմունքը և վարժմունքը երբ հոգեկան կողմը չունին աչքի առջև չեն կրթութիւն։ Կրթութեան մէջ ուսմունքը և մարզմունքն էլ հետն է իմացւում և դեռ մի քանի բան էլ աւելի, պատճառ՝ կրթել պահանջում է մարդու բնութիւնն ամբողջապէս, այն է նրա հոգեկան և մարմնական կողմերն ի միասին։ Ոգեկանին վերաբերում է նրա խօսքը և գործը այսինքն նրա դատողութիւնն ու բնաւորութիւնը. իսկ մարմնականին, նրա ոյժը և ճարպիկութիւնը, որոնք մեծ ազդեցութիւն ունին ոգեկան կողմի վրա։ Ուսումնատուութեան

գլխաւոր միջոցն է կրթութեանն իւր նպատակին մօտեցնելու, բայց այս այն ժամանակը միայն կլինի, երբ ուսման նիւթը և նրա աւանդելու եղանակը յարմարեցրած է բուն այդ նպատակին և այդ պատճառով էլ սովորաբար ասում են այս ինչ առարկան այն ինչ բովանդակութեամբ և մեթոդով ուսուցանելը կրթողական նշանակութիւն ունի, իսկ մի ուրիշ կերպ, հակակրթական։

Կրթել մի երեխայի կընշանակէ կրթութեան միջոցաւ տրամադրել նրան մի գովանի բնաւորութիւն ստանալու և ինքնակրթութեամբ մօտենալու այն կատարելութեանը, որ վայել է իւր բնութեանը որպէս բնականի։ Կրթող հանդիսանում է մի կրթեալ մարդ, որի գործիքն է ոչ միայնակ իւր աւանդելի առարկան, այլ և իւր շնորքը այդ առարկայի նպատակայարմար աւանդելու մէջ, իւր իսկ բնաւորութիւնը, իւր ամեն մի խօսքն ու շարժուածքն իւր վաստակած յարգն ու պատիւը թէ դպրոցական և թէ հասարակական կեանքի մէջ։ Սորանից ահա երևում է, որ կրթողի կողմից աւելի մեծ պահանջ կայ, քան թէ սոսկ մի որևիցէ առարկայ ուսանողից։ Ահա այս կէտից եմ նայում կրթութեան բառի նշանակութեան վրա։ Բացի սրանից մարդուս բարոյապէս զարգացնելը ես չեմ յատկացնում մի որոշ առարկայի, այլ այդ յատկութիւնը միապէս տալիս եմ բոլոր առարկաներին, պատճառ նոքա ամէնքը միապէս կրթողական պէտք է լինին։ Մեզանում կրթութեան գործը միայն կրօնին են յատկացնում, որը իւր ոմանց ուսուցանողների շնորհիւ հա-

կառակ հետևանքի է հասցնում, պատճառ ա-
սած է «մի ծաղկից օձը թույն է շինում ճանճը
մեղը», բայց լուսաւորեալ աշխարհներում վա-
ղուց արդէն գուլբայագործութիւնն անգամ
կրթութեան են յարմարեցրած և չէ այլևս լոկ
ձեռաց վարժմունք։ Միթէ պատմական, թւա-
բանական, բնագիտական և այլ առարկաները
կրթողական և այն բարոյականնշանակութիւնը
չունեն՞, երեխայոց մէջ ինքնազարգացման և
այլ գովանի բնաւորութեան հիմք դնելու յատ-
կութիւն չունե՞ն, եթէ միայն նոցա աւանդող
ուսուցիչք առաւելապէս այդ ունին աչքի առա-
ջև և ոչ հարցաքննութեան միջոցին միամիտ
հանդիսականների աչքերը շլացնելը երեխանե-
րին բլբլացնել տալով իրանց չհասկացած բա-
ռերը։

Բանի վրա ահա այս կէտից նայելով, դառ-
նանք այժմ և հարցնենք մեզ թէ արդեօք մեր
ուսումնարանի մէջ կատարւում են այդ պայ-
մանները և ոչինչ լաւ ազդեցութիւն չեն ա-
նում երեխայոց բնաւորութեան վրա, թէ՞ չեն
կատարւում և երբէք մի այդպիսի ուղղու-
թիւն տալու ուսումնարանին փորձ չենք փոր-
ձած։ Ցայտնի է որ չենք ունեցած այդպիսի
ուղղութիւն, և որ չենք ունեցած գուցէ ասէք
դորա պատճառն այն չէ, որ մեր մէջ ոչով չկայ
որ հասկանար այդ. այլ թէ եղածներիս մէջ
գաղափարակցութիւն և համընդունակութիւն
չկայ, որ ասել է թէ մենք այժմեան դրութեամ-
բը չպիտի կարողանանք մանկավարժական կա-
նոններին խստիւ հետևող լինել։ Եթէ այս պիտի
լինի մեր պատասխանը, ես կասեմ, որ յուսա-

հատելու տեղիք չկայ և մենք կստրկացնենք
հակւելով դէպի այն կողմը, որ կողմում մե-
զանից մեծ աշխատութիւն չի պահանջւում և
չենք աշխատիլ երբէք լինելու ալնպէս, ինչպի-
սին պահանջում է դաստիարակութեան սրբա-
զան պաշտօնը։

Այս երկու ուղղութիւնից մէկը պիտի ընտ-
րենք անշուշտ կամ պիտի աշխատենք կրթել
առանց պատժելու և կամ առանց կրթելու պի-
տի պատժենք անկրթութեան նշան ցոյց տուող
աշակերտներին, միջին ճանապարհ չկայ։

Ես կարծում եմ, որ մեր ուսումնարանումը
բաղդաւորապէս չկայ և ոչ մի աշակերտ, որի
համար կարող լինէինք ասել թէ նա բարոյա-
պէս փչացած է, անուղղելի է։ Դոցա մէջ, ով որ
փոքր ինչ թոյլ է երևում բարոյապէս, դեռևս
չի կազմակերպւել բնաւորութիւն ասած բանը,
այդպիսիների վերաբերմամբ մեզանից ամեն մէ-
կը կանէ, որ եթէ նա լինէր իւր զաւակը, իւր եղ-
բայրը, ամենը որ կարող էր նորան ուղիղ ճանա-
պարհի վերա կանգնեցնել և այդ կանէր իհարկէ
ոչ երբէք պատժի օգնութեամբ, որով ունքը
շոկելու տեղ աչքն էլ կրկուրացնէր, այլ սիրով
և մարդավարութեամբ։ Բարուց վերա միայն
այս կերպով կարելի է դրական ներգործութիւն
անել. սորա հակառակ միջոցով արած ներգոր-
ծութիւնը միշտ բացասական կարող է լինել։
Բայց կան թերութիւններ, որոնք առաջ են
գալիս այս կամ այն առարկայի մէջ թոյլ
գտնւելուց, որոնք մոլեկան յատկութիւն չեն,
բայց դարձեալ պակասութիւն է, այդպիսի թե-
րութեանց համար պատժելուց առաջ եթէ նա-

խապէս քննենք նոյն իսկ առարկան թէ նա ինչպէս է սկսել ինչպէս շարունակել, ինչպիսի փոփոխութեանց է ենթարկւել և ապա ուրեմն ինչպիսի հետք թողել աշակերտաց մտքի մէջ և ինչպիսի ազդեցութիւն արել նոցա բնաւորութեան վերա.—այնուհետև մենք անշուշտ կըգանք այն եզրակացութեան, որ եթէ այդպիսի թուլութեանց համար հարկաւոր է պատժել աշակերտներին, ապա ուրեմն հարկաւոր է պատժել և վարժապետներին. հարկաւոր է պատժել և պատւելի հոգաբարձուներին, պատճառ, վարժապետները և առաւելապէս հոգաբարձուք շատ անգամ աւելի թոյլ են գտնւում իրանց գործը բարեխղճութեամբ կատարելու մէջ, քան թէ նոյն կարեկցութեան արժանի անմեղ մանուկները, որոնք դեռ չգիտեն ինչ կընշանակէ պարտք պարտաւորութիւն։ Աշակերտական յանցանքը անդրադարձութիւն է վարժապետական յանցանաց. իսկ վարժապետական յանցանքը անդրադարձութիւն է հոգաբարձական յանցանաց։ Հոգաբարձուք ե՞րբ են արել մի խստիւ ընտրողութիւն վարժապետաց վերաբերմամբ, նայելով նոցա վերա որպէս դաստիարակների։ Վարժապետները երբ են արել մի խստիւ ընտրողութեամբ համակարգութիւն աշակերտաց մէջ ըստ նոցա ընդունակութեան։ Վարժապետները ե՞րբ են արել մի խստիւ հետևողականութիւն իրանց աւանդած առարկաների և նոցա ուսուցանելու եղանակի մէջ։ Միևնոյն առարկան այսօր Կիրակոսն է դաս տալիս վաղը Մարկոսը և միևնոյն Մարկոսը միևնոյն առարկայի շարունակութեան ժամանակ այսօր տա-

քին է փչում վաղը հովին և այս բոլոր պոչաւոր յանցանքները ընկնում են անմեղ մանուկների վերա.—մէկը ապտակ է զարկում, միւսը քանոն. մի ուրիշը չոքեցնում է, չորրորդն անհաց է թողնում, մի քանիսն էլ այնպիսի պատիժներ են տալիս, որ ոչ ոքի մտքով անցած չլինի մինչև այն օրը և զարհանում իրանց հրաշալի գիւտով։

Պարոններ, ներեցէք ինձ մի համառօտ խորհրդատուութեամբ վերջ տալ իմ կարծիքին։ Բնութիւնը համաչափութիւն և կանոնաւորութիւն է սիրում. ոչ մի բան մարդկային հնարմանց մէջ այդ հրաշալի ներդաշնակութեանը այնքան համանմանելու պահանջ չունի ինչքան մարդուս կրթութեան արւեստը։ Պէտք էր որ տնական և ուսումնարանական ազդեցութիւնքը միապէս առ բարին տրամադրէին կրթողին, պէտք էր որ միևնոյն դպրոցի բոլոր վարժապետները գաղափարակից լինէին և համընդունակ. պէտք էր որ հոգաբարձուք համախոհ գտնւէին վարժապետաց հետ նոցա արդարացի պահանջումների մէջ. բայց քանի որ դոցանից և ոչ մէկը չկայ, նամանաւանդ քանի որ տան և ուսումնարանի մէջ աշակցութիւն չկայ, կամ այն է որ դպրոցը պէտք է հետևի տան ձևին, ի գործ դնելով նրա բոլոր բարբարոսական և հնադարեան վարմունքները և կամ կրկնապատկելու է իւր ոյժը և երկրցունց պարտաւորութիւնքը ինքը միայնակ կատարելու է հետևելով բոլոր հռչակաւոր դաստիարակների այն խօսքին, որ ասում են. «Երեխան որքան աւելի է ատւում տան մէջ, նա այնքան աւելի մեծ սիրոյ պիտի

և հանդիպի ուսումնարանում»։ Եւ արդարև ուսումնարանը դատարան չէ, չունի օրինօք որոշուած պատիժներ և վարժապետները այդ օրինաց կուրօրէն գործադրողները չեն։ Ուսումնարանը չէ և ուղղարան օրինօք յանցաւոր համարուած երեխաների։ Ուսումնարանը մի կըրթարան է։ Այդտեղ տալիս են անմեղ մանուկներ, որ նոքա գիտակցութիւն ստանան, ճանաչեն իրանց չարն ու բարին, մի խօսքով զարգանան բարոյապէս և մտաւորապէս։ Մեզ վարժապետներիս վերա պարտք կայ ոչ թէ պատիժների հետ ընտելացնել նրանց, այլ ամենայն բարոյական ճիգն թափել նոյն։ Իսկ ընտելացածների մէջ էլ մի աստելութիւն ձգել դէպի այդ անարգ վարմունքը։ Իսկ եթէ փոխանակ բարոյական ուժի վարժապետների ձեռքը տանք պատժելու իրաւունք, ես ամենայն հոգւով հաւատացած եմ որ այնուհետև ուսումնարանը կըդառնայ պատժարան և վարժապետները կըլինեն մի-մի դահիճ։ Եթէ նոյն իսկ մի թեթև ապտակը հրաշք է գործում, ինչպէս ասում են շատերը և ես հաւատում եմ, բայց ես հաւատալուս հետ համոզուած եմ, որ այդ հրաշագործ կեանքը մի սուրբ դաստիարակի կեանք լինելու է և ոչ մեզ պէս մեղաւորների։ Ուստի նախ և առաջ այդ սուրբը հեղինակութեանը հասնելու է ինքնակրթութեամբ և բարոյական ուժով և ոչ պատիժների օգնութեամբ, որ մի կողմանէ վարժապետաց կպահպանէ իրանց սոպռութեան և տգիտութեան մէջ և միւս կողմանէ աշակերտներից ոմանց կատրկացնէ կուրութեան չափ ճնշելով նորա բոլոր ինքնուրոյնութիւնը

անհատականութիւնը և ոմանց կհասցնէ անբարոյականութեան բարձր աստիճանին, շատ սակաւք զերծ կմնան այդ երկու ամենավնասակար ծայրայեղութիւնից։ Այս է ահա իմ կարծիքս պատժի մասին. իսկ մասնաւոր երևոյթների վերա ես նայում եմ որպէս բացառութեանց վերա։ Այսպէս Կայէնի եղբայրասպանութիւնը մի սովորական երևոյթ չէ. այլ բացառութիւն է միանգամայն, ինչպէս հրէշները չեն սովորական ծնունդներ։

Այլև աւելորդ չեմ համարում այս էլ ասել որ ես պատժի վերա նայել եմ սոսկ հոգեբանական կէտից ըստ չափու իմ հասկացողութեան, իսկ բնախօսութեան կէտից նայելը, որ իմ գործը չէ, թողել եմ բժիշկներին, որոնք չեմ կարծում որ ասեն թէ գլխին խփելով ուղեղը կըկրթուի, կամ քաղցած պահելը առողջապահական նշանակութիւն ունի և այլն։ Ի վերջոյ ես խոստանում եմ յարգոյ ժողովիդ ներկայացնել մի ուրիշ անգամ բազմատեսակ դիւրագոյն հնարներ մեր դատողութեան ենթակայ չարեաց առաջքն առնելու համար, իսկ այս անգամ ես միայն մի քանի հնարներ եմ մէջ բերում որպէս օրինակ թէ ինչպիսի հնարներ պիտի լինին իմ առաջարկելիքս։

Պարտաւորութիւնք վարժապետաց։

1. Բոլոր վարժապետների մէջ պէտք է այնքան մեծ սէր ու միութիւն լինի, որ այդ զգալի լինի աշակերտներին։ Եթէ մէկը վշտացած է մի ուրիշից պէտք է յայտնէ մանկավարժական ժողովին և պահանջէ նրա տնօրէնութիւնը այդ մասին։

2. Ոչ մի վարժապետ մի ուրիշ վարժապետի չպէտք է բամբասէ ժողովրդի մէջ, բայց ժողովի մէջ ամեն մէկը ազատ է իւր նկատողութիւնքը միւսի թերութեանց վերա անել, սոսկ փաստեր առաջ բերելով առանց պատուոյ դիպչող բառեր գործ դնելու։

3. Վարժապետաց յարաբերութիւնը աշակերտաց հետ պիտի լինի եղբայրական սիրով, այդ սէրը պիտի զգալի լինի աշակերտներին։ Վարժապետը դասատուն մտնելիս և դասախօսութեան ժամանակ հոգու և դէմքի զւարթութիւն պիտի երևցնէ, երբէք չպէտք է կնճռած և տխուր դէմքով նայէ, չպէտք է արհամարական և ստորացնող նայուածք ձգէ աշակերտաց վրա։

4. Վարժապետը պէտք է նկատէ միշտ թէ որոնք են աշակերտներից իրեն հետ բաւականաչափ ընտանէացած և որոնք են, որ զիրենք խորթ են համարում, և աշխատելու է որ այդպիսիներին էլ ընտանեցնէ։ Ինչպէս ճարտար հիւրընկալը գիտէ իւր բոլոր հիւրերի սիրտը միապէս շահել առանց մէկին միւսին անուշադիր թողնելու, նոյնպէս պէտք է լինի և վարժապետը իւր աշակերտաց վերաբերմամբ ամենքին բաժին հանելով իւր քաղցր ակնարկից և ոգևորող յորդորներից և ոչ թէ մի քանիսի վրա չռէ իւր ակնարկը և միւսների դէմքի վրա երբէք չկենդրոնացնէ իւր ուշադրութիւնը։

5. Վարժապետը դասախօսելու ժամանակ պէտք է ձայնի մեղմութիւն պահպանէ, չպէտք է իւր դասախօսութիւնը ընդհատէ «սուս հանդարտ կացէք» և սոյնպիսի բառերով կամ չընկ-

չեկացնի սեղանը այլ կշարունակէ իւր դասախօսութիւնը և միևնոյն ժամանակ իւր ակնարկութիւնը կընկենտրոնացնէ այն աշակերտի վրա, որի ուշադրութիւնը ուրիշ բանի վրա է ընկել։ Վնաս չունի, եթէ նոյն աշակերտը չընկատէ էլ այդ, պատճառ, բաւական է որ միւսները նկատեն։ Դասախօսելու ժամանակ չպէտք է ծիծաղաշարժ խօսքեր անէ ձեռք ու ոտքով, ձայնով կամ աչք ու ունքով, եթէ իսկապէս մտադիր էլ լինի ծիծաղեցնել նրանց։ Վարժապետը դասատան մէջ ոչ ոքին ոչ մի յանդիմանական խօսք չպէտք է ասէ որևիցէ աշակերտի, այլ միայն ուշի ուշով կնկատէ թէ ով ինչպէս է վարում ինքը զինքը և իւր նկատողութիւնքը կյայտնէ մանկավարժական ժողովին։ Վարժապետները երբեմնապէս աշակերտաց հետ սկսեն մտնել, խօսել հասարակ բաների վրա։ Երբեմնապէս կիրակի կամ տօն օրերը կարող են աշակերտներից քանի մի հոգի ի միասին մի որևիցէ վարժապետի մօտ գալ գնալ այցելութեան, լրագիր կարդալու կամ մի բան հարցնելու խօսելու։ Այդ տեսակ ընտանէական յարաբերութեանց ժամանակը կարելի է երգել ծիծաղացնել, զւարճացնել և այդ տեսակ յարաբերութիւնքը ոչ միայն չեն պակասեցնիլ վարժապետի հեղինակութիւնը այլ աւելի սիրելի կրկացուցանեն և կրգրաւեն միանգամայն նրա հաւատարմութիւնը։ Աշակերտաց հիւանդութեան ժամանակ, կարող են նրան այցելութեան երթալ մխիթարել ափսոսել, բայց իհարկէ ծախքի մէջ չձգելով ծնողացը։ Յետամնաց ու թմրած աշակերտների վրա մանաւանդ առան-

ձին ուշադրութիւն կդարձնեն դարձեալ ընտանեկան յարաբերութեամբ։ Կարճ խօսքով ասել վարժապետաց յարաբերութիւնքը աշակերտաց հետ այնքան սերտ սիրով պիտի լինի, որ աշակերտը ուր և իցէ վարժապետին տեսնելիս, այնպէս ուրախանայ, ինչպէս մի մանուկ իր ծնողացը տեսնելիս ուրախանում է, և ոչ թէ վարժապետի շուաքը տեսնելուն պէս փախչի և ծակամուտ լինի։ Երբ որ վարժապետին շրջապատում են աշակերտները ինչպէս հարազատ եղբայրներ իրանց հարազատ ծնողին, այդ արդէն ապացոյց է նոցա անկեղծ սիրոյն և հաւատարմութեանը։

6. Այն վարժապետները որոնցից յոյս չըկայ մի այսպիսի յարաբերութեան, նոքա կարող չեն կրթող լինել։ Այդպիսիք կարող են բարձր դասատան մէջ մի որևիցէ առարկայ ուսուցանել, բայց չի կարելի յանձնել նոցա նախակրթարան, ուր պիտի հիմնարկւի երեխայոց բնաւորութիւնը։ Նախակրթարանի մէջ միայն այն վարժապետները պէտք է ունենան դաս, որոնք աւելի հեղինակութիւն և յարգ ու պատիւ ունին թէ դպրոցական և թէ հասարակական կեանքի մէջ։ Այսպէս ասելով ես ոչ միայն ընդդէմ չեմ, որ նոքա բարձր դասատանց մէջ էլ դաս ունենան այլ այդ անհրաժեշտ եմ համարում, պատճառ այդ հանգամանքն ևս քիչ ազդեցութիւն չունի փոքրերի վրա։ Զնայելով այս բոլոր ասածներիս, ես ինքս էլ համոզուած եմ, որ որքան աշխատինք դպրոցը եղեմական դրախտի փոխարկել, դարձեալ սատանան կարող է մուտ գործել նրա

մէջ մէկին կամ միւսին պատուիրանազանց անելու։ Աստուած հրեղէն ոգիք ստեղծեց բոլորովին անբիծ և անարատ, այլ սակայն նոցա մի մասը մեղաւոր դտնուեցան։ Բայց այսու ամենայնիւ ես կըպնդեմ դարձեալ, որ աշակերտաց մեղաց համար պէտք է վարժապետները հետեւելով Որդւոյն Միածնի յանձն առնեն չարչարուել և իրանց արիւնով սրբել նոցա մեղքերը։ Առանց հոգեկան տանջանքի վարժապետաց կողմից, չի կարող ուսումնարանը կրթարան դառնալ։ Եւ արդարև մեծ տանջանք է վարժապետի համար, երբ նկատում է, որ այս ինչ աշակերտը արժանի էր մեծ փառաւոր ապտակի, բայց ստիպւում է սանձահարել իր կիրքը. աշխատում է չցուցանել իւր դէմքի վրայ որևէ բարկութեան նշան ու միևնոյն ժամանակ աշխատում է ամենայն սիրով և բարութեամբ մոլորածին ուղիղ ճանապարհի վրայ դնել։ Այս էլ պէտք է ասել, որ այսպիսի դժուարութիւնքն երկարատև չեն լինիլ։ Հետզհետէ կարգասիրութեան հետ կնտելանան աշակերտները և դրանով կթեթևացնեն վարժապետի գործը, որի դժուարութիւնը կլինի միայն խստիւ հետևողականութիւն պահպանել իւր մի անգամ բռնած ընթացքի մէջ։ Այլև այս գործը այնքան կրթեթևանայ, որքան բոլոր վարժապետաց կողմից կլինի միևնոյն կարգի պահպանութիւնը։

Եթէ իւրաքանչիւր դասատուն մի վարժապետի միայն յանձնուած լինէր, այն ժամանակ մեծ դժուարութիւն չէր լինիլ բարոյական ազդեցութիւն գործելը, քան երբ որ դանազան բնաւորութեան և հասկացողութեան մար-

դիկ են մուտ գործում, միևնոյն դասատուները մի վարժապետի յանձնել, քանի որ չունինք դեռևս մասնաւորապէս այդ պաշտօնի համար պատրաստուած անձինք, որ բոլոր աւանդելի առարկայքը միապէս լաւ դիտենան։ Այսպիսի դրութեան մէջ աւելի մեծ կարևորութիւն կայ ուրեմն որ վարժապետաց վարմունքը ըստ կարելւոյն միանման լինէին։ Ուրբան որ մի աշակերտ իւր անուղղայ վարուքը կարող էր ապականել իւր ընկերներին նոյնպէս և մի վարժապետ, իւր դասատիարակի անվայել ձևերովն ու խօսքերովը, կարող է մի ամբողջ խմբի բարոյական ճիգն ու ջանքը ի դերև հանել։ Այն վարժապետը, որ աշակերտին ուղղելու շնորք չի ցոյց տալիս նա պիտի արտաքսւի, որպէս անընդունակ, և այն աշակերտը որ ոչ մի բարոյական հնարով չի ուղղւիլ, նրան առանց որևիցէ պատիժ տալու պէտք է արտաքսել։

Պատմութեան նախագիծը

Հ. Ղուկասեանց

Պատմութեան դասաւանդութիւնը մեր ուսումնարանում պէտք է սկսւի ուսումնական շրջանի հինգերրորդ տարուց, այն է մեր երկրորդ դասատանը։ Հայոց պատմութիւնը պէտք է զուգակցաբար ընթանայ ընդհանուր պատմութեան հետ որպէսզի ժամանակակից եղելութիւնները պարզ ըմբռնեն ուսանողները և կարողանան դիտակից հասկացողութիւն կազմել մեր պատմութեան ամեն մի անցքի վերաբերմամբ։

1. Ուսումնարանը ուսումնական շրջանի

հոլորորդ տարում, այն է Ա. դասատանը պէտք է ծանօթացնել Հայոց պատմութիւնից մի քանի նշանաւոր անձնաւորութեանց հետ որոնց կեանքի ու բնաւորութեան նկարագրութիւնը կարող է լինել գրաւիչ և զարգացուցիչ։

Այդպիսի անձինք յատկապէս յետազային կարող են լինել Հայկ, Արամ, Արա, Անուշաւան, Տիգրան ա., Վահագն, Վահէ, Վաղարշակ ա., Արտաշէս ա., Տիգրան բ., Արգար, Արտաշէս բ, Տրդատ, ս. Գրիգոր, Մեծն Ներսէս, ս. Սահակ, Արտաշէս վերջին, Վարդանանք և Ղևոնդեանք, Ե. դարու հայեր, Վահան Մամիկոնեան, Աշոտ ա, Աշոտ ողորմած, Գագիկ վերջին, Ռուբէն ա., Լևոն բ., Հեթում ա, Լևոն գ. և որպէս վերջաբանութիւն.—այժմեան հայերը։

Ընդհանուր պատմութիւնից։

3. Երկրորդ դասատան հին պատմութիւնը այն է Գրուբէյի պատմութեան ա. մասն ու յաւելւած բ. մասից, մինչև Արևմտեան Հռոմէական պետութեան անկումն, որ է 476 թուականը, իսկ Հայոց պատմութիւնից մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջանալը (433)։

Ծանօթութիւն. Զնայելով, որ Վարդանանց պատերազմն ու Ղևոնդեանց մարտիրոսութիւնը նոյնպէս այդ շրջանի մէջն է մտնում, բայց որպէսզի մի տարեան կուրսը չափազանց շատ չլինի, լաւ է թողնել այդ յետագայ տարեան սկզբին։

3. Երրորդ դասատան ընդհանուր պատմութիւնից միջին դարերի պատմութիւնը, այն է

բ. Մասն Գրուբէյի պատմութեան մինչև վերջը իսկ Հայոց պատմութիւնից — մինչև Ռուբինեանց թագաւորութեան վերջը։

4. Չորրորդ դասատան, նոր ժամանակների պատմութիւնը, (Գրուբէյի պատմութեան գ. մասն)։ Հայոց պատմութիւնից անիշխանութեան ժամանակները մինչև մեր օրերը։

Ծանօթութիւն. 1. Գրուբէյի պատմութիւնը, գրուած լինելով գերմանական ուսումնարանների համար, սովորականից ընդարձակ է նորանում գերմանացւոց պատմութիւնը։ Այդտեղ կարելի է համառօտութիւններ անել. դորա փոխանակ, հարկաւոր է աւելի ընդարձակ կերպով ուսումնասիրել Հայոց պատմութիւնը և մանաւանդ բազմակողմանի հայեացք գցել հայերի ներկայ վիճակի և կացութեան վերա։ Կաթողիկոսութիւն, էշխանութիւն, Տաճկաստանի Հայոց սահմանադրութիւն, Ռուսիոյ հայոց մի քանի արտօնութիւններ, Պարսկաստանի հայոց վիճակը և այլն։

2, Որպէս Հայոց պատմութեան ձեռնարկներ լաւագոյնն են Հ. Ե. Զագճեանի և Գ. Աբովեանի Աշխատասիրութիւնները։

Հարկաւոր է ուսուցչին աչքի տակ ունենալ և Գ. Վ. Շահնազարեանցի աշխատասիրութիւնը «Ծրագիր պատմութիւն Հայաստանի»։

3. Հայոց պատմութեան դասերը պէտք է ընդհանուրի հետ ժամանակակից ու զուգակից կերպով ընթանան։

Աշխարհագրութեան Նախագիծը
Հ. Դուկասեանց

ա. Ինչպէս աշխարհագրութեան դասերը պէտք է սկսել ուսումնարանական շրջանի մէջ

երրորդ տարուց, այսինքն գ. պատրաստականում։ Այս տարուան դասերը կլինեն ընդհանուր ծանօթութիւն օդի, ջրի, ցամաքի, գործարանաւոր և անգործարան մարմինների մասին առհասարակ. ըստ չափու կարելիութեան, տեղեկութիւն նոյն բնական մարմինների և երեւոյթների մասին հայրենիքում, սկիզբն առնելով աշակերտի բնակութեան տեղից և ընդարձակելով առաւել և առաւել հեռու։ Այլև ընդհանուր ծանօթութիւն մասշտաբի, յատակագծի և աշխարհագրական քարտէզների հետ

բ. Առաջին դասատանը.—(աշխարհագրութեան դասերի երկրորդ տարին) ընդարձակ տեղեկութիւններով բնական աշխարհագրութիւնը (ըստ Սիմէօնովի *) և համառօտակի հասկանալի գիտելիքները մաթեմատիքականից։

գ. Երկրորդ դասատանը. - Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի և Աւստրալիայի աշխարհագրութիւնը (ըստ յիշեալ հեղինակի)։

դ. Երրորդ դասարանը. — Եւրոպայի աշխարհագրութիւնը (ըստ նոյն հեղինակի)։

---

*) Սիմէօնովի աշխարհագրութիւնն ազատ լինելով շատ դասագրեանց մէջ ընդունած անտանելի և բոլորովին աւելորդ աշխարհագրական տեղեկութիւններից (ըստ մեծի մասին քաղաքականից) և պարունակելով իւր մէջ առաւել գործնական և կեանքի մէջ պիտանի առարկաների գրաւիչ նկարագրութիւններ աշխարհագրութեան. երեք մասերից էլ նկարագրութիւններ աշխարհագրութեան. գործամենից դերազանցն է Ռուսիոյ ուսումնարաններում գործածուողներից։ Ուստի և օգտակար է այդ դասագիրքն ունենալ որպէս ձեռնարկ։ Այժմ մեզանում կայ Սմիրնովի աշխարհագրութեան թարգմանութիւնը, որ մի անպատեհ ընտրութեամբ արած են Պետերբուրգի հայ ուսանողը։ Այս գիրքը ևս չնայելով որ չի կարող իւր արժանաւորութեամբը հասնել Սիմէօնովի Աշխարհագրութեանը, այդուամենայնիւ կարող է առայժմ գործածուել և օգուտ բերել։

Փիզիքայի ծրագիրը

Հեռեւելով Կէնրիհ. Ֆրիզին եւ Լաջարդէրին կազմեց Ս. Բէկնազարեան

1. Բնագիտութիւնը (Ֆիզիքա) պարապում է բնական օրէնքների բացատրութեամբ։ Բնական օրէնքներին ենթարկւած են բոլոր մարմինները։ Բնագիտութիւնը պէտք է աւելի ուշ սկսել ժողովրդական դպրոցների մէջ, քան թէ բնական պատմութիւնը որ բնագիտութիւնից դիւրին է։ Վասն զի բնական պատմութեան մէջ երևոյթներն աչքի առաջ են, այն ինչ բնագիտութեան մէջ բազմադիմի փորձերի վերա հիմնւելով, պէտք է որոնել և բացատրել երևոյթների օրէնքները։ Այս պատճառաւ տեղի չէ տալ դպրոցական կեանքի մէջ այն միտքը որ կամենում է բնագիտութիւնն սկսել ըստորին կամ գոնէ միջին դասատների մէջ։ Ստորին դասատներ ասելով հասկանալու ենք երեք նախակրթարաններ. իսկ միջին ասելով թեմական դպրոցի I և II դասատները։

Մենք սկսելու ենք բնագիտութիւնը մեր երրորդ նախակրթարանից և վերջացնելու ենք IV դասատանում, բայց երրորդ նախապատրաստականից մինչև երրորդ դասատունը կըլինի նա իբրև իրազննական ուսմունք, այնինչ երրորդից մինչև չորրորդ դասատան վերջը՝ իբրև իսկական առարկայ կաւանդւի։ Այս որոշմունքը համաձայն է թէ ընդհանուր մանկավարժութեան տրամադրութեան և թէ մեր անձնական հայեացքին. Կէհրն էլ ասում է. «Սորանից վաղ ոչինչ չի օգնիլ գործին. այլ մանաւանդ կըմնասի աշակերտներին»։ Արդեօք մեր երրորդ և չորրորդ դասատներումն էլ կարող էր բնագիտութեան դասաւանդութիւնը, իբրև իսկական առարկայի բերել այն պտուղը, որ կցանկայինք տեսնել։ Այս կախւած է նրանից, թէ ուսուցիչն իր առարկան ինչպէս է հասկանում և ինչ եղանակով աւանդում։ Ուրեմն նախ և առաջ ուսուցիչը տեր պէտք է լինի իւր առարկային և նրա դասաւանդական ոճին (մեթոդին։ Ընդհանուր ճշմարտութիւն է, որ ով մի բան լաւ սովորեցնելու լինի, ինքն էլ լաւ գիտենալու է նոյնը։

«Շատախօսութիւն այստեղ չի օգնում» ասում է Կէհրը, օրինաւոր բան առնելուց առաջ պէտք է օրէնքը ճանաչել։ Կէհրը բաւական է համարում մի կողմից վարժապետական դպրոցի լաւ նախապատրաստութիւնը և միւս կողմից ժրաջան աշխատութիւնը ժողովրդական դպրոցի վարժապետի համար, որ կարող լինի արդիւնք ցոյց տալ այս առարկայի դասաւանդութեան մէջ։

Մենք կարող ենք ասել, որ եթէ վարժապետը ժրաջան ու աշխատասէր լինէր, որքան էլ որ թերի լինէին իւր սկզբնական նախապատրաստութիւնները, այնուամենայնիւ նա կարող էր այնքան հմտութիւններ ձեռք բերել, ինչքան ժողովրդական դպրոցի նպատակը կըպահանջէր։ Բայց եթէ իւր ժամանակը պարապորդութեամբ անցկացնելով, միայն դասերից առաջ քանի մի կտոր բրդուջ տեղեկութիւններ քաղելով դասատուն է մտնում, փոխանակ երդութեան, առասպելներ է ասում, այն ժա-

մանակ յայտնի բան է, որ օգուտ չէր բերիլ նա, այլ միայն վնաս։ Այս պայմանով լաւ էր չաւանդել այս գիտութիւնը, քան թէ աւանդել։

2. Այնուամենայնիւ առարկայի ճշտագոյն գիտենալն բաւ չէ անշուշտ, մի երկրորդ պայման ևս կարևորագոյն է, և սա է դասաւանդական ոճը։ Հարկաւոր է այս մասին ևս յիշել Կէհրի մի քանի նկատողութիւնները։ Նա ասում է։—Առաջին ժամանակներում կամենում էին երեխայի տեղական կողմը զարգացնել. ուստի նախ վերացական գաղափարներ և երևակայական բացատրութիւններ էին աւանդում։ Բնութեան վերա խմաստակում էին, եզրակացութիւններ էին անում, առասպելների էին հետևում, ուր ճշմարտութիւնը պէտք է խօսէր։ Մարմինների ընդհանուր յատկանիշներ ու օդերևոյթներն առաջին դերն էին խաղում։ Փորձառութիւնից և զննութիւնից խօսք անգամ չկար։ Այս ուղղութիւնը, որ աշակերտին ստիպում էր անպայման հաւատալ իւր վարժապետի թելադրութեան, երկար տևելուց յետոյ նաւաբեկութիւն կրելով մի այլ ուղղութիւն առաջ եկաւ, այն էր, թէ բնագիտութիւնը պէտք էր մաթէմատիքական ապացոյցներով աւանդել։ Եւ ահա մաթեմատիկան տարազների կամ տեսողութիւնների հմայագրութիւններ է՝ որ նկարւում էին սև տախտակի երեսին, բայց երեխաները այս ամենից մի նշանախեց անգամ չըմբռնելով յորանջմամբ էին արտայայտում իւրեանց անհաղորդակցութիւնը։

Հէնց որ այս ուղղութեան սխալն էլ յայտ-

նուեցաւ, ասպարէզ եկաւ մի երրորդ ծայրայեղութիւն, որ սակաւ փնասակար չէր քան նախընթացները։

Օրան խօսքն էր «բնագիտական դասերը պէտք է հնտաքրքրական լինին»։ Եւ ահա նախկին անմարսելի կոշտերի տեղուկ մատուցին ամեն մի անդաղուրկ ապուր, որ բաղկանում էր միմիայն առասպելական արկածներից և հրապուրիչ հրաշքներից։

Ի հարկէ աշակերտները լսում էին այսպիսի արկածներն ու հրաշքները մեծ ուշադրութեամբ, որովհետև իրանց երեխայական տրամադրութիւններին լիապէս բաւականութիւն էն տրւում և այս պատճառով կարծում էին խիստ երկար ժամանակ թէ ուղիղ ճանապարհի վրայ լինին. բայը ափսոս, որքան էին սխալւում. միայն նորագոյն ժամանակներին էր պահւած հիմնել բնական օրէնքների վերա դասաւանդութեան ելքը։

Ահա նորագոյն ժամանակիս պահանջը.— Բնագիտութեան դասաւանդութիւնը անհրաժեշտ պէտք է հիմնի փորձառութեան և անմիջական զննութեան վերա։ Այս է էական սկզբունքը, որ Բակօի հանճարի ծնունդն է համարւում. Յ. Կրիւգերի ազնիւ իւր կատարեալ նշանակութիւնն ըստացած, պարտք է դնում ամեն մի դպրոցների վերա այս երևելի մանկավարժին իւր շնորհակալիքը մատուցանել։

Այս հիմնական սկզբունքը լիապէս բացատրւում է որ բնագիտական ուսումը իւր զարգացման մասին. ոչ վերացական տեսութեանը ոչ առասպելախառն արկածների և ոչ կրաւոր

ական լսողութեան, այլ միմիայն անմիջական զննութեան, անձնական և ներգործական դիտողութեան է պարտական. սրանից հետևում է, որ ամենայն երևոյթ դիտելու ժամանակ աշակերտը երեք բան հարցնելու պիտի տրամադրվի. նախ ինչը՝ երկրորդ ինչպէսը և երրորդը ինչուն։ Նորագոյն ուղղութիւնը պահանջում է դիտողութիւն, անմիջական զննութիւն, անձնական և ներգործական եղրակացութիւն, բայց այս ամենը առանց փորձառութեան երևակայելի չէ։ Փորձառութիւնն է, որ բնական բաղադրեալ երևոյթները բացատրում և պարզում է։ Փորձառութեան միջոցին աշակերտը կարողանում է իւր դիտած երևոյթից հետևցնել հիմն եղող օրէնքը։ Փորձառութիւնը մարդկային մտաց և բնութեան մէջ թարգմանի պաշտօն է կատարում. մարդը հարցնում է և բնութիւնը փորձառութեան բերանով պատասխանում է։

Իհարկէ ուսման կարճ միջոցը և ուսանելի նիւթերի մեծ քանակութիւնը ստիպում են մեզ, որ միայն էական օրէնքներն ու ճշմարտութիւններն աւանդենք աշակերտներին։ Ճշմարիտ դասաւանդական ոճն էլ պահանջում է. որ խոյս տանք ամեն տեսակ արհեստականութիւններից և խաղալիքներից, փորձառութեան միջոցին։ Նաև հեռու պէտք է պահել բարդ գործիքները, և մի կողմ պէտք է մնան բաղադրեալ փորձերը։

Ֆրիզն ու Կէհր ասում են.—Թանկագին և փայլուն գործիքներով մանուկների դեռահասների առաջին խաղալը ուղղակի անմտութիւն է։

Առանց կարիքի արհեստականը դնում են բնականի տեղ, բարդը՝ պարզի. հազւագիւտը սովորականի տեղ և այլն»։ Նոյն մանկավարժներն աւելացնում են.—«սա մի շռայլութիւն է և իսկական կէս վնասակար, վասն զի սրանով աշակերտի մէջ ծնուցանում ենք այն կարծիքը, որպէս թէ առանց թանկագին և փայլուն գործիքների անհնար լինէր բնութեան ճշմարտութիւններին հմտանալն.» բարդ գործիքներով շլացնում են աշակերտի աչքերը. խեղդում են նրա ձգտումները դէպի ազատ դիտողութիւնները. և ծածկում են նրա ունեցած պայծառ հայեացքը կատարուող իրողութեան վրա։ «Այս տեղից հետևում է որ հասարակ գործիքները և պարզ փորձերը նախամեծարելի են, քան ներհակը, վասն զի երեխան պարզ լաւ է դիտում, քան թէ բաղադրեալը։ Նախ և առաջ պէտք է աշխատել բացայայտ ցոյց տալ այն երևոյթները, որ աշակերտի շուրջն են կատարուում բնական կերպով, առանց թանկագին գործիքներ մէջ բերելու, այլ միայն ուշադիր անելու նոցա վերա։ Օրինակ՝ լուսամուտի ապակին քրտնում է, սրանով դիւրին է բացատրել ցօղի և եղեամի կազմուելը։ Եռացող ջրից բարձրացող գոլորշիներով կարող ենք հասկացնել մշուշի, մէգիներով կարող ենք հասկացնել մառախուղի և ամպերի գոյանալը։ Պաղ կափարուած ամպերի գոյանալը։ Պաղ կափարուած ջրի վերա ժողովուող ջրային կաթիլներով կը մեկնենք անձրևի, ձիւնի և կարկտի ձևակերպուելը։ Նոյնպէս մի հասարակ ձողով կարող ենք բացատրել լծակի օրէնքները, մի պարսուտով ցոյց կտանք կեղրոնաձիգ և կեղրոնախոյս զօրութիւնները, մի միջոցով զգալի կանենք օդի ճնշիչները,

շումը, մի ռեզինի թելով կամ մի փափուկ ճիպոտով կհասկացնենք առաձգականութիւնը, մի փոքրիկ մագնիսական պողովատի կտորով մագնիսականութիւնը։ «Ամենից արժանաւոր ուսուցիչը նա է, որ ամենահասարակ գործիներով արդիւնք ցոյց կտայ» ասում է Լաֆարդէը։ «Աւելի ևս արժանաւոր է այն ուսուցիչը, որ գործիների մեծ մասը շինելու հնարը կըսովորեցնէ աշակերտներին» ասում է Կէհը։ Այսպիսի գործունէութեամբ աշակերտն աւելի զարգանում և հետաքրքրւում է, քան թէ պատրաստի գործիքների գնութեամբն, աւելացնում է Ֆրիդը»։

Ուսուցչի մի էական պարտաւորութիւնն էլ սա է, որ աշակերտին տրամադրէ իւր տեսած, զննած և ճանաչած երևոյթները ճիշտ խօսքերով արտայայտելու։

«Շատ անիրաւ և անտեղի է այն զառանցութիւնը, որ լինում է լեզուի ուղղախօսութեան նկատմամբ այն ուսուցչի կողմից, որից ուղղակի չէ պահանջում լեզուի վարժութիւնը։ Լեզուի զարգացումը կախուած է ենթադրեալ առարկաների յաջողակ աւանդելուց, և նոյն իսկ առարկաների արդիւնքն էլ ամենալաւ կերպով ապահովւում է լեզուի զարգացմունքով։ Հնգի և մտքի զարգացումը Լսական նպատակն է ժողովրդական դպրոցի, իսկ առարկաները միջոց են ենթադրեալ նպատակին հասնելու։ Լեզուի զարգացումն պէտք չէ յանձնել միայն քերականութեան այլ բոլոր ուսանելի նիւթերին և այս պահանջին դրապէս պէտք է հետևել։

3. Ինչ կվերաբերի բնագիտական նիւթերի

ընտրութեան, այս մասին պէտք է տեսական եւ գործնական նպատակներն ի նկատի ունենալով ընտրութիւն անել։ Իսկ ինչ որ վերաբերում է իւրաքանչիւր դասատան մէջ աւանդելի նիւթերի ընտրութեան և քանակութեան, հարկաւոր ենք համարում հետևեալ նախագիծը առաջադրել, որ ըստ հանգամանաց կարող է փոփոխութիւններ կրել։

Երրորդ պատրաստական. շաբաթական երկու դաս.

Համեմատութիւն հաստատուն հեղուկ և գազակերպ մարմինների։ Կրակի յատկութիւնը և ջերմութեան ծագումն։ Արեգական և կենդանական ջերմութիւն։ Շփելուց, զարկելուց, հրելուց, ճնշելուց, կարծրելուց և փթելուց առաջացած ջերմութիւններ։ Ջերմութեամբ բոլոր մարմինների տարածելը ու ցրտութեամբ բոլորի ամփոփելը բացառութեամբ ջրի։ Թաց նիւթերի տրաքտրաքելն ու պատռուելը ջերմութեամբ, թաց նիւթերի ամփոփելը ջերմութեամբ, ջերմութեան ներգործութիւնը մարդուս մարմնի վրա։ Ջերմաչափի նիւթերն ու պատրաստելը։ Համառօտ տեղեկութիւն երկրաշարժի, հրաբուխի և ջերմաղբիւրների մասին։ Ջերմաչափի տեսակները և գործածութիւնը։ Գաղափար երկրային ջերմութեան վերա։ Լաւ կամ արագ հաղորդողներ տաքութեան, վատ կամ ուշ հաղորդող տաքութեան։ Բոյսերի և տունկերի պահպանելու մասին գործ դրած հնարները ցրտի դէմ, տարւայ 4 եղանակներում այլ և այլ տեսակ հագուստներ հագալու նշանակութիւնը։ Օդի հոսումն կամ շար-

ժումն՝ առաջացած անհաւասարապէս տաքանալուց։ Հողմերի ծագումն ու օգուտները։ Եռացումն և հալումն։ Հեղուկների և պինդ մարմինների շոգիանալը. ցնդական, անցնդական, չորացող և չըչորացող հեղուկների մասին։ Շոգիացումից առաջ եկող երևոյթներ, չոր, ամառան անձրևի հովացնելը, փողոցների և տների ջրելուց առաջ եկած զովութիւնը. թաց շորերով քնելու կամ ման գալու վնասը. անտառների ներգործութիւնը մթնոլորդի, օդի վրա և այլն։ Ջերմութեան կլանելը և անդրադարձութիւնը։

Օդի խոնաւութիւնը. Սրանից առաջ եկած երևոյթները։ Ցօղի, եղեամի և մշուշի կազմելը։ Ամպերի գոյանալը, տեսակներն և նշանակութիւնը։ Անձրևի, ձիւնի և կարկտի գոյանալը, պատճառը և իրանց օգուտներն ու վնասները։ Մարմինների լողանալը ջրի, ծովային ջրերի, յատկութիւնը և նաւերի գործածութեան օգուտը։ Ջրային շոգիների գոյանալը. նոցա գործածութիւնը գործարաններում։ Համառօտ տեղեկութիւն երկաթուղիների և շոգենաւերի մասին։ Մարմինների լուծելը պաղ և տաք ջրերի մէջ. Հանքային ջրերի մասին համառօտ տեղեկութիւն։ Բիւրեղացումն։ Հաղորդակցող անօթներ։ Ճահիճների ցամաքեցնելու եղանակը և օգուտը։ Ջրի մաքրելու կերպերը։

Մարմինների ընդհանուր յատկութիւնները։

Ընդդիմահարութիւն։ Բաժանականութիւն։ Զգուշութիւն։ Ծակոտկութիւն։ Պնդութիւն և առաձգականութիւն։ Կպչութիւն և մազակա-

նութիւն։ Ծանրութիւն։ Անգործութիւն։ Օդի յատկութիւնը։ Օդի ճնշումը։ Ծանրաչափի վերա։ Օդի ճնշելը և հերոնեան աղբիւր։ Օդի ճնշելու վերա հիմնուած այլ գործիքներ, Ջրհաններ և հրշէջ։ Օդահան, լիվեր և սիփոն։

Առաջին դասատուն (4 դ. տարի) շարաթական 2 դաս

Այս դասատան համար ևս նախընթաց նիւթերն են լինելու, բայց ուսուցիչն այստեղ ընդարձակելու է իւր պահանջն աշակերտի պատմելու վերաբերմամբ։

Իբրև դասագիրք աշակերտի ձեռքին ամենալաւն է պ. Աղայեանցի թարգ. «Բնական երևոյթների բացատրութիւն», անունով գրքոյկը թէ թարգմանչի լեզուի պարզութեան նկատմամբ և թէ հեղինակի կողմից նիւթերի բացատրութեան յաջողակ լինելուն աղագաւ։

Այստեղ հարկաւոր են նոյն գործիքները, որ նախընթաց դասատան մասին յիշեցին։

Երկրորդ դասատուն (5 դ տարի) շաբաթական 2 դաս։

Նախընթաց նիւթերն աւելի ընդարձակ։ Իբրև դասագիրք վերոյիշեալ գրքոյկն է։ Եթէ նախընթաց դասատան նիւթերն այս դասատան մէջ հիմնաւոր և գիտակցաբար վերջացնեն աշակերտները, կարելի է աւելացնել և հետևեալները։

Ջրի և օդի բաղկացութիւնը։ Թթուածին, ածխաթթու։ Այրումն։ Շնչառութիւն։

Դասաւանդական ոճն այստեղ պատմական և նկարագրական է,

Գործիները նոյնն են։

Երրորդ դասատուն (6 դ. տարի) շաբաթական 3 դաս։

Դասագրքի ամենից յարմարն է Դոկտոր Յովհաննէս Կրիւգերի «Grundzüge der Physik» (կզբունք բնագիտութեան») կոչուած գիրքը, որ ինչքան իւր բովանդակութեամբ, այնքան և իւր բացատրական ոճով ամենալաւն է մեր ուսումնարանի համար։ Մենք դասաւորում ենք հետևեալ կերպիւ նորա նիւթերը.

I. *Ուսումն չերմութեան։*—Ծագումն չերմութեան։ Ներգործութիւն չերմութեան։ Տարածումն չերմութեան II. *Զգուշութեան կրկնոյթներ։* - Բնալուծական (քիմիական) ձգողութիւն կամ խնամութիւն։ III. *Զգողական զօրութիւն։* - Զգողական զօրութեան ներգործութիւնն առանց բացառութեան բոլոր մարմինների վերա։

Ազատանկումն մարմնի։ Անկումն ծուռ երեսի վերա։ Զգած մարմնի անկումն։ Զգման զօրութեան ներհակ կենդրոնախոյս զօրութիւն։

Առանձին ձգողական զօրութեան ներգործութիւնը հաստատուն մարմինների վերա։

Լծակը. ծանրութեան կէտը. Ճոճանակը. մեքնայական շինութիւններ։

Զգողական զօրութեան ներգործութիւնը կաթելահեղուկ մարմինների վրա։

Կաթելահեղուկների մակերևոյթների դրութիւնը խաղաղ և շարժուն դրութեան մէջ։

Կաթելահեղուկի ճնշելու կանոնները։ Ընկղմած մարմնի կանոնները։

Զգողական զօրութեան ներգործութիւնը գազակերպ մարմինների վերա։ Խտացեալ օդի առաձգականութիւնը։ Մթնոլորտեան օդի ճընշումը և սրա վրա հիմնուած երևոյթները։

Չորրորդ դասատուն (7 տարի)

Այս դասատան մէջ Յ. Կրիւգերի գիրքը կըլինի իբրև դասագիրք աշակերտների համար։ Այստեղի նիւթերն են, Լուսաբանութիւն, Ջայնաբանութիւն. Մագնիսականութիւն, Ելեկտրականութիւն։

Այս երկու դասատներում բնագիտական ամենահարկաւոր գործիքներից գոնէ հետևեալները պէտք է ունենանք.—Չերմաչափ, ծանրաչափ, խոշորացոյց կամ մանրադէտ, կշռորդ, օդահան, օդախիտ մեքենայ, հերոնեան շիշ, լիվերսիփոն, Ջրհանների կաղապարներ, սողոցած պրիզմա, ուռուցիկ և գոգաւոր ապակիներ, մի քանի տեսակ ճախարակներ, մի քանի բնալուծական փորձի շիշեր, մի կողմնացոյց, մագնիսական և ելեքտրական քանի մի գործիներ և այլն։ Դասախօսութեան օգնող գրքեր ուսուցչի համար, Կրիւգեր, Գանօ, Միւլեր, Շոտլեր (Buch der Natur), Էմանուէլ Քաջունի, Նուրիխանեան, Տէրտէրեան և այլն։

Կրօնի նախագիծը

(Մ. f. Տէր-Խաչատրեան)

Կրօնուսոյցը այսպէս պէտք է ունենայ իր դասախօսութեան ասպիճանները և եղանակները։

ա. Նախապատրաստական, շաբաթական երկու դաս առաջին տարում։ Ուսուցիչը այս դասատան աշակերտներին պէտք է իւր աչքի առջև ունենայ իբրև մի նոր արարածներն, սրա համար իւր դասախօսութիւնքը պէտք է լինին մի քանի դիւրին աղօթքներ աշխարհաբար լեզ-

ւով, բացի Տէրունական աղօթքից, որ երկու ձևն էլ պէտք է ունենայ, բայց ընտելական և հասկանալի ոճով, այսինքն, Տէրունական, խաչի, յարութեան և Աստուածածնի աղօթքներն և այլն։ Երկրորդ բարոյախօսութիւններ երեխաների քնքուշ կեանքի վերաբերմամբ, այսինքն այնպիսի բարոյախօսութիւններ, որոնք պէտք է զարթեցնեն նոցա սրտերի մէջ մի նոր աղնիւ զգացումն կրօնի վրա, և որոնք բարեյարմար միջոցներ պէտք է լինին նոցա ճանաչացնելու համար իւրեանց ստեղծող Աստուածը, ծնողասիրութիւնը, ընկերասիրութիւնը, դասատանումը և ուրիշ տեղերում հանդարտ նստելը, վարժապետի առածները ուշքով ըմբռնելը, վըտանգաւոր խաղերից զգուշանալը, և անմեղ խաղերով զբաղանալը և այլն։

բ. Նախապատրաստական, շաբաթական երկու դաս երկրորդ տարումը. այս դասատան աշակերտներին միևնոյն դասախօսութիւնից կրկնումն պէտք է լինի, ինչ որ վերևը պատմեցաւ ա. պատրաստականում, բայց փոքր ինչ տարբեր ձևով համաձայն աշակերտների հասակին և զարգացման։

գ. Պատրաստական, շաբաթական չորս դաս. երրորդ տարումը, այս դասատան դասատուութիւնքը պէտք է լինին զանազան աղօթքներ, և բարոյախօսութիւններ նոյնպէս համաձայն տըղայոց մտաւոր զարգացմանը, նաև սրբազան պատմութիւն, այսինքն հին և նոր կտակարան. հին կտակարանից ուսուցիչը պէտք է պատմէ Աստուծոյ վեցօրեայ արարչագործութիւնից սկսեալ մինչ ցՄովսէս բայց խոհեմութեամբ և

զգուշութեամբ, հեռացնելով աշակերտների երևակայութիւնից պատմութեան հանգամանքների վտանգաւոր ազդեցութիւնները և ընդհակառակն վառել և բորբոքել նոցա սրտերում սրտաշարժն և բարին։ Իսկ նոր կտակարանից, Յովհաննէս Մկրտչի ծննդից սկսեալ մինչև Յիսուսի առաջին հրաշագործութիւնը, սակայն պատմածները հանգամանօրէն ազդու և համառօտ, հասկանալի և մաքուր ոճով։ Այս պատմութիւնը իբրև դասախօսութեան ձեռնարկ բաւական օգտակար եմ համարում Նազարեանցի հին կտակարանի պատմութեան դասագիրքը, և Մուրատեանցի նոր կտակարանի դասագիրքը թէ նոցա հանգամանօրէն և համառօտ պարունակութեանց համար, և թէ նոցա դիւրին և մաքուր ոճերի համար։

ա. Դասատուն. չորրորդ տարումը շաբաթական երկու դաս, այս դասատանումը ուսուցիչը միևնոյն ձեռնարկութիւնը դասախօսութիւնը պէտք է ունենայ, բայց հին կտակարանից, Մովսէսից սկսեալ մինչ ցԴաւիթ, իսկ նոր կտակարանից Յիսուսի բոլոր հրաշագործութիւնները. այլև, աղիքների բարոյախօսութիւններ, յիշեալ դասագրքերովը։

բ. Դասատուն, շաբաթական երկու դաս հինգերորդ տարումը, այս դասատան աշակերտներին հին կտակարանից, Դաւթից սկսեալ մինչ ցաւարտ. իսկ նոր կտակարանից. Քրիստոսի բարոյախօս առակները և առակների բացատրութիւնը մասնութիւնը չարչարանքը, խաչելութիւնը, թաղումը, յարութիւնը, համբարձումը և Հոգոյն սրբոյ իջումն աշակերտ-

ների վրա և այլն։

գ. Դասատուն, շաբաթական երկու դաս. վեցերորդ տարումը այս դասատան կրօնական առարկաները միևնոյն երկու դասատան դասախօսութիւնքը պէտք է լինին, իբրև կրկնումն, նոյնի, բայց ընդարձակօրէն։ Այս դասախօսութեանց վրա պէտք է աւելանայ և Քրիստոնէական վարդապետութիւն, որովհետև սա դասատան աշակերտին է վերաբերում. նոցա զարգացմանցը համաձայն է այս դասաղիրք այն պատճառով, որ Քրիստոնէական վարդապետութիւնը, Աստուածաբանական խնդիրներ են, և եկեղեցական սուրբ խորհրդների բացատրութիւններ։ Այլև ուսուցանել այստեղ նաև տան պատուիրանաց մեկնութիւնը։

Չորրորդ դասատունի եօթներորդ տարում. այս դասատնում պէտք է պարապեցնել աւետարանի մեկնութիւնով համեմատաբար հին կտակարանի հետ։

Գծագրութեան և նկարչութեան նախազիծը

Մ. Տէր-Սարգսեանի

Գծագրութիւնը ծանօթացնում է աշակերտներին այն ամէն սկզբունքների ու միջոցների հետ, որոնցից և իւր ծագումը պիտոյ է առնէ երկրաչափութիւնը, ուրեմն աշակերտք նախ պիտի ծանօթանան գծագրութեան, ապա երկրաչափութեան հետ։

Գծագրութիւնը ուսուցանում է երկրաչափութիւնից համարեա մեծ մասը, այն դանադանութեամբ միայն, որ նա մի որևէ խնդիր լուծելու ժամանակ ապացուցանելու կողմից

առաւել խորը չէ մտնում, քան երկրաչափութիւնը։ Գծագրութիւնը պատմում է միայն կանոնը և անցնում. իսկ երկրաչափութիւնը բաւական չէ համարում այդ միևնոյն խնդիրը լուծելու համար կանոնները միայն, այլ նա դիմում է զանազան, աշակերտներին արդէն ծանօթ, կողմնակի միջոցների ու ակներև ճշմարտութեանց, որոնց վրա հիմնելով գալիս հասնում է խնդրի լուծմանը։ Աւելորդ չէր լինի կարծում եմ, եթէ ունէինք մի բան գծագրութեան և երկրաչափութեան մէջ ու տեսնէինք թէ այդ միևնոյն բանը ինչպէս է վճռում գծագրութիւնը և ինչպէս երկրաչափութիւնը. առնենք դիցուք *եռանկիւնին.*—գծագրութիւնը եռանկեան մէջ 2 ուղիղ անկիւն է ընդունում և ի հաստատութիւն իւր ասածի, չափում է անկիւնաչափով և վերջացնում, իսկ երկրաչափութիւնը, ինչպէս ասացի, այդպէս չէ վարում, նա այդ ցոյց տալու համար վկայէ կանչում այն քանի մի ճշմարտութիւնքը, զորս նա սկզբումն է անցել. ինչպէս օրինակ հանդէս է դուրս բերում խաչաձև անկիւններ, մի կէտի շուրջը գտնուած անկեանց գումարի թիւը, համապատասխան անկիւններ և այլն և այլն, որոնց վրա ուշադրութիւն անգամ չէ դարձնում գծագրութիւնը իսկ երկրաչափութիւնը հիմնելով դրա վրա վճռում է խնդիրը։

Գծագրութիւնը պէտք է ծառայէ այն ընկզբունքին, որ վարժեցնէ աշակերտներին թղթի կամ տախտակի վրա իւր չորս կողմում գտնուած առարկաները, ինչպէս օրինակ վառարան, սեղան, աթոռ և այլն։ Աշակերտներից

նոքա, որք ընդունակութիւն ցոյց կուտան գրծագրութեան մէջ, անկասկած նոքա լաւ արհեստաւորներ կարող են լինել. ինչպէս օրինակ ատաղձագործ, հիւսն, քարտաշ. որմնադիր և այլն. ինչ կտեսնենք մենք արդեօք, եթէ ուշի ուշով քննելու լինինք մեր արդի արհեստաւորների դրութիւնը, ոչ ապաքէն տղիտութիւնից է, որ մեզանում նահապետական հիւսները, քարտաշները, որմնադիրները և այլ արհեստաւորները իրանց կոպիտ ու անկանոն շինուածքով շատ յետ են մնացած. առաջարկիր հիւսնին մի նոր աթոռ, սեղան կամ անկողնակալ շինել, տուր մինչև անգամ նորան ձևը, նա չի կարող ձեր ցանկութեանը բաւականութիւն տալ. և եթէ յաջողի էլ նրանց շինել դիցուք ձեր ճաշակին համաձայն մի սեղան կամ աթոռ, անկասկած կըյանձնէ նա ձեզ նորան հանդերձ մի որևէ նշանաւոր պակասութեամբ, որը նորա աչքին երբէք չէ զարնում, ինչպէս օրինակ կարող է պատահել, որ աթոռի կամ սեղանի ոտերը կլինեն թեք, փոխանակ ուղղահայեացի և այլն ասպէս։

Ա. դասատուն

Կէտ, գիծ. *գծերի տեսակները.*—ուղիղ, կոր, բեկեալ, շրջանաձև և խառն գծեր. երկու կէտերու մէջ ամենակարճը ուղիղ գիծն է. *գծերի տեսակները նոցա գրութեանցը նայելով.*—հորիզոնական, թեք, ուղղահայեաց և զուգահեռական գծեր, բոլորակաձև կամ շրջանակաձև գծեր իբր զուգահեռականներ, ուղղիշ, կապարեայ, փայտեայ և ջրային հարթաչափեր, գծագրական քանոն և եռանկիւնի, տուած գծի վրայի կէտին ուղղահայեաց իջեցնել գծագրական եռանկեան և քանոնի օգնութեամբ, կարկին (ցիրկուլ)։ Տուած գծի վերա նորա վերևում եղած կէտից ուղղահայեաց իջեցնել կարկինով, գծերի համեմատութիւնը, գծաչափ (մասշտաբ), տուած գիծը բաժանել երկու հաւասար մասերի (քանի մի եղանակաւ), տուած գիծը բաժանել անզոյգ միմեանց հաւասար մասերի։ Անկիւն. *անկիւնների տեսակները.*—ուղիղ, սուր, բութ. կից և զագաթն անկիւններ, նկարել տուած անկեանը հաւասար մի այլ անկիւն (երեք եղանակաւ). տուած անկիւնը 2 հաւասար բաժին անել (2 եղանակաւ), ուղիղ անկիւնը 3 հաւասար մասն անել, բաժանել շրջանը 360 աստիճանների, անկիւնաչափ, երկու կէտերի միջի տարածութիւնը չափել երբ դոքա անջատուած են միմեանցից կամ ջրով և կամ մի այլ բանով. եռանկիւնի, *եռանկեանց տեսակները նայելով նոցա կողմերին.*—Հաւասարակողմն, հաւասարասրունք և անհաւասարակողմն եռանկիւնիներ. *եռանկեանց տեսակները նայելով նոցա անկիւններին.*—ուղիղ, սուր և բութ անկիւն եռանկիւններ, եռանկեան բարձրութիւնը, կարելի է արդեօք երևակայել մէջ կողմերը միմեանց վերա ուղղահայեաց դրութեամբ երկու ուղիղ անկիւն, կարող է պատահել եռանկեան մէջ երկու բութ անկիւններ, նկարել կարկինով հաւասարակողմն հաւասարասրունք եռանկիւնիներ։

Նկարչութիւն

Սկսելով աստիճան առ աստիճան բոլոր նկարները, ինչպէս օրինակ՝ ուղիղ գծեր և նո-

ցանից կազմուած զանազան ձևեր, այսինքն պատուհան, դուռն, սեղան, գիրք, քարեսախտակ, տուն և այլ նոցա նման շատ առարկաներ այլև երկրաչափական մարմինները հանդերձ իրանց ստուերներով, ինչպէս և ցոյց կուտայ օրինակը, ապա այդ ստուերի օգնութեամբ քանի մի ընտանի կենդանիների և թռչունների մասեր, ինչպէս օրինակ՝ գլուխ, ոտք և այլն։

Բ. դասատուն

Քառանկիւնիներ.—քառակուսի բոմբ, ուղիղ անկիւն քառանկիւնի, պարալելոգրամ, տրապեցիա և անհաւասարակողմն քառանկիւնի. *բազմանկիւնիներ.* հինգ անկիւնի, վեց անկիւնի, եօթն անկիւնի, տասն և հինգ անկիւնի և այլն բազմանկեան բարձրութիւնը, կանոնաւոր և անկանոն բազմանկիւններ, նկարել շրջանի մէջ քառակուսի և քառակուսու մէջ շրջան։ Ձևերի բաժանումն, չափել քառակուսու ուղիղ անկիւն քառանկեան, պարալելոգրամի և տրապեցիայի մակերևոյթը, շրջանը և նրա մէջ պատահող գծերը. նկարել երկու քսուող շրջապատներ (երկու եղանակաւ), համակենտրոն շրջաններ, աղեղը և նորա կիսելը, երեք կէտերի վերայից քսուող շրջան քաշել, գտնել շրջանի կենտրոնը, նկարել կամ բարձրութիւնը մեծ լայնութիւնից և կամար բարձրութիւնը հաւասար լայնութեանը *պտուտագիծ.* 2, 4 և 8 կէտերով պտուտագիծ քաշել։

Նկարչութիւն

Երկրաչափական մարմինների նկարելը, միայն ոչ օրինակից, այլ դնելով իսկական մար-

մինը սեղանի վրա ու նկարել այնպէս ինչպէս և ինչ կերպ ստուերներով որ նա երևում է աշակերտներից ամեն մինին, ընտանի ու վայրենի կենդանիներ և թռչուններ ամբողջապէս ու լիակատար կենդանի ստուերներով, մարդոց պատկերներ նոյնպէս կենդանի ստուերով, տերևաթափ և տերևոտ ծառեր, մեծացնել կամ փոքրացնել մի որևէ պատկեր քանի մի անգամ, իմանալ դորա կանոնները, նկարել քանի մի հեշտ և պարզ քարտէզներ առանց սահմանների և աստիճանների, երկրագործական գործիքներ, - արօր, չութ, ցաքան մանգաղ, դերանտի։

Գ. դասատուն

Նկարել շրջանի մէջ հաւասարակողմն եռանկիւնի (2 եղանակաւ) և ստանալ 6 և 12 անկիւն կանոնաւոր բազմանկիւններ, նկարել շրջանի մէջ կանոնաւոր 5 անկիւնի (2 եղանակաւ), տուած գծի օգնութեամբ նկարել 5 անկիւնք, նկարել շրջանի մէջ կանոնաւոր 6 անկիւնի ու ապա 12, 24 և այլն, կանոնաւոր 7 անկիւնի (3 եղանակաւ), կանոնաւոր 8 անկիւնի, քառակուսի և ապա կանոնաւոր 8 անկիւնի և 16 անկիւնի, կանոնաւոր 9 անկիւնի, կանոնաւոր 11 անկիւնի բազմանկիւններ, տուած գծի վերա նկարել ամեն տեսակ կանոնաւոր 5 անկիւնի, նկարել շրջանի դուրսը և ներսի կողմերը միմեանց զուգահեռական կանոնաւոր 6 անկիւնի. *օվալ նու էլիպսիս.* ձուաձև օվալ, երկու միմեանց կենդրոնների վերայից անցնող շրջապատների օգնութեամբ նկարել էլիպսիս, երկու միմեանց քսուող ու հաւասար շրջապատ-

ների օգնութեամբ նկարել էլիպսիս, երկու միմեանց քաւող՝ իսկ մէկ նոցա կենտրոններից անցնող շրջապատների օգնութեամբ էլիպսիս. նկարել էլիպսիս աղեղների օգնութեամբ (2 եղանակաւ), նկարել էլիպսիս մի շրջապատի օգնութեամբ, նկարել էլիպսիս մի որևիցէ երկայնութեան և լայնութեան վերայ ուղիղ անկիւն քառանկիւնի կազմելով, աւած երեք կէտերու վերայով նկարել ուղիղ առանց կենդրոնների (2 եղանակաւ). այլև կրկնութիւն Ա. և Բ. դասատանց դասընթացքի։

Նկարչութիւն

Նկարել զանազան տեսակ մրգեր, օրինակից և իսկականից իրանց իսկական սաւերներով, մարդոց, կենդանեաց, թռչնոց, աւերակաց, ծառերի և այլ զանազան այս տեսակ բաների մեծագիր պատկերներ, առագաստաւոր և անառագաստ նաւեր, շօգենաւեր, և այլն, և վերջապէս Հայաստան աշխարհի ու Կովկասի մանրամասն մեծագիր քարտէզներ, սահմանները որոշելով։

Գ. դասատուն

Այս դասատան համար գծագրութիւնից ոչինչ չենք գնում, պատճառ նա աւանդւում է երրորդ դասարանում, պատրաստելով այն ամեն նիւթերն ու պատրաստութիւնները, որոնցով առաջնորդւի պէտք է երկրաչափութիւնը։

Նկարչութիւն

Նկարել հատ թղթի վերա հայկական պատմութիւնից առնւած պատկերներ, ինչպէս օրինակ,—Հայկ, Վարդան, Վարդանանց պատերազմ, Ոգի Հայաստանի և այլն, Հայաստանի նշանաւոր աւերակներից մի քանիսը (եթէ միայն ձեռք կըբերւին), այլև անցուցանել դոցա պատրաստեալ վիմագրական քարերի վերայ, եթէ միայն հնար կլինի ձեռք բերել։

Բնական պատմութեան նախագիծը

Աբրահամ Ամիրխանեանի

Նախ և առաջ պէտք է իմանալ, որ ոչ այս դպրոցը և ոչ էլ մի ուրիշը լեզուն կամ գիտութիւնը նոյնպէս և բնական պատմութիւնը իբրև մասնաւոր գիտութիւն չի աւանդում, ուստի հեռու պէտք է լինի այս առարկայիս դասաւուութիւնը որևէ սիստեմատիկականապէս ուսումնական բացատրութիւններից, դասակարգութիւնից և այլ այս օրինակ բարձրուսում գործողութիւնից։ Տարակոյս չկայ, որ դպրոցիս նպատակն է ծանօթացնել իր աշակերտին բնութեան հետ կամ՝ ինչպէս այս առարկայիս անունն է՝ բնութեան պատմութեան հետ, այսինքն նախամեծարապէս թէ ինչպէս է սկսում, աճում, զարգանում, զառամում և մեռնում բնութիւնը և թէ ինչպէս է սկսել աճել ու զարգացել հասել այս այժմեան վիճակին, միով բանիւ հասու լինել նորա անցելոյն ու ներկային նորա պատմութեանը։

Բնութեան երեք թագաւորութիւն կոչւած և նրանց կազմող իւրաքանչիւր մի անհատի հետ՝ թող հանք, թող բոյս, թող կենդանի լինի նա՝ պէտք է ծանօթանայ դպրոցիս աշակերտը այնպէս, ինչպէս որ ծանօթ է իր ազգականների և բարեկամների հետ, իրեն շրջապատող

բնութեան մի որևէ անհատը (հանք, բոյս, կենդանի) տեսած ժամանակը, իսկոյն պէտք է իմանայ նրա ծագումը, ծնունդը, աճումը, զարգացումը, նրա բնաւորութիւնը կենաց պայմանքը, կենցաղավարութիւնն ու կենսագրութիւնը, վերջապէս նրա օգտակարութիւնը կամ վնասակարութիւնը։

Հարկաւ նախքան այս պէտք է ծանօթանալ նորան իրեն քաղաքումն, իրեն քաղաքի մօտերումն, իրեն գաւառումն ու իրեն հայրենիքումն գտնուող բոյսերին կենդանիներին ու իրեն ու հանդերին հետ և ապա իմանալ թէ ինչ է Աֆրիկէյի արմաւէնին, Հնդկաստանի փիղը Աւստրալիոյ կոցաւորը և այլն և այլն։

Մերձաւորն էլ ճանաչելու համար անհրաժեշտ է ծանօթանալ նախ և առաջ նրա արտաքին կերպարանքին, յետոյ նրա բնութեանն ու կենացը և այնուհետև նրա ներքին կազմուածքին և յատկական անդամոց չափերին, ձևերին ու թւերի հետ, և ոչ թէ ընդհակառակն, սկսել նրա տարրական բաղադրութիւններից կամ ատամների ու ոսկորների թւերիցը, որ անսպատակ ժամանակի կորուստ կլինի և աշակերտներին ձանձրութեիւն տայուն համար վընասակար։

Բնութեան մէկ կարգի բուսոց կամ կենդանեաց հետ ծանօթանալէն զկնի կարող է իմանալ աշակերտը նաև դասակարգութիւնը ցեղը, սեռը և այլն։

Սակայն բոլորովին խոյս տալ պէտք է աշակերտաց հետ բնական պատմութեան ժամանակ կենդանեաց կամ նոյնիսկ բուսոց սեռական

յարաբերութեանց վրա խօսելուց, սա ուշադրութեան արժանի է։

Դժբաղդաբար հարուստ չէ Ալէքսանդրապօլն և նրա շրջակայքն ոչ բոյսով, և ոչ նոյն իսկ հանքով կամ կենդանօք, որ վարժապետին հնարաւոր լինէր նորանոր անհատներ ներկայացնել իր մատաղ ունկնդիրներին և այնու մշակել նոցա ճաշակն ու հասկացողութիւնը և կենդանացնել հետաքրքրութիւնը այդ ճիւղի համար. սակայն կրգտնուին դարձեալ այնչափ նիւթեր որ մի աշխատասէր վարժապետ կարող է նեղութիւնը յանձն առնելով մի արդիւնք առաջ բերել։

Ընդունելով թէ բնական գիտութեան հետ աւանդւում է դպրոցում նաև տարրագրութիւն շաբաթական 3 դաս, 2 բնական գիտութիւն և 1 տարրագրութիւն և այդ է առաջին (Ա,) դասատանից սկսած, բնական պատմութիւնն էլ կարող է շաբաթական 3 կամ առնւազն 2 դասով նոյն Ա. դասատանից սկսել իր գործը։

Առաջին տարի

Զմեղը. կով, կատու, մուկ, ճնճղուկ, էշ, շուն, թռչուն, խոզ, սագ, բադ, ձի, ոչխար, այծ, լու, հաւ, ձուկ, ոգնի։

Գարունը. ծիծեռնակ, ճնծաղիկ, բոյս, ծառ, հաւկիթ, վառեակ, թիթեռնիկ, թրթուր, զատկաբզեզ, ուռի, բողբոջ, ծաղիկ, պտուղ, կորիզ։

Երկրորդ տարի

Ձմեռը, չիղջ, ճագար, նապաստակ, աքաղաղ, ցին, բազէ, սիրամարգ, թութակ, խաղտ-

նոտիկ, ծառկոտկոտ, սոխակ, կռունկ, սկիւռ, մեծ մուկ, բու, աղաւնի։

Գարուն, օձ, մողէս, մրջիւն, մեղու, գորտ կրեայ, ցորեն, կորեկ, գարի, բրինձ, որթ, ծիրան, նուշ, տանձ, խնձոր, սեխ, ձմերուկ վարունգ, դդում։

Երրորդ տարի

Ուսուցչի առաջնորդութեամբ ցուցանել եւ անուանել բուսոյ և կենդանեաց աչքի դիպչողնշանները՝ զօրօրինակ, գոյն, ձու, հոտ համ, իսկ յետոյ տանը գրաւոր աշխատել միևնոյն նիւթի վրա և տալ վարժապետին սրբագրելու համար։

Ձմեռը. մարդակազմութեան մէկ մասը օր. ոսկորներն ու մկնամսերը, ջիղերն ու ջիլերը նոցա պաշտօնն ու գործողութիւնը։ Հանքերից մետաղները՝ երկաթ, պղինձ, կապար, կլայեկ, արծաթ, պլատին, ոսկի,

Ամառը. բազլա, սիսեռ, ոսպ, լուպիայ, ընկոյզ, պիստակ, կաղնի, կաղամախ. թութ, ելակ, մանուշակ, նոյնպէս և պղպեղ, մեխակ, կինեմոն, և ուրիշ բուսական համեմիք (թէյ և սուրճ) և դեղօրայք։ Հանքերից կրաքար, աւազաքար, տուփ, տախտակաքար, տորֆ, քարածուխ և կիսածուխ։

Չորրորդ տարի

Մարդակազմութեան շարունակութիւն՝ շնչառութիւն, արեան շրջան, սնունդական գործիք ու գործողութիւն։ Կենդանաբանութիւն. ա. ողնաշարաւորք, օր. կաթնասուք, թռչունք,

երկակենցաղք և ձկունք. բ. անդամաւորք օր. զեռունք, սարդանմանք, անօթաւորք և սողունք. գ. փորաւորք օր. թոյլք, շառաւիղաւորք, բազմոտանիք և մանրացուցական ջրաճճիք։ Բուսաբանութիւն 1, հիւսուածք, 2, կենդարանագրութիւն, օր. արմատ, բուն, բողբոջ, տերև, ծաղիկ պտուղ. 3, կենսագրութիւն օր. կենաց ընդհանուր երևոյթքը, և սնունդը, օդի և եղանակի ազդեցութիւնը բուսաբանութեան բնական և արուեստական սիստեմաները։ Հանգստանութիւն, մետալանմանք, թեթև մետաղք, գայլախաղային, ծանր մետաղք և գործարանաւորական բաղադրութիւնք։ Երկրագիտութիւն. միատեսակ և բազմատեսակ կամ տեսակախառն քարեր ձևաբանութիւն քարանց, օր. նոցա ներքին և արտաքին ձևերը, շերտակազմութիւն. քարացումն և վաղեմագիտութիւն։ Երկրաբանութիւն. երկրակազմութեան պատմութիւն, երկրագիտական սիստեմայք. ա նեպտունական կամ ջրազդեցական շինուածք, բ. պլուտոնական կամ հրազդեցական շինուածք։

Այս դասատուութեան հարկաւոր են մետաղներ, միներալներ, հանքեր, մի ամրաչափ, և քարացեալ կենդանիք, 60—70 ռուբլի գնով միջին տեսակը, իսկ 110—130 ռուբլի լաւը։

Գերմաներէնի նախագիծը

Ա. Ամիրխանեանի

Դասընթացը լինելու է շաբաթը 4 դաս։

Առաջին տարի

Մօրից Օրտել։ Ուղիղ արտասանութիւն գրերի. վարժ ընթեռնուլ։ Ցիշել գրքոյկից ամ-

բողջ առաջին մասը և երկրորդ մասի գրաածի պէս կտորները քերականութիւնից՝ յօդ (որոշ և անորոշ), գոյական անւանց սեռը, թիւը հոլովներն ու հոլովումները, ածական անւանք, նոցա գոյականների հետ յարմարութիւնը, քերականութիւնից համապատասխան մասը։

Երկրորդ տարի

Այս տարի վարժապետը սկսում է ինքը սովորաբար գերմաներէն խօսել աշակերտաց հետ բայց նոքա պատասխանում են հայերէն և աշխատում են, որ գերմաներէն էլ յայտնեն իրենց միտքը, այս վարժողութիւնը աստիճանաբար զարգանում է։ Գրաւոր տշխատանքը ընդարձակւում է։

Օրտէլի երկրորդ մասը և 3-ը կվերջացնեն միայն մի քանի կտորները թողելով և կսկսեն Բէրթէի գիրքը։ Քերականութիւնից՝ բայերից բոլոր անկանոնները, ամեն տեսակ խոնարհումներն ու ժամանակները, բոլոր թւականներն ու դերանունները, նախադրութիւնք և նոցա վարումը հոլովների հետ, մակբայները շաղկապներն ու միջարկութիւնքը։ Համաձայնութիւնից՝ պարզ նախադասութեան, գլխաւոր նախադասութեան, հարցական նախադասութիւն, պայմանական ու երկրորդական։ Բաղադրեալ նախադասութիւն, խօսքերի շարակարգութիւնը։ Իւրաքանչիւր դասի 30 բառ սովորել։ Հայերէն փոքրիկ և թեթև կտորներ գերմաներէնի վերածել։

Երրորդ տարի

Այս տարի ուսուցիչ և աշակերտք խօսում են միայն գերմաներէն բաց առնելով դժւար տեղերը, որ մէկ հայերէն խօսք կամ նախադասութիւն պէտք է օգնէ։ Համաձայնութեան ընդարձակութիւնը։ Բէրթէի գրքից լաւ մասերը, մանաւանդ ոտանաւորները։ Գրաւոր շատ աշխատել և հայերէնից շատ թարգմանել գերմաներէնի։ Երևելի բանաստեղծների գրաածներից լաւ կտորները ի բերան սերտել և ուղիղ շեշտելով ասել։

ԾԱՆՕԹ.—Միւս տարկանների ծրագիրը չէ պահւած։

III.

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆ.

(1886—1891)

Ընդհանուր դիտողութիւններ

1886 թուին Բարձրագոյն հրամանով վերաբացուեցին հայ դպրոցները։ Նոքա, սակայն, չըստացան նախկին կազմակերպութիւնը, թէև չկար պետական օրէնքների կողմից ոչ մի արգելք, որ դպրոցներն սառանային աւելի լայն ուսման ծրագիր։ Պետական օրէնքն ասում էր, հայ այն դպրոցներում, ուր աւանդւում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, պէտք է աւանդւին ռուսաց պատմութիւն և ռուսաստանի աշխարհագրութիւն։ Իսկ այս խօսքերի եզրակացութիւնն է, որ հայ դպրոցները կարելի էր վերածել այնպիսի տիպի ուր աւանդւէին այդ առարկաները։

Մակար կաթուղիկոսը չանալով մեր դպրոցներին մի ընդհանուր կանոնադրութիւն և ծրագիր տալ, սեղմեց անտեղի կերպով հին կիրառւող ծրագրներն ու բոլոր դպրոցները վերածեց երկու տիպի։ Մէկ սկզբնական դպրոց երեք բաժանմունքով և միւսը տարրական՝ հինգ բաժանմունքով. իրենց ծրագրով այդ երկու տիպի դպրոցներն հաւասար էին իրենց

սառրին երեք բաժանմունքով, տարրականը շարունակութիւնը լինելով սկզբնականի ունէր վերջնիցս միայն երկու տարւայ դասընթաց աւելի։

Այդ դպրոցները անյաջող անուանումով կոչւում են միդասեան և երկդասեան, թէև միդասեանը 3 պատրաստականից է բաղկացած իսկ երկդասեանը 3 պատրաստականից և երկու դասարանից։

Մակարի տիպի սեղմւած այս դպրոցները, դժւար չէ հասկանալ, որ մի քանի քայլ դէպի ետ էր։ Մակարի տւած կանոնադրութեամբ ստեղծւում էին հոգաբարձական մարմիններ 3 կամ 5 անդամից, նշանակովի էր նախագահող քահանան կամ վարդապետը։

Կազմւում է մինչի դպրոցների վերստին փակելը—1896 թ. միացեալ հոգաբարձութիւն։ Դպրոցների եկամուտները գանձւում էին մի ընդհանուր էրամարկղի մէջ և ապա իւրաքանչիւր դպրոցի գանձապահ հոգաբարձուն ստանում է ընդհանուր գանձարանից իր դպրոցի բացը ծածկելու համար ամսէ ամիս մի որոշ գումար։ Կարճ ժամանակով լինում է նաև ընդհանուր տեսչութիւն։

Ինչ և է, 1886—87 ուսումն տարւանից արդէն բաց էին հայ դպրոցները։ Նոքա ստացան նաև յատուկ մի անուն—եկեղեցական ծրխական։ Վերացաւ հոգևոր և վիճակային անունը մեր դպրոցի վերայից. չվերաբացուեցին նրա 3-րդ և 4-րդ դասարանները ու այնուհետև դառաւ նա մի ծխական դպրոց։ Դպրոցի ուսման ծրագրի, կանոնադրութեան մասին աւելորդ եմ

համարում մանրամասն խօսել, դա ծանօթ է ընդհանրութեանը։

1886 - 87 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԻ

Դպրոցների վերաբացման հրամանն ստանալուց յետոյ Ալէքսանդրապօլում անմիջապէս հոգաբարձական ընտրութիւններ են կատարւում։ Փոքրի դպրոցի հոգաբարձութիւնը հաստատւել է հոկտեմբերի 9-ի № 530 հայրապետական կոնդակով։ Հոգաբարձուք են Յ. Վանեցեան, Յ. Սահրատեան, Պ. Հայկազունի, Կ. Օհանջանեան և Գ. Ղասապեան։ № 531 կոնդակով հաստատւում է Արղութեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը (Խ. Իսահակեան, Ա. Նալեան, Ա. Խան-անուշեան. Յ. Բաբայեան, և Ս. Միրզայեան)։

Բայց տարին չլրացած ծագում են անհամաձայնութիւններ հոգաբարձութեան և նրա նախագահ ու հոգևոր կառավարութեան նախանդամ Յովսէփ ա. ք. Կոստանեանի մէջ, ուստի և կաթուղիկոսական կոնդակով ղրկւում է Ալէքսանդրապոլ թեմի առաջնորդ Գեր. Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան եղելութիւնը քննելու և գործը հաշտութեամբ վերջացնելու։ Շատ չանցած նշանակւում է նոր ընտրութիւն։ Նորընտիր հոգաբարձուք — Ս. Մատակեան, Ա. Զանլաթեան, Ս. Խոյեցեան, Ագուլեան, Գրիգոր Վէքիլեան — հաստատւում են մարտի 10-ի № 133 կոնդակով։ Դրանով և վերջանում է այդ, իր ժամանակին շատ աղմուկ հանած ընդհարումը։

Դպրոցը բացւել է աշնանը. օրագրական մատեաններից գիտենք, որ նա ունի 7 բաժանմունք, այսինքն 3 պատրաստական մի մի զուգընթացով և տ. դասարան. աշակերտների ընդհանուր թիւն եղել է 269. Ուսուցչական խումբը.— Տեսուչ՝ Գ. Տէր-Պետրոսեան, ուսուցիչներ՝ Հ. Նիկողոսեան, Ս. Տէր-Գրիգորեան, Մ. Տէր-Մարտիրոսեան, Խ. ք. Աբգարեան, Ա. Մխիթարեան, Խ. Միրզայեան, Ա. Պահլաւունի, Մ. Տէր-Սարգսեան, Մ. ք. Գիւլումեան, Ա.՝ք. Նալբանդեան, Ն. Ղարագօզեան։ Ուսումնար. տարին վերջացել է յունիսի 15-ին։

1887 – 88 Ուսումն. տարի.

Դպրոցն ունի 3 պատրաստական զուգընթացներով և 2 դասարան. աշակերտների թիւն է 341. որոնցից ձրիավարժներ 69 հոգի։

Հոգաբարձութեան նախագահն է Գ. եպ. Աղանեան։ Հոգաբարձութեան երկու անդամ Ս. Մատակեան և Ա. Զանլաթեան չեն գործում, հրաժարւել են և դուր տեղն է համոզում նոցա հոգաբարձութեան նախագահը գալ իրենց պաշտօնին։

Դպրոցում աւագ-ուսուցիչ է Պօղոս Տէր-Պօղոսեան (ճեմարանաւարտ). ուսուցիչներն են Մ. Սարգսեան. Ա. ք. Նալբանդեան, Վ. Տէր-Վարդանեան, Վ. Բարսամեան, Յարութիւնեան, Ս. Տէր-Ստեփանեան, Ե. Դեօնջեան, Լալայեան, Ս Խան-Աղեան, Աղ. Մխիթարեան, Ա. Բրտեան, Հ. Նիկողոսեան, Հ. Ստեփանեան։

Մանկավարժական ժողովը զբաղուել է ընթացիկ խնդիրներով, ինչպէս են, դասագրքերի ընտրութիւն, դասատիարակներ նշանակել, կարգապահական խնդիրներ և այլն։

1888 - 89 Ուսումն. տարի.

Հոգաբարձութեան կազմը մնում է նոյնը. նախագահն է Յովսէփ Ա. ք. Կոստանեան։

Տարեայ տեսուչն է մանկավարժ Յովհաննէս Տէր-Միրաքեանը, որն երևում է ժողովների բոլոր արձանագրութիւններից։ Խումբը կազմուած է հետևեալ ուսուցիչներից.—Ա. Մխիթարեան, Ա. Բրտեան, Հ. Նիկողոսեան, Հ. Նոհրատեան, Ս. Խան-Աղեան, Ե. Լալայեան, Մ. Ա-բրաՀեան, Ա. Բաբայեան, Ն. Տէր-Վարդանեան, Ա. ք. Նալբանդեան, Արշ. Մխիթարեան, Մ. Սարգսեանց։

1887 - 88 ուսումն. տարին վերջանալուց յետոյ ս. Փրկչի և Արղութեան գպրոցների տեսուչները—Յ. Տէր-Միրաքեան և Կ. Զալալեան—խորհրդակցելով որոշում են յաճախ մանկավարժական խմբերի խառն ժողովներ անել և քննել ընդհանուր մանկավարժական խնդիրներ. օրինակ դասագրքերի, կարգապահական-կրթական խնդիրների մասին և այլն և իրօք էլ ընթացիկ տարեայ մէջ հէնց տարեայ սկզբից և յետոյ լինում են մի շարք խառը ժողովներ։ Որովհետև հարկաւոր է ուսման ծրագիր նման և լաւագոյն դասագրքերով անցնելը, ուստի խառն ժողովը լսելով իւրաքանչիւր առարկայի

ուսուցիչների կարծիքը, ընտրում է դասագրքեր բոլոր առարկաների համար։

Օգոստոսի 27-ի ժողովում Փրկչի խումբը ձեռնարկում է աշակերտների ընդունելութեանը. բայց որովհետև խնդիրները շատ են, ուստի և որոշում է ընդունելութիւնն անել վիճակով, որ այնուհետև դառնում է սովորական ու գործադրւում նաև այժմ։ Տարեայ մէջ շատ ժողովներում արծարծւում և լուծումն են ստանում մանկավարժական կարևորութիւն ունեցող խնդիրներ. ինչպէս են դասաւանդման եղանակի, աշակերտների հետ վարելու ու դասատիարակչական, կարգապահական, թեանշաններ դնելու խնդիրներ և այլն, մոռացման չենն տրւած նաև ուսուցիչների թերութեանց (ժողով V-րդ. հոկտմբ. 5), դասատիարակներ ընտրելու, աշակերտաց ընթերցանութեան և այլ խնդիրները։ Բացի սրանցից մի քանի ժողովներում կարգացել և հարցասիրութեան նիւթ է եղել տեսչի կարդացած շարադրութիւնը՝ Մանկավարժական մեթոդիքական խնդիրների մասին (խառն ժողով)։ Մի այլ (VIII-րդ) խառն ժողովում Տէր-Միրաքեանը կարդում է «Հոգեբանական-մանկավարժական խորհրդածութիւններ մեր կրթական գործն առնչական ուղղութեամբ և միահամուռ ուժով առաջ տանելու համար»։ Ապա որոշում է փորձնական դասեր տալ, որև կատարւում է. տալիս են համարեա բոլոր առարկաներից փորձնական դասեր։ Ըստ սովորութեան ամեն փորձնական դասատուող ուսուցիչ կարդացել է հետևեալ խառն ժողովին իր տւած դասի մասին մի ինքնա-

քննութիւն, ապա պաշտօնապէս դասին քննիչ նշանակուածը կարդացել կամ խօսել է արած դասի մասին, այնուհետև անցել են ընդհանուր քննութեան։

Ինչպէս այդ ցոյց է տալիս ժողովների արձանագրութեանց մատեանը, տեղիս դպրոցների բոլոր ուսուցչական խմբերն էլ լուրջ կերպով զբաղուած են եղել մանկավարժական ժողովներին մանկավարժական ամենատեսակ խնդիրներով, իսկ բոլորի կենդրոնը կազմել է Տէր-Միրաքեանը։

Դպրոցն ունի երեք պատրաստական զուգընթացներով և 2 դասարան. աշակերտների թիւն է 367. դպրոցի բիւդճէն յայտնի չէ։ Հաշուեմատեաններն ըստ նոր կարգի իւրաքանչիւր տարի ղրկուել են Հոգևոր իշխանութեանը։ Սեպագրութիւններ չկան,

1889—90 Ուսումն. տարի.

Հոգաբարձական գործեր չկան սեպտեմբերի 3-ին հաստատուում են կաթուղիկոսական կոնդակով № 436 հոգաբարձու Մ. ք. Գեօնջեան (երեսփոխան ս. Փրկիչ եկեղեցւոյ), Ա. Ավրիկեան և Ա. Յովհաննէսեան. անձնափոխանորդ Ա. Տիգրանեան և Մ. Կոստանեան։ Ինչպէս երևում է յաջորդ տարուայ գործերից, նախահաշուային տարին տևել է սեպտեմբերից սեպտեմբեր,

Տեղն են մանկավարժական ժողովների արձանագրութիւնները, որից երևում է, դպրոցից հեռացել է Յ. Տէր-Միրաքեան, նրա տեղ հրաւիրուել է Ենովք Գեօնջեան. խումբը փոխուել է. նա կազմուած է հետևեալ ուսուցիչներից. Ի. Քեանդարեան, Վ. Ժամակոչեան, Ե. Լալայեան, Գ. Բունիաթեան, Ա. ք. Նալբանդեան, Մ. Սարգսեան, Տէր-Վարդանեան, Ան. Տէր-Մատթէոսեան, Մ. Արաբաջեան։ Տեղի է ունեցել 24 մանկավարժական ժողով. որն զբաղուել է ընդունելութեանց, դասագրքերի, կարգապահական, փոխադրութեանց և այլ խնդիրներով։

Ուսումն. տարին վերջացել է հարցաքննութեամբ, որ սկսուել է մայիսի 21-ին և տևել մինչի յունիսի սկզբի օրերը։

Դպրոցում եղել է 386 աշակերտ, տեղաւորուած 8 բաժանմունքում, որոնցից 3-ը զուգընթաց սպատրաստականներ։ Փոխադրուել են 213, մնացել 98. արձակուել, 9-. վերաքննելի 35 և աւարտել են 31 աշակերտ։

1890—91 Ուսումն. տարի.

Հոգաբարձական գործերից կայ միայն այս տարուայ հաշուեմատեանի սեպագրութիւնը, որից իմանում ենք, որ դպրոցն ունեցել է այս տարում մուտք մինչի մայիսի 24 2191 ր. 80 կ. ելք մինչի յունիսի 27-ը 4626 ր. 87 կ.

Դպրոցի աւ. ուսուցիչ է Քրիստափոր Թադէոսեան, խմբի անդամներն են Ե. Գեօնջեան, Ա. ք. Նալբանդեան, Մ. Արաբաջեան, Վ. Ժամակոչեան, Թ. Ղազարեան, Ս. Վիրապեան, Յ. Կոստանեան, Ե. Դանդուրեան, Գ. Միքայէլեան, Ն. Տէր-Վարդանեան, Առաքելեան և տարուայ կիսից Հ. Տէր-Ղազարեան. որ ստանում են

բոլորը միասին ամսական 324 ր. 40 կ. տարեկան 3892 ր. 80 կ.

Յունուարին մեռնում է Փ. Թադէոսեանը ու ժամանակաւորապէս նրա տեղ հրաւիրւում է Վ. Բարսամեան, իսկ փետրուարից աւ. ուս. է Յ. Տէր-Պետրոսեան։

Ուսուցչական խումբն ունեցել է 26 ժողով։ Ընդունելութեան, թւանշաններ դնելու, դասագրքերի ընտրութեան, կարգապահութեան տարեվերջի փոխադրութեանց և այլ խնդիրների առթիւ։ Դպրոցն ունի նոյն բաժանմունքները նոյն զուգընթացներով. աշակերտների թիւն է 332. փոխադրւում են 83 վերաքննելի 103, մնում են 131. արձակւում են 14 աշակերտ. քննութիւնները տուել են յունիսի 3—14ը։

1891—92 Ուսումն. տարի.

Հաշիւներ չկան, ինչպէս և հոգաբարձական գործեր։ Հոգաբարձութիւնը միացեալ է։

Ուսումնական տարին սկսւում է սեպտեմբերի սկզբներին։ Աւագ ուսուցիչն է Տ. Վերանեան. ուսուցիչներն են Ա. ք. Նալբանդեան, Ա. Վիրապեան, Յ. Քնքուշեան, Ե. Թորչեան, Յ. Կարապետեան, Ն. Տէր-Վարդանեան, Վ. Արշակունի։

Մանկավարժական ժողովի 19 արձանագրութիւններ են մնացել (մինչի մարտի 5-ը)։ Զբաղմանց նիւթերն են վերաքննութիւններ և ընդունելութիւն, դասագրքերի ընտրութիւն, թւանշաններ, կարգապահական խնդիրներ, դասաւանդման եղանակներ՝ գրութեան, տետրակներ ընտրելու և այլն։

Դասարանների թիւը նոյնն է, աշակերտներ եղել են 348. տարւայ վերջը փոխադրել են 210, մնացել են 122. աւարտել են 16։

Մանկավարժական ժողովին ուղղած մի թղթից երևում է, որ այդ ուսումն. տարում հոգաբարձուք են, նախագահ՝ Մ. ք. Գեօնջեան, անդամներ՝ Մկրտիչ Կոստանեան, Դաւիթ Սարոյեանց։ Տարւայ մէջ հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ հրաժարեցնւում է Ա. Օհանջանեանը։

1892—93 Ուսումն. տարի.

1892 թւից գործում է հոգաբարձական նոր կազմ. նախագահն է Ա. ք. Նալբանդեան, հոգաբարձութեան անդամներ Խ. Իսահակեան, Մ. Կոստանեան, Գ. Սանոյեան, Աւ. Նալեան։ Հոգաբարձութիւնն ինչպէս արդէն ասել ենք, միացեալ է, բոլոր քաղաքիս ծխական դպրոցների համար։ Բոլոր դպրոցներն ունեցել են եկ. 10238 ր. 52 կ. ժուտք 11396 ր. ս. Փրկչի դպրոցի ել ու մուտքը այս թւին հասնում է. ժուտք 5600 ր. 58 կ. եկ. 5075 ր. 27 կ, Աւագ ուսուցիչն է Յովհաննէս Կոստանեան ուսուցիչները Յ. Կարապետեան, Բ. Սերովբեան, (մի ամիս) Մ. Սարգսեան, Ն. Տէր-Վարդանեան, Ա. ք. Նալբանդեան, Վիրաբեան, Գ. Միքայէլեան, որ ստացել են ամսական 256ր. 31կ. տարեկան 3075 ր. 72 կ. Յունուարին հրաւիրւել է Յ. Արաբաջեան, որի ռոճկի հետ միասին 3135 ր. 72 կ.

Դասարանների թիւը նոյնն է, ուր կայ 362 աշակերտ. փոխադրել են 218, աւարտել են 13, մնացել են 112, հեռացել են դպրոցից 26։

1893—94 Ուսումն. տարի

Հոգաբարձական կազմը նոյնն է և միացեալ է, տարւայ մէջ հրաժարւած մի հոգաբարձուի տեղ հրաւիրւում է անձնափոխանորդ Պ. Հայկազունին։ Դպրոցի աւ. ուսուցիչն է Յ Կոստանեան, ուսուցչական խումբը՝ Ս. Վիրաբեան, Ն. Տէր-Վարդանեան, Գ. Միքայէլեան, Արաբաջեան, Զ. Ջամբազեան։

Դպրոցն ունի նոյնչափ բաժանմունքներ, այսինքն 3 բաժանմունք զուգընթացներով և առաջին ու երկրորդ դասարաններ։

Աշակերտների թիւն է 341. փոխադրել են 214, աւարտել են 15. մնացել են 98. տարւայ մէջ հեռացել 24։

Բոլոր միացեալ դպրոցների ընդհանուր մուտքն է 17386 ր. 20 կ. ելքը 16854 ր.. 56 կ. Փրկչի դպրոցն իր հաշուեմատեանը չունի։ Մուտքն ու ելքը գրւում են հոգևոր իշխանութեան տւած մի ընդհանուր մատեանի մէջ։

1894—95 Ուսումն. տարի.

Հոգաբարձութիւնը, նման անցեալ տարւայ, միացեալ է։ 1894 թւի յուլիսից սկսած պաշտօնի է մտնում հոգաբարձական այլ կազմ. մինչի դպրոցների փակւելը եղել են մի քանի նախագահներ—Ա. վ. Շախեան, Ա. ք. Նալբանդեան։ Հոգաբարձութեան անդամներն են Յ. Խալաթեան, Ա. Կոստանեան, Պ. Զիլոցեան, Խ. Իսահակեան։

Այս տարի դպրոցը չունի աւ. ուսուցիչ այլ կայ քաղաքիս դպրոցների տեսչութիւն, որի համար միացեալ հոգաբարձութիւնը հրաւիրել է Յ. Տէր-Միրաքեանին։ Ուսուցչական խումբը կազմւած է հետևեալներից.—Կ. ք. Առաքելեան, Ս. Վիրաբեան, Գ. Միքայէլեան, Մ. Սարգսեան, Ն. Տէր-Վարդանեան, Յ. Կարապետեան, Կ. Ափինեան։

Այս տարում մի քանի մանկավարժական ժողովներ եղել են ընդհանուր տեսչի մասնակցութեամբ, ինչպէս ընդունելութեանց և մի քանի դաստիարակչական խնդիրների առթիւ։ Փրկչի դպրոցն ունենալով մասնակի իր մանկավարժական ժողովները, ժողովներ են տեղի ունեցել և դպրոցների ընդհանուր ուսուցչութեան։ Մեր դպրոցի մասնակի ժողովներն զբաղւել են դասագրքեր ընտրելով, կարգապահական, դասաւանդման եղանակների, փոխադրութեանց և այլ խնդիրներով։

Դասարանների թիւը նոյնն է, կան 392 աշակերտներ. աւարտել են 34 փոխադրւել են ²/₃-ը։

Հաշուեմատեանը մէկն է բոլոր դպրոցների համար. մուտք ունեցել են 19218 ր. 79 կ. ելք 19131 ր. 32 կ.

1895—96 Ուսումն. տարի.

Հոգաբարձութեան կազմը նոյնն է։

Դպրոցի աւ. ուսուցիչ է Սմբատ Վիրա-

պեան. խումբը մնում է անփոփոխ։ Ուսումն. տարին սկսւում է սեպտեմբերի 9-ից. կան մանկավարժական ժողովների արձանագրութիւններ։ Խումբն զբաղւել է ընդունելութեանց, դասագրքեր և դասատիարակներ ընտրելու, դասատիարակչական—կարգապահական խնդիրներով և այլն։

Դասարանների թիւը նոյնն է, բոլոր ուրթը բաժանմունքներում տեղաւորւած են 387 աշակերտ։

Դպրոցում պարապմունքները տևում են մինչի փետրուար։ Ինչպէս յայտնի է, Փրկչի դպրոցը միւս հայ դպրոցների հետ փակւեց 1896թ.

Միացեալ հոգաբարձութեան ընդհանուր մուտքն է 20524 ր. 73 կ. ելքը 16538 ր. 85 կ.

IV.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՇՐՋԱՆ

(1899—1905)

Հայոց դպրոցները փակւելուց յետոյ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձութիւնը Փրկչի ծխական դպրոցը վերածեց քաղաքային երկդասեան դպրոցի։

Դպրոցի ամբողջ վարչութիւնը գտնւում էր պ. հոգաբարձուի ձեռքը, իսկ նիւթականը հայթայթում էին դպրոցի կալւածները։ Դպրոցը կոչւում էր «ս. Փրկիչ եկեղեցուն կից քաղաքային երկդասեան դպրոց»։ Ուսման ծրագիրը հաւասարւել էր նոյն տիպի դպրոցների ծրագրին։ Ուսուցչական կազմը նշանակում և արձակում էր Կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութիւնը (սոյն դէպքում Երևանի ժողովրդական դպրոցների տեսուչը)։

Ս. Փրկչի դպրոցը իբր այդպիսին բացւել է 1899 թւի սեպտեմբերին և տևել է մինչև 1905 6 ուսումնարանական տարւայ սկիզբը, երբ Բարձրագոյն հրամանով հայ դպրոցները նորից վերադարձրին հայ եկեղեցական բարձր վարչութեանը։

Դպրոցի տնտեսական մասին վերաբերեալ և ոչ մի հաշիւ չգտանք դպրոցի գործերի մէջ։ Դիրեկցիայի կողմից դպրոցի տնտեսական մասը կառավարելու համար նշանակւել է հոգաբարձական մի խորհուրդ, որի անդամներն էին Ա. Լէքսանդրապոլի քաղաքային դպրոցի տեսուչը, քաղաքային վարչութեան անդամ Մ. Տէր-Սարգսեան և մի քաղաքացի՝ Ա. Իսահակեան։ Տէր-Սարգսեանը կոչւել է և պատուաւոր վերահսկող։

1899 - 1900 Ուսումն. տարի.

Դպրոցի աւագ ուսուցիչն է՝ Վաչագան Շահպիզեան։ Ուսուցիչներն են Ն. Ք. Նիկողոսեան, Զ. Մխիթարեան, Կ. Ափինեան, Գ. Միքայէլեան, Համ. Իսահակեան, Հ. Տէր-Ղազարեան, А. П. Параскевовъ, Ա. Բրուտեան. մանկավարժական այս խումբն ունեցել է տարւայ ընթացքում 13 խորհրդակցութիւն դպրոցի ընթացիկ գործերի մասին, ինչպէս են, աշակերտների ընդունելութիւնը, աշակերտների տներն այցելելը՝ նրանց ընտանեկան հանգամանքների հետ ծանօթանալու համար, դպրոցում տեղի ունեցած փորձնական դասի քննութիւնը, տարեվերջի փոխադրութիւնները և այլն։

Տարւայ վերջին աշակերտների թիւը 209, որից փոխադրւում են 131, մնում են 78 աշակերտ։ Դպրոցն ունի մի դասատուն՝ երկու բաժանմունքով և չորս զուգընթացով, ընդամենը 6 բաժանմունք։ Բ. բաժանմունքի աշակերտները փոխադրւում են նոր բացւող երրորդ բաժանմունքը, դպրոցում որոշւում է եկող տարի ընդունել միայն 61 նոր աշակերտ։

1900—1901 Ուսումն. տարի.

Աւագ ուսուցիչը նոյնն է, աւելացել են А. Стельмахъ, Ա. Իսահակեան, հեռացել է Параскевовъ. Մանկավարժական ժողովը ունեցել է 15 նիստ, որ զբաղւել է դպրոցական կեանքի սովորական նիւթերով, ինչպէս են դասագրքերի ընտրութիւն, կարգապահական, տարեվերջի ատուգութիւնների և փոխադրութեանց խնդիրներով։

Դպրոցն ունի երեք բաժանմունք, որոշւում է բանալ չորրորդ բաժանմունք։ Եղել է 328 աշակերտ, փոխել են 163 մնացել 110, տարւայ մէջ դուրս գնացել են 55,

Ուսումնական տարին սկսւել է սեպտեմբերի 1-ին, վերջացել յունիսի 1-ին։

1901—02 Ուսումն. տարի

Աւագ ուսուցիչը մնում է նոյնը. ուսուցչական կազմն է Հ. Տէր-Ղազարեան, Ващковъ, Հ. Իսահակեան, Պ. Մխիթարեան, Գ. Միքայէլեան, Ն. Ք. Նիկողոսեան, Ա. Բրուտեան, Կ. Ափինեան, С. М. Кобіева։

Մանկավարժական ժողովն զբաղւել է ընդունելութեանց, դասաւանդման, տարւայ մէջ արւած փորձնական դասերը քննադատելու, աշակերտների թոշակների և տարեվերջի փոխադրութեանց խնդիրներով։ Բաժանմունքների

թիւը նոյնն է դպրոցում կայ տարւայ վերջը 304 աշակերտ, փոխադրել 206, մնացել են 98։

1902 – 3 Ուսումն. տարի.

Աւագ ուսուցիչը նոյնն է. ուսուցչական խումբը կազմւած է այսպէս.—Е. Н. Ѳедотова, Ե. Ք. Նալբանդեան, Կ. Ափինեան, Հ. Տէր-Ղազարեան, Գ. Միքայէլեան, Հ. Իսահակեան,, А. И. Поспѣловъ, Բրտեան, Ѳедотова-ի տեղ նոյեմբերից պաշտօնավարում է Е. Х. Зарапова։ Մանկավարժական ժողովի նիստերն են 17. զբաղման նիւթերն են միևնոյն, ինչ որ նախընթաց տարում։ Անցեալ տարիների նման այս տարումն էլ երբեմն մանկավարժական ժողովի նիստերին ներկայ է լինում դպրոցի հոգաբարձական խորհրդի անդամ և վերահսկող Մ. Տէր-Սարգսեանը։ Դասարանների թիւը նոյնն է, տարւայ վերջը ներկայ են 282, փոխադրւել են 174 և մնացել նոյն բաժանմունքներում 108 աշակերտ։

1903 – 4 Ուսումն. տարի.

Աւագ ուսուցիչն է Սաղաթել Թաբաղեան. ուսուցիչներ Կ. Ափինեան, А. Поспѣловъ, Գ. Միքայէլեան, Հ. Տէր-Ղազարեան, Ե. Ք. Նալբանդեան, Հ. Իսահակեան, С. Іордановъ, Ա. Բրտեան, տարւայ կիսին հեռացել է Поспѣловъ հրաւիրւած է Джафарбековъ։

Մանկավարժական ժողովն ունեցել է 24 նիստ։ Բացի դրանից, որ ժողովը տարւայ ըս-

կզբում կազմել է բոլոր առարկաներից իւրաքանչիւր դասարանում անցնելու նիւթերի ցանկը, նա զբաղւել է ընթացիկ տարում նաև մանկավարժական ընթացիկ խնդիրներով՝ միւս տարիների նման։

Դասարանների թիւը նոյնն է. տարւայ վերջը կայ 279 աշակերտ. փոխադրւել են 198, մնացել են 81։

1904 – 5 Ուսումն. տարի.

Աւագ ուսուցիչն ու ուսուցչական խումբը մնում է նոյնը։ Տարւայ երկրորդ կիսին հեռանում է Джафарбековъ նրա տեղը բռնում է А. Филютовичъ

Մանկավարժական ժողովներ եղել են 12 և զբաղւել նոյն խնդիրներով, ինչպէս և անցեալ տարի։

Բաժանմունքները նոյնն են. տարւայ վերջն աշակերտների թիւն է 285. փոխադրել են 203 մնացել 82։

1905 – 6 Ուսումն. տարի.

Թէև դպրոցներն հայ հոգևոր իշխանութեանն յանձնելու հրամանը կայ, սակայն դիրեկցիան տարւայ սկզբին բաց է անում Փրկչի դպրոցն ըստ սովորականի։ Խումբը մնում է նոյնը. մանկավարժական ժողովներ արել են մինչի սեպտեմբերի 14-ը։ Սրանով, սակայն, վերջանում է այս շրջանը։ Շուտով փակւում է քաղաքային երկդասեան Փրկչի կոչւած դպրոցն

րոցը, խումբը ցրուում, ու նրա տեղը բացուում հայոց վիճակային հոգևոր ս. Փրկչի դպրոցը։ Որովհետև ուսումն. տարին արդէն սկսուած էր, հայ հոգևոր ծայրագոյն իշխանութիւնը հայրապետական կոնդակով պատուիրում է եղած ուսուցչական խմբից պահել նրանց, որոնք համապատասխան կլինէին իրենց կոչմանը, իսկ մնացածներին երկու ամսայ ռոճիկ տալ՝ նոցա բաւարարելու համար։

V,

ՆՈՐ ՇՐՋԱՆ

(1905—1912)

Ընդհանուր դիտողութիւններ

1905 թ. Կայսերական հրովարտակով վերադարձուում են ոչ միայն Հայոց եկեղեցական կալուածները, այլ նաև ծխական դպրոցները։

Ալէքսանդրապոլի ս. Փրկչի դպրոցը, որ հոգևոր դպրոց էր կոչուում, և որն այդ անունը կորցրել էր և Մակար կաթուղիկոսի ծրագրով և 1896 թ. լուսաւորութեան նախարարութեան ձեռքն յանձնելուց յետոյ, չէր փակուել։ Այդ մենք տեսանք նախընթաց շրջանների պատմութեան մէջ։

Կովկասեան Փոխարքայի ժամանակաւոր կանոնների հիման վրա ընտրուում է ս. Փրկչի համար ծխական հոգաբարձութիւն և 1905—6 ուսումնարանական տարով սկսուում է մեր դպրոցի պատմութեան այս նոր շրջանը։

Նախընթաց չորս շրջանների բնորոշումը, ինչպէս ընթերցողը տեսաւ, արդարացնում էին այդ բաժանումը։ Արդ, ինչ նոր անուն տալ այս սկսող շրջանին, որ բնորոշէ նրան առաջնորդող հիմունքները։

Իսկապէս ասած, դեկավարող այն հիմունքները, որ յատուկ են այս շրջանին, նոր չեն, հին են։ Այդ կողմից սա շարունակութիւնն է Հոգևոր դպրոցի նախորդ շրջանի, ու մնացած յետագայ երկու շրջանները միջանկեալ շրջաններ կարող էին կոչուել։

Հոգևոր դպրոցի պատմութեան առաջին երկու շրջանները (1840—1884) վարչական իրենց կազմակերպութեամբ, նամանաւանդ մինչի 1872 թուականը, տոգորուած են եղել ժողովրդական սկզբունքներով։ Այդպէս է և ներկայ շրջանը։

1905 թուի օգոստոսեան ժամանակաւոր կանոնները, որ յետոյ 1909 թուին Մատթէոս II-ի հրամանով տեղական հրահանգութեամբ ճոխացան, դպրոցների ամբողջ դէկը տալիս են ծխական ժողովին։ Հոգևոր իշխանութիւնը մնում է բարձր հսկողի և դեկավարողի դերում միայն։ Ժամանակաւոր այդ կանոնները ոչ միայն հրատարակման իր ժամանակի ընդհանուր ոգու ազդեցութիւնն են կրում, այլ նաև համապատասխանում են հայերի իրենց ազգային հիմնարկութիւնները կառավարելու ժողովրդական հին ոգուն։

Մակար կաթուղիկոսի օրով ճնշուեց, հալածուեց այդ ոգին, որի դէմ հալածանքն սկսուել էր դեռ Գէորգ IV-րդի օրով։ Դպրոցի ծրագիրները կրճատեցին, հոգաբարձութեան ընտրական սկզբունքը խախտուեց և աղաւաղուեց նրանով, որ հոգաբարձութեան նախագահը նշանակուի եղաւ։ Այդ խորթ էր հին շրջանին, դուրս նետուեց և նորից։ Ըստ ժամանակաւոր կանոն-

ների ժողովուրդը վերստանձնեց իր հին իրաւունքները։

Այս առմամբ եթէ մենք ընտրենք նոր շրջանը, դա ունի մի անուն՝ ժողովրդական։

ա. Հոգաբարձութիւն

Փոխարքայի ժամանակաւոր կանոնների համաձայն ծխական հոգաբարձութեան կազմը բաղկացած պիտի լինէր 3—4 անձից, բացի տեղական եկեղեցու երեսփոխանից, որ ի պաշտօնէ ճանաչուում է ծխական հոգաբարձութեան անդամ։ Փրկչի եկեղեցու ծխական առաջին ժողովն ընդունում է հնգանդամեան հոգաբարձական կազմ՝ երեսփոխանն էլ հետը վերցրած։

Եթէ մենք մի ընդհանուր հայեացք ձգենք դպրոցների բացման օրից մինչի այժմ ցոյց տուած գործունէութեան վրա, կտեսնենք որ, բոլոր հոգաբարձական կազմերի ձգտումն է եղել, որքան հնարաւոր է դպրոցը բարձրացնել թէ տնտեսապէս և թէ ուսման ծրագրով։ Առաջնի նկատմամբ երկու անգամ յաջող փորձ է եղել դպրոցի կալուածների քրէհները բարձրացնելու, մէկ 1906 թուին և մէկ էլ ներկայ հոգաբարձութեան օրով 1911 թուի սեպտեմբերին։ Նախկին հոգաբարձութիւնն աւելացրել է նաև կրպակների թիւը թէ հիւսիսային ճակատի շարքում և թէ արևմտեան ճակատում։

Դպրոցի ուսումնական մասի համար հոգաբարձութեան արած առաջին քայլը, որ վերաբերում է դպրոցի աւագ ուսուցչի ընտրութեանը, պէտք է ինքնին ցոյց տայ, թէ հոգաբարձութիւնը դպրոցի մանկավարժական մասի

վրա լուրջ ուշադրութիւն է դարձնում։ Եւ իրօք, Տիգրան Ռաշմաճեանի ընտրութիւնը կարող է միայն հեղաբարձութեան այդ ձգտման արտայայտութիւն նկատուել։ Հոգաբարձութիւնը ցանկանալով տեսնել դպրոցի ուսուցման գործը լաւ հիմքերի վրա, նա սկզբունքով որոշում է միջնակարգ կրթութիւնից ցած ուսուցիչ չհրաւիրել (21 հոկտ. 1905 թ. նիստ IV-րդ) Թէև յետաձգում սկզբունքով ընդունուած այս որոշումը խիստ կերպով չի գործադրուում, և դպրոցում սկսում են պաշտօնավարել նաև քաղաքային դպրոցի կրթական ցենզով ուսուցիչներ։ Այդ ժառանգութիւնը հին հոգաբարձութիւնից անցաւ նաև ներկայ հոգաբարձութեանը, որը 1911-ի սեպտեմբերին մանելով պաշտօնի մէջ հարկադրուած էր նաև արդէն պատրաստի խումբն ընդունել։

Ուսման բուն ծրագրի նկատմամբ բոլոր հոգաբարձութեանց օրով էլ ձգտումն է եղել հոգևոր բարձր իշխանութեան հրատարակած դպրոցական ծրագիրն անցկացնել դպրոցի մէջ։

Գալով ուսուցման տարիների թուին, հոգաբարձութիւնները մանկավարժական խորհրդների համագործակցութեամբ դպրոցը 1095—6 ուսումնարանական տարում սկսելով չորս բաժանմունքով (3 պատրաստական և մի դասարան) հասել է այսօր եօթը բաժանմունքի (3 պատրաստական և 4 հիմնական դասարաններ)։

Մեր դպրոցից շարունակել ուզողը պիտի մանի կամ Ներսիսեան դպրոց կամ Ճեմարան, բայց որովհետև դպրոցական ծրագիրը չի հա-

մապատասխանում այդ յիշածս դպրոցների ծրագրին, ուստի և միտք է ծագել ծրագրների համապատասխան դարձնելու։ Այս միտքն արծարծել է անցեալ տարիներում, բերել է տրուել Ներսիսեան դպրոցի ծրագիրը, բայց վճռական գործի չէ անցած։ 1911-12 ուսումն. տարուայ սկզբում առաջին փորձն եղել է ընդհանուր պատմութեան նկատմամբ։ Ներկայ տարուայ հոգաբարձութիւնը շատ զբաղելով դրանով, որոշել է ծրագրերի համապատասխանեցման գործը վերջնականապէս գլուխ բերել, որպէսզի փոխանցումը մեր դպրոցից դէպի թեմական դպրոցներն և Ճեմարանը՝ հեշտացնի։

Հոգաբարձական գործունէութեան մանրամասնութիւններին կանցնենք իր տեղում, երբ իւրաքանչիւր դպրոցական տարին առանձին կարձանագրենք։

ը. Ցնցութիւն եւ մանկավարժական կազմ.

Ուշի ուշով զննելով դպրոցի դեկավարութիւնը, մենք տեսնում ենք, որ դպրոցի բոլոր տեսուչների կողմից ջանք պակաս չէ եղել, իրենց ուժերի ներածին չափ, բարեխիղճ կերպով տանել դպրոցի ուսուցման և մանկավարժական գործի ընդհանուր հսկողութիւնն ու ղեկավարութիւնը։ Առաջին ընտրութիւնն, ինչպէս արդէն ասուեց, լաւ գրաւականն էր լաւ սկզբի։

Մանկավարժական կազմը բաղկացած է եղել ընդհանուր առմամբ միջնակարգ կրթութեան ուսուցիչներից։ Մանկավարժական ժողովների արձանագրութիւնները և դպրոցական

ծրագրի իրագործումը ցոյց են տալիս, որ ուսուցիչներն աշխատել են հնար եղածին չափ բարեխղճութեամբ տանել իրենց գործը։ Ասել թէ դպրոցական ծրագրի ամբողջ տրամադրութիւններն անցել են ճշտութեամբ, դա սխալ կլինէր։ Շատ առարկաների նկատմամբ պակասը շատ մեծ է, ինչպէս թուաբանութեան, հայոց լեզուի, ընդհանուր պատմութեան, բնագիտութեան և այլն։ Այդ բանը շատ պարզ կերպով նկատուել և արձանագրուել է 1911—12 ուսումն. տարւայ սկզբին։ Այդ մեծ թերութեան պատճառը պէտք է որոնել ոչ այնքան հսկողութեան և ղեկավարութեան թուլութեան մէջ, բայց մանաւանդ ուսուցիչների և տեսուչների շուտ շուտ փոփոխութեան մէջ, ինչպէս և դպրոցական ծրագրի պակասութիւնների մէջ։ Այստեղ չպէտք է մոռանալ նաև ուսուցիչների կրթական ցենզը, օրինակ, բնագիտութիւն չի կարելի յանձնել թեմականաւարտի, այն էլ չորդասարանեան մեր դպրոցում. ինչպէս այդ եղել է անցեալ բոլոր տարիներում։

Ինչ և լինի պատճառը, ստուգւած իրողութիւն է, որ 1911—12 ուսումն տարւայ սկզբում առասկաւն առաջին դասարանից բարձր գլխաւոր բոլոր առարկաներից թոյլ են եղել աշակերտները՝ դպրոցական ծրագիրը չանցած լինելու և մասամբ էլ անկանոն անցնելու պատճառներով։

Գ. Աշակերտութիւն

Մեր քաղաքն ունի 35000-ից աւելի բնակչութիւն, սակայն շատ սակաւաթիւ տարրական դպրոցներ. այդ նամանաւանդ խիստ զգալի էր 1905-ի սկզբին։ Փրկչի դպրոցը մեր վարչութեան ձեռքն անցնելուց յետոյ հարիւրաւոր խնդիրներ էին տեղում։ Ամենքին բաւարարութիւն տալ չէր կարող դպրոցը. ուստի և այդ տարւանից նորերի ընդունելութիւնը լինում է վիճակով, որն և շատ անախորժութիւնների առաջն է առնում։ Պէտք է խոստովանել որ բոլոր տարիներում էլ՝ ի վնաս մանկավարժական-առողջապահական պահանջների եղել են բոլոր սկզբնական դասարանների աշակերտների թիւերը սովորականից շատ աւելի։ Այդ դասարաններում սովորական է եղել և է 50—54 աշակերտ ունենալը, նամանաւանդ առաջին պատրաստականում։ Նոցա ընդհանուր թիւը իւրաքանչիւր տարւայ համար իրարից բարձը չէ եղել. 280—300, ահա այն։

Աշակերտութեան մասին ընդհանուր առմամբ խօսելով, կասենք, որ նա մեր միջնավայրի պատկերն է եղել միշտ։ Դպրոցն արել է աշակերտների մտաւոր-բարոյական դաստիարակութեան համար այն, ինչ որ կարող էր անել, ու այդ գործում նա ըստ կարողութեան մաքառել է փողոցի և տան հակազդեցութեան դէմ։ Աշակերտութեան վրա արած այդ հակազդեցութեան դէմ կռւելու համար, այս տարիների ընթացքում յաճախ կազմւել են ծնողական ժողովներ, կարդացւել են դասախօսութիւններ և այլն։ Սակայն համերաշխ գործակցութեան այդ քայլերը, որ ուսուցչական խմբերը տարել են բարեխիղճ պարտաճանաչութեամբ, մնացել են, եթէ չասենք ապարդիւն,

յամենայն դէպս աննշան, առանց զգալի հետևանքների։ Համատարած խաւար, ահա մեր դպրոցների թշնամին, որի դէմ միայն լոյսով կարելի է կռուել։ Այն օրն, երբ Ալէքսանդրապոլում դպրոցական հասակն առած տղայ փողոցում չի մնալ, այն օրն և կլինի դպրոցի յաղթանակի ոճը այդ համատարած խաւարի դէմ։ Մեր դպրոցն ընդհանուր առմամբ դեռ կազմակերպչական շրջանի մէջ է, ուստի և աշակերտութիւնը չի կարող այն ներկայացնել, ինչ որ, երբ դպրոցն իր փուլի մէջ մտնի և ուսման ծրագրի և ուսուցման մէջ լրութիւն և հետևողականութիւն լինի։ Ուսուցիչների կողմից բազմիցս նկատուած ճշմարտութիւն է, որ մեր աշակերտները քիչ են կարդում, որ նոքա իրենց դասարաններին և հասակներին համապատասխան մտաւոր հասունութիւն և կրթական պատրաստութիւն չունին։ Ընթերցասիրութեան պակասութիւնն ամենից շատ նկատուած թերութիւնն է։ Աշակերտների մէջ ընթերցասիրութիւն զարթեցնելու համար կատարուող շաբաթական դասարանական ընթերցանութիւններն զգալի օգուտ չեն ցոյց տալիս։ Այդ ընթերցանութիւնն այս ձևն ունի, նա կատարւում է մանկավարժական ժողովների որոշմամբ իւրաքանչիւր դաստիարակ իւրաքանչիւր շաբաթ մի անգամ, շաբաթ օրերը, մի դաս նուիրում է ընթերցանութեան. ինքը կարդում է նախապէս ընտրած մի գիրք և դասարանը լսում է։ Սա պէտք է համարել առանձին անբաւարար միջոց աշակերտների մէջ ընթերցասիրութիւն զարթեցնելու համար։

ը. Գրադարան եւ ֆիզիքական կաբինէտ.

Դպրոցի գրադարանն աղքատ է. պակասում են մանկական և այլ գրքեր, ոչ միայն ռուսերէն այլ նաև հայերէն մի դպրոցի համար անհրաժեշտ գրքեր։ Դպրոցական հին մատեաններըը քրքրելիս մենք հանդիպեցինք հին գրացուցակների։ Դոցա հետ համեմատած հին գրադարանի ներկայ մնացորդները, տեսնում ենք, որ շատ ու շատ բան անհետ կորել, ոչնչացել է։ Նոր այս շրջանում ջանք եղել է դպրոցական նոր գրադարան կազմելու համար, սակայն գործը մնացել է իր սաղմնային վիճակում ոչ թէ ցանկութեան բացակայութեան, այլ գլխաւորապէս նիւթական միջոցների սղութեան պատճառով։ Դպրոցը չի կարողացել տարեկան նոյն իսկ մի հարիւր ռուբլի մշտապէս գրադարանի պակասը լրացնելու յատկացնել։ Դպրոցս ունի զանազան տեսակի գրքեր՝ 1115 հատ, որից աշակերտական ընթերցանութեան համար՝ 540 հատ։ Գրքերից հայերէն 580 հատ, ռուսերէն 525 հատ, օտար լեզուներով 10 հատ։ Եւ սա եօթանասուն և աւելի տարի գոյութիւն ունեցող մի դպրոցում։

Շատ աղքատ է նաև դպրոցիս ֆիզիքական կաբինէտը. կարելի է ասել համարեա միայն անունով գոյութիւն ունի։ Ֆիզիքական ամբողջ կաբինետն ամփոփուած է մի պահարանում, ուր երկու մեծ դարակը բռնում են մարդակազմական մոդելները, մի դարակը երկրաչափական ձևագիտութեան իրերը և միայն մի դարակում քիմիայի և ֆիզիքայի վերաբերեալ

խղճուկ գործիքներ, եթէ միայն այդպէս կարելի է այդ մնացորդներն անուանել։ Այս բանում դպրոցի վարչութիւնը դեռ շատ բան ունի անելու, ամենատարրական պահանջներին բաւարարութիւն տալու համար։

Ա. Դպրոցական շէնք.

Դպրոցիս ներկայ շէնքի մասին իր տեղում առաջների վրա կաւելացնենք, որ նա իր ներկայ պահանջներին բաւարարութիւն չի տալիս։ Այս դպրոցն իբր վիճակային դպրոց, պէտք է դառնայ մօտ ապագայում լրիւ միջնակարգ սեմինարական ծրագրով։ Նայելով դպրոցական շէնքին, հնարաւոր չէ դրա իրագործումը՝ նախ առանց ստորին բաժանմունքներից 2-ի փակումի, և երկրորդ առանց երկրորդ յարկ շինելու, ուր տեղաւորուէին վերին երկու դասարանները, ֆիզիքական կաբինէտը, հոգաբարձական և մանկավարժական ժողովների խորհրդարանները, գրադարանը և այլն։

Դպրոցի ներկայ շէնքն այդ յարմարութիւններին համապատասխանեցնելու համար հարկաւոր են մեծ միջոցներ և յատկապէս համաքաղաքացի հարուստների լիաձեռն օժանդակութիւնը։

Ներկայ շէնքի անյարմարութիւններից մէկն էլ այն է, որ նրա գաւթի դուռը բաց է հասարակութեան և ժամաւորների համար ոչ միայն ոտն օրերին, այլ նաև ամենայն օր դպրոցական պարապմունքներից յետոյ։ Մի հանգամանք, որ քիչ կեղտոտութիւնների պատճառ չի դպրոցի համար, որովհետև երկար տա-

ղիների փորձը ցոյց է տալիս, որ դպրոցի արտաքնոցներից կողմնակի օգտուողներն ամենաանկարգ կերպով են իրենց պէտքերը կատարում։ Դպրոցի արտաքնոցը հասարակական արտաքնոց է, այն էլ Ալէքսանդրապոլի պէս տեղում։

Գ. Դպրոցի եկամուտները.

Ինչպէս մենք արդէն տեսանք, մեր դպրոցը դրամագլուխ չունի. բայց ներկայ հոգաբարձութիւնը ջանքեր է թափել ու թափում այդպիսի մի դրամագլուխ ստեղծելու համար։ Թէ որքան է նա աջողելու այդ բանում, դա ցոյց կուտայ ապագան, ինչպէս և մեր հարուստ քաղաքացիների պարտաճանաչութիւնը։ Մեր դպրոցի մշտական եկամուտի աղբիւրը ս. Փրկիչ եկեղեցին երեք կողմից—հիւսիսային, մասամբ հարաւային և արևելեան—շրջապատող կրպակներն են, որոնք, պէտք է խոստովանել կանգուն են մնում այդ կրպակներից օգտուող առևտրականների կողմից ձեռք առած մանր ու խոշոր նորոգութիւններով։ Դպրոցը չի ծախսում իրանց վերանորոգութեան վրա համարեա և ոչինչ. մինչդեռ քանի մի հիմնական նորոգութիւններ անհրաժեշտ են։

Կալվածների տարեկան եկամուտն է 10212 ռուբ. 2 կ. պետական, գնահատական և համայնական տուրքերն են 887 ր. 50 կ. զուտ արդիւնք 9324 ր 50 կ.

Ինչպէս մենք իր տեղում կտեսնենք, նախկին հոգաբարձութիւնները մինչի 1911 թ. սեպտեմբերը իր ժամանակին կալուածների

տուրքը վճարելու համար տուգանք են տալ մօտ 2000 ռուբլի։ Յետնեալ այդ տուրքերն ու տուգանադրամների մի մասը վճարելու համար դպրոցն հարկադրուած է եղել 4000 ռ. փոխառութեան դիմելու։ Որից պարզ է թէ, դպրոցն այժմ ունի միայն պարտք, որը պիտի ծածկուի խնայողութիւններով, այն էլ դպրոցի ներկայ վիճակում, երբ նրա ծախսերը քանի գնում շատանում են և շատանալու են։ Դպրոցը պարտքի տակ չէր ընկնի, յետնեալ տուրքերը վճարելու համար փոխառութեան չէր դիմի, եթէ դպրոցի հոգաբարձութիւնն աշխատէր դպրոցի նախահաշուի շրջանում գործել, և նախահաշիւն էլ, որ ամեն տարի կազմել են, տար դպրոցի նիւթական վիճակի իսկական պատկերը։

Մնում են իբր եկամուտի այլ աղբիւրներ աշակերտական թոշակադրամը և պատահական նուիրատուութիւնները։ Դպրոցի հին սկզբնական շրջանում, ինչպէս այդ իր տեղում ցոյց տուինք, ուսումը ձրի է եղել. այժմ, այս նոր շրջանում ընդհանուր առմամբ ձրիավարժները կազմում են մօտ 40%-ը աշակերտութեան։ Եթէ լինի հասարակութեան լայն օգնութիւն, հապա կարելի կլինէր շատ աւելի մօտենալ ձրի ուսման, քան այժմ է։ Իրօք, հարկաւոր է առնուազն 60%-ը ձրիավարժ անել, քանի որ թոշակադրամն հաւաքելու համար, դպրոցն ահագին դժուարութիւնների է հանդիպում և շատ ծնողների համար նրանցից պահանջուած 4—10 ռուբլի տարեվճարն իսկ ծանր է։ Ձրի ուսումն, ահա որին պիտի դիմէր դպրոցը։

1905—06 Ուսումն. տարի.

Ուսումնարանական այդ տարում Հոգաբարձութիւնն ունեցել է 33 հերթական նիստ։ Հոգաբարձական կազմն է 1) Յովհաննէս Տէր-Մարտիրոսեան, 2) Աղաբէկ Ամիրեան, 3) Մելիքսեդեկ Խզմալեան, 4) բժիշկ Ա. Տէր-Շմաւոնեան, 5) երեսփոխան Կարապետ Մառանջեան։

Առաջին ժողովը կայացել է 1905 թուի հոկտեմբերի 16-ին, արդէն հրաւիրուած աւագ ուսուցիչ Տիգրան Ռաշմաճեանի մասնակցութեամբ։ Դրանից առաջ արդէն հոգաբարձութիւնը պատշաճաւոր ստացողական յանձնողականով ստացել էր կառավարչական դպրոցական վարչութիւնից ս. Փրկչի դպրոցն իր գոյքով։

Իբր գործի սկիզբն, բնական է որ հոգաբարձութիւնը կանգնած էր մի քանի դժուարութիւնների առաջ։ Նախ դպրոցը բացւում էր դպրոցական տարին սկսելուց յետոյ, իսկ հին կազմը դեռ չէր արձակուել։ Հոգաբարձութիւնը կաթուղիկոսական կոնդակի համաձայն պահում է հին ուսուցիչներից ձեռնհասները իսկ հեռացածներն էլ որոշ չափով վարձատրում է։ Դասաբաժանութեան ժամանակ որոշւում է սկզբունքով կրօնի դասերը հոգևորականի վերապահել, թէև յետագայում խախտւում է այդ որոշումը։ Ընդունւում է դասագնի հաւասարութեան սկզբունքը բոլոր առարկաների համար։ Աւագ ուսուցիչը ներկայացնում է ուսուցչաց ցանկը, որն և ընդունւում է։

Դպրոցի պաշտօնական բացումն ու դասերի

սկիզբն է նոյեմբերի 8-ը. իսկ բացման հանդէսը կատարւում է դեկտեմբերին, դպրոցական մի հանդիսով։ Հոկտեմբերի 31-ի խառն ժողովում որոշւում է ընդունելութիւնն այնպէս անել, որ աշակերտների ընդհանուր թիւը առառաւելն 300 լինի։ Խօսք է լինում և տարրաղի մասին, սակայն ի նկատ առնելով աշակերտների չքաւորութիւնը խորհրդածութիւնն ապարդիւն է անցում, բարեբաղդաբար։

Այդ ժողովն սկզբունքով ընդունում է, որ ուսուցիչների և աւագ ուսուցչի ընտրութիւնը տեղի պիտի ունենայ խառն ժողովի համաձայնութեամբ, որից յետոյ Հոգաբարձութիւնը հրաւիրում է համապատասխան անձնաւորութեանը։ Պարզ է որ, հոգաբարձութիւնն այստեղ իր էրաւունքներից որոշ մասը զիջում է ուսուցչական խմբին, նոյն է անում նաև դպրոցի աւագ ուսուցիչը, իրեն համարելով դպրոցի մի ուսուցիչ ու մանկավարժական ժողովի միայն նախագահ։

Ընդունելութեան խնդրի հետ կապւած է և դասարանների թիւը. ժողովը որոշում է ունենալ մի առաջին, մի երկրորդ երկու զուգընթաց, մի երրորդ մի զուգընթաց բաժանմունքով և մի առաջին դասարան։ Որով ընդհանուր թիւը լինում է հիմնականով և զուգընթացներով միասին ութն բաժանմունք։ Հոգաբարձական X-րդ ժողովում միտք է ծագում Հոգաբարձութեան կից ծնողական խորհուրդ ունենալ, որպէսզի հնարաւոր լինի աշակերտների բարոյակրթական գործն աւելի լաւ հիմքերի վրա դնելու և դպրոցի վրա հասարակութեան

աւելի մօտիկ հսկողութիւն ունենալու համար։ այդ խնդիրը մերժւում է այն պատճառաբանութեամբ, որ հոգաբարձութիւնն ինքն արդէն նոյն այդ հասարակութեան ներկայացուցիչն է դպրոցում։

Աշակերտների մասին իր հոգացողութիւնը հեռուն տանելով, հոգաբարձութիւնը որոշում է խիստ չքաւորներին դասական պիտոյքների հետ տալ նաև շորեր, որն և փոքր չափերով իրագործում է։

Հոգաբարձութիւնը մի շարք ժողովներում քննութեան է առնում դպրոց նախահաշիւ և դպրոցի եկամուտներն աւելացնելու խնդիրներն։

Նոյեմբերի 11-ին կազմում է մի նախահաշիւ՝ Մուտք 11038 ր. 50 կոպ. Ելք 11038 ր. 50 կ. Սակայն երբ այդ նախահաշիւը ներկայացւում է դեկտեմբերի 4-ին ծխական ժողովի հաստատութեանը, նոյն ժողովը հաստատելով նախահաշիւը, առաջադրում է հոգաբարձութեանը ծախսերը կրճատել 600 ռուբլիով և այդ գումարը տալ Լուսաւորչի դպրոցին նպաստ։ Ծխական ժողովի այդ որոշումն հետևանք է այն դիմումի, որ արել էր Լուսաւորչի դպրոցի հոգաբարձութիւնը ծխական իր դպրոցին նպաստ տալու համար։

Հոգաբարձութիւնը դեկտեմբերի 4-ի իր X-րդ նիստում անում է իր ծախքերի մէջ 600 ռուբլի կրճատումն, ի միջի այլոց նաև դպրոցի գրադարանի համար նախահաշւով որոշածից 100 ր. եկեղեցու ներքին բարեզարդութեան վրա նշանակածից, դասական պիտոյք-

ներից և այլն։ Այդ նպաստով օգտվելով մի դպրոց, տուժում է մի այլը. բայց դա ծխական ժողովի կամքն էր, որին պարտաւոր է հպատակվել ամեն մի ծխական հոգաբարձութիւն։

Հետամուտ լինելով դպրոցի աճող ծախսերը ծածկող նոր եկամուտներ գտնելուն, հոգաբարձութիւնը նկատ առնելով միևնոյն ժամանակ, որ եկեղեցու կրպակները համեմատաբար ժան են, որոշում է կրպակավարձերն աւելացնել։ Այդ խնդրի քննութիւնը դնելով իր XIV-դ (յունվարի 20-ի) նիստում, հոգաբարձութիւնն իր յաջորդ նիստերում խանութպանների հետ խորհրդակցելով, բոլոր խանութների վրա աւելացնում է 615 ռուբլի։ Հէնց սկզբում մերժում է կրպակներն աճուրդով տալու առաջարկը։

Ի նկատ առնելով, որ դէպի եկեղեցին տանող հիւսիսային մուտքն առանձին կարևորութիւն չունի, որոշում է այդ անցքը դարձնել կրպակ, որը տրում է տարեկան 340 ռուբլի քրէհով։

Դպրոցի վրա բարդված են եղել անցեալ տարիներից բաւականին մեծ գումարի գնահատական տուրքեր. հոգաբարձութիւնը որոշում է դիմել քաղաքային վարչութեանն, այդ գումարը զեղջելու համար։ Այս տարուանից սկսում է գնահատական, պետական և համայնական տուրքերի իր ժամանակին չվճարելու սովորութիւնը։

Ուսումնարանական տարուայ վերջին հերթական են դառնում հետևեալ խնդիրները

1) Երբ վերջացնել ուսումն. տարին, 2) հինգերորդ բաժանունք բանալը, 3) աւագ ուսուցչից զեկուցումն — հաշիւ պահանջելը դպրոցական տարուայ մասին, 4) Դասագնի բարձրացման խնդիրը։

Դպրոցական տարին խառն ժողովով (XIX) որոշում են փակել յունիսի 2-ին։ Այդ և յունիսի 20-ի ժողովներում անհրաժեշտ է հաշուում բանալ հինգերորդ բաժանմունք, որ և ընդունվում է։

Աւագ ուսուցիչն առաջարկում է դասագինն անել 40 ր. բայց առսակաւն 30 ր. ժողովը (XXII, 1 յունիսի) որոշում է ընդունել վերջին դասագինը։

Նոյն ժողովում հոգաբարձութիւնը պահանջում է աւագ ուսուցչից հաշիւ տալ խմբի և անցած ուսման ծրագրի ու դպրոցի առաջադիմութեան մասին։ Աւագ ուսուցիչը մերժում է այդ հաշիւը տալ. ի միջի այլոց առարկելով, որ ինքն այդ հաշիւը տալու է հասարակութեանը (յունիսի 3-ին) տարեկան ակտին, ուր և հոգաբարձութիւնը կարող է լսել։ Հոգաբարձութիւնը չի կարողանում նրանից ստանալ նաև գրաւոր հաշիւ այն մասին, թէ իւրաքանչիւր բաժանմունքում իւրաքանչիւր առարկայից որքան են անցել, ու անցածը համապատասխան է դպրոցական ծրագրին։ Այդ առաջարկին աւագ ուսուցիչ Տ. Ռաշմաճեանը պատասխանում է, որ հոգաբարձութեան այդ առաջարկութիւնը կասի խմբին, վերջինս ինչպէս անօրինէ, այնպէս էլ կանէ։ Հոգաբարձութեան այս իրաւացի պահանջը մնում է առ

միշտ անկատար։ Սրանից ծագում է սուր յարաբերութիւն դպրոցական այդ երկու մարմինների մէջ։

Հոգաբարձութիւնն իր XXV-րդ նիստը (7 յունիսի) նուիրում է այդ միջնադէպի քննութեանը։ Նա գտնում է, որ ինքն, իբր ներկայացուցիչ դպրոցի տէր հասարակութեան, պարտք և իրաւունք ունի իմանալու, թէ դպրոցում ինչ է կատարւում, ինչ չափով է իրագործւում դպրոցական ուսման ծրագիրը և ուսուցիչներից որոնք համապատասխան են իրենց բռնած տեղին։ Նա որոշում է յայտնել դպրոցի աւագ ուսուցչին այդ բոլորը և առաջարկել, որ նա ինկատ առնի այդ՝ ապագայի համար։ Աւագ ուսուցչի առաջարկութեամբ խումբը մնում է անփոփոխ. բայց որովհետև բացւում է մի նոր V-դ բաժանմունք, ուստի և մանկավարժական ժողովը օգոստոսի 15-ի իր որոշման պատճէնը ուղարկելով, առաջարկում է Հոգաբարձութեանն ռուս լեզուի ուսուցիչ հրաւիրել Խ. Կարճիկեանին կամ Մ. Յովհաննիսեանին։ Հոդաբարձութիւնը իր XXXI-րդ նիստում որոշում է ուսուցիչ հրաւիրել առաջնին։

Այդ ուսումնարանական տարւայ ընթացքում հարց է բարձրանում քաղաքիս չորս եկեղեցիների միացեալ հոգաբարձութիւն կազմել։ Ծխական մի ընդհանուր ժողով ընդունում է այդ առաջարկութիւնը։ Նոյն տարւայ երկրորդ կիսամեակում տեղիս փոխանորդ Արսէն վ. Ղլտճեանի նախաձեռնութեամբ ժողովներ են հրաւիրւում՝ տեղական չորս դպրոցների գոնէ գանձարանները միացնելու, որպէսզի այդ

միջոցով գոնէ դասագնի հաւասարութիւն պահպանուի բոլոր դպրոցներում։ Բացի դրանից, դրանով Լուսաւորչի տղայոց դպրոցը կդառնար Փրկչի դպրոցի և Սահականուշեան օրիորդաց դպրոցը Արդութեան օրիորդաց դպրոցի սկզբնական մասերը։ Մեր հոգաբարձութիւնը, մայիսի 23-ի և յունիսի 7-ի նիստերում քննութեան առնելով այդ խնդիրները, գտաւ դա իր իրաւասութիւնից բարձր և խնդրի լուծումը իւրաքանչիւր եկեղեցու ծխական ժողովին իրաւասութեան ենթակայ։ Այս խնդիրն այս դրութեան մէջ էլ մնացել է ցայսօր։

Մանկավարժական կազմը հետևեալն է եղել։

1. Աւագ ուսուցիչ Տիգրան Ռաշմաճեան, աւարտել է Շեմարանի դպրոցական բաժինը, ուսել է Գերմանիայում (չաւարտած), ունդում է շաբաթական 14 դաս Հայոց լեզու և բնագիտութիւն.

2 Աւետիսեան Ռուբէն, աւարտել է Ճեմարանի դպրոցական բաժինը. ունի ուսուցչական ցենզ. ունդում է 23 դաս Ռուսաց լեզու, գծագրութիւն, հայրենագիտութիւն.

3. Այվազեան Պետրոս, աւարտ. Ներսիսեան դպրոց. ունդում է 22 դաս Հայոց լեզու, հայրենագիտութիւն, թուաբանութիւն, գծագրութիւն.

4. Բաբայեան Պարոյր, Ս.-Պետերբուրգի Արքունական երաժշտական «Կապելլում». ունդ. 14 դաս. երաժշտութիւն։

5. Թաբաղեան Սաղաթէլ. աւարտ. ուսուց-

չական սեմինարիա. աւանդ. 24 դաս Ռուսաց լեզու։

6. Մատնիշեան Ղևոնդ քահանայ. աւարտ. Երևանի թեմական դպրոց. աւանդ. կրօն 18 դաս.

7. Միքայէլեան Գէորգ, աւարտ. Ներսիսեան դպրոց, ունի ուսուցչական ցենզ. աւանդ. 24 դաս Հայոց լեզու, թուաբանութիւն.

8. Յովհաննիսեան Գասպար. աւարտ. Ներսիսեան դպրոց. աւանդ. 18 դաս Հայոց լեզու թուաբանութիւն.

9. Պարունակեան Կարապետ. աւարտ. Գ. Ճեմարան. աւանդ. 24 դաս Հայոց լեզու, Հայոց պատմութիւն, հայրենագիտութիւն, աշխարհագրութիւն։

Աւանդւում է ընդամենը շաբաթական 181 դաս եօթը բաժանմունքում։

Մանկավարժական այս կազմի գործունէութիւնն, ինչպէս այդ ցոյց է տալիս նրանց ժողովների արձանագրութեանց մատեանը, անցել է առանց դպրոցական խաղաղ կեանքն աւելկոծող միջնադէպերի։ Տիրել է լիակատար համերաշխութիւն աւագ ուսուցչի և խմբի մէջ նաև այն պատճառով, որ նա իրեն հաշուել է մանկավարժական ժողովի ոչ միայն անդամ, այլ նաև նրա որամադրութիւններով գործող։ Իբր նոր գործ, մանկավարժական ժողովը կանգնած է եղել շատ դժուարութիւնների առաջ ու խորհրդածութեանց նիւթ է դարձրել մանկավարժական մի շարք ժողովներում մանկավարժական խիստ կարևորութիւն ունեցող խնդիրներ. այսպէս I ժողովում (25 հոկտ.) զբաղւելոր դպրոցում անցնելու ծրագրի խնդրով, յաջորդ յատկապէս II, V, VIII, XI, XXIV, XXXI-րդ ժողովներում խորհրդածութեան նիւթ է շինում՝ գրութեան ժամանակ օժանդակ գծերից չօգտւելու, լեզու սովորեցնելու հնչական մեթոդի, Ռուսաց լեզուի բնական մեթոդի, գրիչ բռնելու ձևի, ծնողական ժողովների կարևորութեան, յառաջադիմութեան համար թւանշաններ նշանակելու, դասարանը թողնել—չթողնելու և այլն խնդիրները։ Փորձւած մանկավարժական տեսչի ցուցումներով օգտւելով, ժողովն այդ բոլոր խնդիրներն էլ լուծել է ըստ արժանոյն։

Մանկավարժական ժողովն զբաղւել է նաև դասագրքերի, դասատիրակների ընտրութեամբ. դպրոցական հանդէսներ կազմակերպելով, III և IV բաժանմունքների աշակերտների ընթերցանութեան համար գրքերի ցուցակներ կազմելով (XXII-րդ ժող.), ինչպէս և դպրոցի գրադարանի, դպրոցում մարմնամարզութիւն մտցնելու, աշակերտական թերութիւններն ուղղելու, զբօսանքների և յաջորդ ուսումնարանական տարեսանքների և յաջորդ ուսումնարանական տարեայ դասաբաժանութեան (XXXIII ժող. 29 մայիսի) խնդիրներով։

Մի բան մնաց մութ, թէ դպրոցի աւագ ուսուցիչ Տ. Ռաշմաճեանը ինչո՞ւ չէ զեկուցել մանկավարժական ժողովին, որ դպրոցի հոգաբարձութիւնն իրենից տարեկան հաշիւ է պահանջում և որ ինքը մեերժել է տալ, և ասել է, թէ դա մանկավարժական ժողովի գործն է։

Դպրոցական տարեայ ընթացքում մանկավարժական ժողովն ունեցել է ընդամենը 44 հերթական նիստ։

Ուսուցման գործը տարուել է ընդհանրապէս Ռաշմաճեանի և Տէր-Միրաքեանի կազմած դպրոցական ծրագրի նախագծով, բայց յանձնարարուել է մանկավարժական ժողովի կողմից իւրաքանչիւր դասատուի կազմել հետզհետէ իր անցածի ծրագիրը՝ ժողովին ներկայացնելու համար։

Դպրոցի նիւթականի պատկերն այս է.—

1905 թուի դեկտեմբերի 4-ի նիստում վերակազմած և ծխական ժողովով հաստատած նախահաշուով մուտք ենթադրուում է 11038 ր. 50 կ. կլք 11038 ր. 50 կ դպրոցական ֆինանսական տարին փակուել է սակայն այսպէս. մուտք 11652 ր. 05 կ. և ելք 11297 ր. 79 կոպ. ըստ երևոյթին աջող, նոյն իսկ 354 ր. 26 կոպ. խնայողութեամբ։ Սա ճիշտ չէ։ Հոհաբարձութիւնը պիտի փակէր դպրոցական տարին 1906 թուի սեպտեմբերի 1-ին, որից յետոյ եղած ամենատեսակ մուտքերը պիտի գրուէին 1906—7 թուի հաշուեմատեանում։ Դրա հակառակ դպրոցական ելքի մասը փակել է օգոստոս ամսին, իսկ մուտքը փակել է սեպտեմբերի 30-ին։ Մինչդեռ մուտքի 98-րդ յօդուածից 194 ր. և 96-րդ յօդուածի 100 ր. պիտի մտնէր 1900-7 ուսումն տարուայ մատեանը, ընդամենն 294 ր բացի դրանից նոյն տարում պիտի վճարուի գնահատական, պետական և համայնական տուրքեր 539 ր 36 կոպ. որ վճարուած է մասամբ (249 ր. 36 կ) 1910 թուին, որի պատճառով էլ դպրոցը տուժել է 178 ր, 32 կոպ. այսինքն, փոխանակ 539 ր. 36 կոպէկի, վճարել է 716 ր 68 կոպէկ։ Ասել է 1905—6 մատեանի

մէջ պէտք էր ցոյց տրուէր առնուազն ծախք 11841 ր. 15 կոպ. և մուտք 11358 ր. 05 կոպ. որով դպրոցական տարին կըփակուէր 483 ր. 10 կոպ. մի դեֆիցիտով և ոչ թէ 354 ր. 26 կոպ. խնայողութեամբ։ Այս բոլորից նաև պարզ է, որ այդ տարում հոգաբարձութիւնը դուրս է եկել նախահաշուի տրամադրութիւնից, մի բան, որից պէտք էր խուսափել։

1906—07 Ուսումն. տարի.

Հոգաբարձական կազմը նախընթացն է. ունեցել է 34 նիստ։ Անցեալ ուսումն. տարուայ վերջն արդէն որոշուում է պահել ուսուցչական խումբը, միայն ռուս. լեզուի համար հրաւիրուում է Կարճիկեանը։ Հոգաբարձութիւնն այս տարի բացի ընթացիկ գործերից, ինչպէս են դասաբաժանութիւնը, ուսուցչաց ռոճիկները կանոնաւոր վճարելու խնդիրը, հոգաբարձական հերթապահութիւն նշանակելը, դպրոցի եկամուտները կանոնաւոր գանձելն ու նոցա շատացնելն աշխատելը, անցեալ տարուայ և ընթացիկ տարուայ հաշիւները քննելը, վերջնիս նախահաշիւ կազմելը և այլն, ունեցել է նաև խառն ժողովներ։ Անցեալ թէ այս տարուայ թէ աւ. ուսուցչի և թէ մանկավարժական ժողովի կողմից մի ձգտումն է նկատուում դպրոցի ամբողջ ղեկավարութիւնն իրենց ձեռքն առնել։ Անցեալ տարի մերժում էր աւ. ուսուցիչը որևէ հաշիւ տալ դպրոցի ուսումնական մասի վերաբերմամբ, նոյն իսկ տարուայ անցած ծրագրի մասին, դա համարելով մանկավարժական

ժողովի գործ։ Այս տարի, որովհետև հոգաբարձութիւնը գրաւոր կերպով չի պատասխանել մանկավարժ. ժողովի մի գրութեանը (խնդիրը վերաբերում է ռոճիկները կանոնաւոր տալուն, մարմնամարզական գործիքներ շինելուն, ֆիզիքական կաբինետի և գրադարանի համար 250 ր. տալուն), վերջինս ժողովի է հրաւիրում հոգաբարձութեանը (6 նոյեմբերի) և բացատրութիւն պահանջում։ Ռաշմաճեան և ուսուցիչները գտնում են, որ մանկ. ժողովին գրաւոր չպատասխանելը հոգաբարձութեան կողմից բիւրոկրատիք վերաբերմունք է։ Հոգաբարձութիւնը բատասխանում է, որ մանկավարժական ժողովի դրած հարցերի նկատմամբ, բացի վերջնից, որ դպրոցի նախահաշուի մէջ դեռ նոր պիտի մտնի, հոգաբարձական ժողովում իրենց որոշումը դպրոցի աւագ ուսուցչին ասել են, նա էլ պէտք է այդ մասին յայտնէր մանկավարժական ժողովին։ Սրան Ռաշմաճեանը հընարաւոր է գտնում պատասխանել, որ այնուամենայնիւ հոգաբարձութիւնը պէտք է գրաւոր պատասխանէր։ Ժողովը ցրւում է, առանց որևէ եզրակացութեան։ Նոյեմբերի 5-ի ժողովում որոշում է և 6-ի ժողովում հոգաբարձութիւնը յայտնում դպրոցի աւագ ուսուցչին, որ նրա բռնած ընթացքը դէպի հոգաբարձութիւնը շատ էլ գովելի չէ և թէ նա բաւական չափով պիտի կշռէ իր բռնած դիրքը։

Սրանից յետոյ հոգաբարձութեան երկու անդամ մէկը միւսի եռևից հրաժարականի խընդիրներ են գնում. պէտք է այստեղ ասել, որ հոգաբարձութեան անդամ Յ. Տէր-Մարտիրոսեանն այս ամբողջ վէճի ընթացքում և յետոյ, իբր հոգաբարձու ամենից աւելի է գիտակցել իր իրաւունքներն ու իր պարտականութիւնները, ուստի և ստեղծուած այս պայմաններում չկարողանալով գործել, հրաժարւում է։ Մինչ այս, տարին վերջանում է, ու որոշւում տարեվերջի մի ակտ կատարել։ Յունիսի 5-ին աւագ ուսուցիչը ներկայացնում է հոգաբարձութեանն իր տեղեկագիրն ու հրաժարականը, որն և ընդունւում է։ Յունիսի 22-ի խառն ժողովը որոշում է բանալ III դասարան։ 25-ի ժողովում (խառն) որոշում է աւագ ուսուցիչ, ռուսաց լեզուի, ընդհանուր, հայոց և ռուսաց պատմութեան, ընդհանուր աշխարհագրութեան, բնական գիտութեանց, և նկարչութեան համար ուսուցիչներ հրաւիրել։ Օգոստոսի 14-ի խառն ժողովը դպրոցի աւագ ուսուցիչ է հրաւիրում Գ. Բալայեանցը։

Դպրոցի ել ու մուտքը հետևեալն է։—

Անցեալ տարւայ հաշուից տեսանք, որ դրպրոցն իրապէս փակւել է 483 ր. 10 կոպ. դեֆիցիտով։ Ընթացիկ տարին փակւել է 11248 ր. 72 կ. մնացքով և 11163 ր. 5 կ. ելքով այսինքն 85 ր. 67 կոպ. յաւելեալով։ Սակայն սա մի թիւրիմացութիւն է, տարին պիտի փակւէր մի աւելի մեծ բացով, քան անցեալ տարի։ Ելքը պիտի լինէր 11163 ր. 5 կ. աւելացրած 483 ր, 10 կ. դեֆիցիտը, 887 ր. 50 կոպ. 1906-ի և 293 ր. 48 կոպ. 1907-ի տուրքերը որոնք վճարւած են 1911 թւին (որի պատճառով էլ դպրոցը վճարել է մեծ տուգանքներ), որ կանէ 12827 ր, 18 կ. սրանից պարզ է, որ 1906—7-ի մատեանը

պիտի փակէր (ելք 12827 ր. 18 կ —11248 ր. 72 կ. մուտք) 1578 ր. 46 կ. բացով, մինչդեռ ցոյց է տրուած 85 ր. 67 կ խնայողութիւն։

Դպրոցի կրթական մարմնի կեանքն ինչպէս անցեալ, նոյնպէս և այս տարի անցել է խաղաղ եթէ չհաշուելու լինինք մանկավարժական ժողովի և հոգաբարձութեան մէջ տեղի ունեցած յիշածս դէպքը։

Մանկավարժական ժողովները տեղի են ունեցել տարւայ մէջ 48 անգամ։ Ընդունելութեանց և նրա շուրջը դառնող խորհրդածութիւնները սկսելով օգոստոսի 28-ին զբաղեցրել են ուսուցիչներին ութը նիստ։ Ուսումն սկսել է սեպտեմբերի 11-ին. 4-րդ և 9-րդ ժողովում զբաղուել են ուսման ծրագրի խնդրով. Ե-րդ բաժանմունքի համար տրուում է ժողովին գործադրել կենտրոնական ժողովից ընդունուած դպրոցական ուսման ծրագիրը, իսկ վեցերորդ բաժանմունքի դասընթացն աշխատում են յարմարեցնել Ներսիսեան դպրոցի ծրագրին, բայց ոչ բոլորովին։ 10-րդ ժողովում որոշում են անցեալ տարւայ նման փորձնական դասեր տալ։ Այնուհետև ժողովն զբաղուում է տարւայ ընթացքում գրադարանի և աշակերտներին գիրք կարդալու, կարդապահական, դասաւանդման եղանակների խնդրով, և այլն։ Դպրոցն ունի 3 պատրաստական և երկու հիմնական դասարաններ, իսկ բաժանմունքների թիւը 8-ն է։ Աշակերտների ընդհանուր թիւն է 268 փոխադրել են 252 և մնացել 16 աշակերտ։ Ուսումնական տարին վերջանում է յունիսի 1-ի հաշուեւութեամբ։

Այս տարում հեռացել է Ս. Թաբաղեան, նրա տեղ հրաւիրուել է Հ. Կարճիկեան Ռուսաց լեզուի համար 27 դասով. մնացեալում խումբը մնում է անփոփոխ։

1907—08 Ուսումն. տարի.

Հոգաբարձական կազմից հեռացել է Տէր-Մարտիրոսեան, տարւայ առաջին կիսում հրաժարուում է և Ա. Ամիրեանը. պաշտօնի է կոչուում Յ. ք. Խաչվանքեան, և Ա. Լիսիկեան։ Հեռացել է աւ. ուս. Տ. Ռաշմաճեան, նրա տեղ հրաւիրուած է Գ. Բալայեան։ Դեռ ամառւայ ժողովներում հոգաբարձութիւնը լրացնում է խումբը, հրաւիրելով Ե. Գրիգորեանին (ուսուցչական սեմինարիա աւարտած) ռուս. լեզուի համար Վ. Տէր-Յովակիմեանին և Ե. Նարինջեանին միւս առարկաների համար ուսուցիչ։

Հոգաբարձութիւնը մի շարք ժողովներում որոնցից մի երկուսը խառն ուսուցչական հոգաբարձական, տարւայ սկզբից զբաղուում է աւագ ուսուցչի անպատրաստութեան և անհամապատասխանութեան խնդրով։ Սեպտեմբերի 30-ի VII-րդ ժողովում, հոգաբարձութիւնն ի նկատ առնելով աւագ ուսուցչի պատճառով դպրոցում առաջ եկած անբնական վիճակը, որոշում է արձակել աւագ ուսուցիչ Գ. Բալայեանին։ Նոյն պաշտօնը կատարելու համար ընտրուում է դպրոցի ուսուցիչ Ե. Գրիգորեանը։ Սեպտեմբերին հրաժարուում են դասատուներից Ղ. ք. Մատնիշեան, Գ. Յովհաննիսեան, (դպրոցում պատահած մի դէպքի

պատճառով)։ Բաց դասերը պարապելու համար հոկտեմբերին հրաւիրուում են Ս. Կարապետեան, Ա. Տէր-Սարգսեան, Վ. Սիմէօնեան։

Հոգաբարձութիւնը ձգտելով դպրոցի եկամուտներն աւելացնել շինում և կապալով է տալիս Ալէքսանդրեան փողոցի վրա մի կրպակ Ա. Շահնազարեանին տասը տարի ժամանակով՝ և տարեկան 600 ր. վարձով։

Դպրոցն իր ֆինանսական տարին վերջացնում է այսպէս, մուտք 11340 ր. 39 կ. ելք 12528 ր. 46 կ. դպրոցը տարին վերջացնում է 986 ր. 7 կոպ. բացով, մինչդեռ այդ բացը պիտի լինէր շատ աւելի մեծ, քանի որ միայն 1906-7 տարուանից 1578 ր. 46 կ. դեֆիցիտ կար, որի վրա պէտք էր աւելացնել նաև 1908 թուի տուրքերը, որ վճարուած է 1910 և 1911 թուերին, որն արդիւնք է բիւդճէից դուրս գալուն։ Բոլոր ուսուցիչներին և դպրոցի ծառայողներին վճարում է 657 ր. 59 կ. ամսական։

Դպրոցի կրթական գործն այս տարի նամանաւանդ սկզբին անցնում է ոչ սահուն ընթացքով. հաղիւ տարին սկսում է, ուսուցչաց և աւագ ուսուցչի մէջ ընդհարումն է պատահում, որի լուծումն արդէն յայտնի է։

Ուսուցչական ընտանիքը մի քիչ խաղաղուում է Բալայեանի հեռանալուց յետոյ։ Ուսուցչ. ժողովն, զբաղուում է մանկավարժական դաստիարակչական և կարգապահական խնդիրներով։ Նման նախընթաց տարիների, այս տարի էլ մանկավարժական ժողովը կազմակերպել է դպրոցական հանդէսներ։

Դպրոցն ունի ութը բաժանմունք, որոնցից

3-ը հիմնական դասարաններ են։ Աշակերտների ընդհանուր թիւն է 274. փոխադրուել են 169, մնացել դասարաններում 80, դուրս եկած 25 աշակերտ։ Ուսումն. տարին վերջանում է մայիսի 31-ին։ Այս տարուայ մասին հոգաբարձութեանը տեղեկագիր չի ներկայացնում։

1908-09 Ուսումն. տարի.

Հոգաբարձական կազմն է՝ Մ. Խզմալեան, Ա. Բիշարեան, Գ. Մսերեան, Մ. Մկրաչեան և երեսփոխան Մ. Ռուխկեան։ Տարուայ մէջ տեղի է ունեցել 23 հոգաբարձական ժողով։ Անցեալ ուսումն. տարին վերջանալուց յետոյ արդէն հոգաբարձութիւնը ջանք է գործ դնում ուսուցչական խումբը կազմել և մի պատրաստութիւն ունեցող աւագ ուսուցիչ հրաւիրել։ Խումբը կազմուում և դասերը բաժանուում են (15 սեպտեմբերի) այսպէս, աւագ ուսուցիչ Հ. Յովհաննիսեան (ուսանող Լայպցիկի համալսարանի 14 դաս, Գ. Միքայէլեան 24 դաս, Յ. Ք. Խաչվանքեան 14 դաս, Ե. Գրիգորեան 24 դաս, Խ. Սահակեան 21 դաս, Պ. Բաբայեան 15 դաս, Ռ. Աւետիսեան 20 դաս, Պ. Այվազեան 22 դաս, Ա. Արշակունի 14 դաս։

Դպրոցի վրա բարդուող պարտքերն ի նկատառած, հոգաբարձութիւնն աշխատում է դպրոցի տնտեսական վիճակը բարելաւել ծախսերի կրճատումով։ Նա միջոցներ է ձեռք առնում, որ տուրքերի ուշ վճարելու պատճառով դպրոցի վրա բարդուող տուգանքները չառնի։ Բայց դպրոցի ֆինանսները չեն բարելաւում. յետա-

գայում ինչպէս կտեսնինք, հոգաբարձութիւնը տնտեսական այս նեղ վիճակից ազատւում է 4000 ր. փոխառութեամբ։

Հոգաբարձութեան և ուսուցչական կազմի յարաբերութիւնները մնում են բնական ընթացքի մէջ։ Զանքեր են լինում եօթներորդ բաժանմունք բանալու, սակայն չի աջողւում, գլխաւորապէս նիւթականի պատճառով։

Հոգաբարձութեան հաշուեմատեանով այս տարի մուտքն է 12432 ր. 55 կ. կլոր 12302 ր. 1 կոպ. առձեռն դրամ 126 ր։ 54 կ. մինչդեռ առ 1 սեպտեմբերի մուտքը պիտի լինէր 11430 ր. 20 կոպ. քանի որ հոգաբարձութիւնը յետագայ 1909—10 ուսումն. տարւայ մուտքերից 1002 ր. 35 կ. գրել է 1908—9 մատեանի մէջ մուտք. բացի դրանից չէ վճարւած նաև նոյն տարւայ 887 ր. 50 կոպ. տուրքեր։

Ուսումնական տարւայ վերջին փոխւում է հոգաբարձական կազմը, յուլիսի 17-ից պաշտօնի են մտնում նորընտիր հոգաբարձուներ Մ. Խզմալեան (վերընտրւած), Հ. Իսահակեան. Յ. Էլբակեան, Յ. Տէր-Դաւթեան, և երեսփոխան Մ. Բուխկեան։ Նոյն օրը որոշում են հաշիւները յանձնել նոր գանձապահ Յ. Տէր-Դաւթեանին, հոգաբարձական հերթապահութիւն նշանակել և կազմել 1909 - 10 ուս, տարւայ նախահաշիւն ու ներկայացնել ամսի 26-ի ծխական ժողովին։ Որոշելով նոր աւագ ուսուցիչ հրաւիրել, հոգաբարձութիւնն արձակում է այս տարւայ ուսուցչական խումբը։ Ապա որոշում են յաջորդ 1909—10 ուս. տարում բանալ չորրորդ դասարան։ Ձեռնարկում են կարևոր նորոգու-

թիւնների յաջորդ դպրոցական տարւայ համար։ Օգոստոսի 6-ի և 21-ի ժողովներով որոշում են Թադէոս Խզմալեանին աւագ ուսուցիչ հրաւիրել 1400 ր, ռոճկով և 14 դասով, որն և իր համաձայնութիւնն է տալիս։

Մանկավարժական ժողովն իր արդէն յիշւած կազմով սկսում է հերթական պարապմունքներն 1908 թւի օգոստոսի 15-ից։ Դասաբաժանման խնդրից յետոյ ձեռնարկում է ժողովն աշակերտների ընդունելութեանը, դասագրքերի ընտրութեանը որոշում է դասական պիտոյքները դպրոցից տալ, ի նկատ առնելով որ ցածի բաժանմունքներում աշակերտները յաճախ տետրակ, գրիչ, մատիտ չեն բերում, որի պատճառով և տուժում է ուսուցման գործը։ Որոշելով այդ պիտոյքների համար խպառ չքաւորներից ոչինչ չառնել, միւսներից առնել 60 կոպ. (I բաժ.) 70 կոպ. (II բաժ.) և 80 կոպ. (III բաժ.) իւրաքանչիւր աշակերտից։ Կարևորութիւն տալով ընթերցանութեանը, որոշում են շաբաթ օրերն անել դասարանական ընթերցանութիւն։ Մանկավարժական ժողովն ի նկատ առնելով դպրոցական հանդէսների կրթիչ նշանակութիւնը, կազմակերպել է դպրոցական գրական-երաժշտական առաւօտներ (օր. թարգմանչաց տօնին, նոր տարուն և այլն). ապա զբաղւում է դասաւանդման եղանակների դպրոցի կարգապահութեան, դաստիարակչական և այլ խնդիրներով։ Ժողովը մի քանի նիստերում ըզբաղւում է ուսուցիչների կազմած առարկաների ուսման ծրագրի ընթերցումով, քննութեամբ և հաստատումով։ Ըստ նախկին տարի-

ների ժողովը կազմակերպում է դպրոցում ծնողական ժողովներ, որից այս տարի տեղի է ունենում 8 անգամ։ Թէև ապրիլի 29-ի ժողովում գ. դասարանում հրապարակական հարցաքննութիւն անելու խնդիրը, լուծւում է բացասական ձևով, սակայն հոգաբարձութեան դրական պահանջով նշանակւում է մայիսի 13-ից յունիսի 5-ը 11 առարկայից հրապարակական քննութիւններ։

Յունիսի 5-ին դպրոցական տարին վերջանում է մի հանդէսով։

Դպրոցի առաջադիմութիւնն արտայայտւել է այսպէս.—դպրոցի 7 բաժանմունքում եղել են 312, փոխադրւել են 160 մնացել 78, հեռացել 59 և աւարտել 15 աշակերտ։

1909—10 Ուսումն. տարի.

Մնում է հոգաբարձական նոյն կազմը։ Դպրոցն ունեցել է մուտք 12236 ր. 70 կ. կլք 11309 ր. 56 կ. առձեռն դրամ 927 ր. 14 կ. այս տարին միայն խնայողութիւն չպէտք է լինէր, այլ մի մեծ բաց։ Ըստ նախահաշիւ մնում է մուտք 11279 ր, որից 9823 ր. կալւածքներից և 1456 ր. ուսման վարձ. ելք 11279 ր. որ կայ եկեղեցու վրա 450 ր. խմբի վրա 7490 մանր ծախք 1251, կալւածական տուրք 887 ր. մինչդեռ նախահաշւով մուտք պիտի ցոյց տրւէր կալւածներից ոչ 9823 ռուբլի, այլ միայն 8766 ր. 98 կոպէկ։ Սրանից պարզ է, որ նոյն տարւայ (1909—10) մէջ մուտք պիտի ցոյց տրւէր ոչ թէ 11279 ր. (ըստ նախահաշիւ) այլ 10223 ր.

98 կոպ. իսկ մենք գիտենք, որ ցոյց է տրւած 12236 ր. 60 կոպ. այսինքն մօտ 2213 ր. աւելի, քան թէ այդ տարում կարող էին ունենալ։ Այդ գումարից 1890 ր. վերցրած է հետևեալ տարւայ մուտքերից և այս տարւայ մատեանը մոցրած։ Իսկ ինչ վերաբերում է ծախսին, նա դուրս է նախահաշւից։ Բայց դպրոցի սովորական դեֆիցիտը դրանով չի սահմանափակւում դրա վրա աւելանում են տարւայ մէջ նոյն տարւայ համար չվճարած 887 ր. տուրքերը և նախընթաց տարիների դեֆիցիտը։

Այդ կողմից, դպրոցի հրատարակած տեղեկագիրը չի համապատասխանում դպրոցի ոչ նախահաշւին և ոչ էլ հաշւեմատեանին։

Անկախ այդ աչքի ընկնող թերութիւնից, պէտք է ասել, ինչպէս նախընթաց, այնպէս էլ այս տարում հոգաբարձութիւնը դպրոցի վերաբերմամբ բարեխղճութեամբ և եռանդով է տանում իր պաշտօնը։ Այս ուսումն. տարում նա ունեցել է 36 հերթական նիստ։ Նիստերին հրաւիրւել է նաև դպրոցի աւագ ուսուցիչ Թ. Խզմալեանը։

Հազիւ տարին սկսած, հոկտեմբերին հեռանում է բժշկւելու համար Թ. Խզմալեան, հոգաբարձութիւնը նրա պաշտօնն յանձնում է ժամանակաւորապէս Յ. Ք. Խաչվանքեանին, որ կատարում է 2 ամիս ձրիաբար։ Թողնում է իր պաշտօնը ռուս լեզուի ուսուցիչ Սահակեան, նրա տեղ հրաւիրւում է Վ. Աբովեան-Շահխաթունեանը։ Մարտի մէջ բանտարկւում են դպրոցի մի քանի ուսուցիչներ, հոգաբարձութիւնը խառն

ժողովով կարգադրում է այդ պատճառով բաց մնացած դասերը։

Տարեայ երկրորդ կիսին հոգաբարձու Յ. Տէր-Դաւթեանի մահուան պատճառով նրա տեղ հրաւիրւում է անձնափոխանորդ Գ. Մսերեանցը։

Իսկ ուսումնական տարեայ վերջին աւագ ուսուցչի հեռանալու պատճառով նոյն պաշտօնի համար հրաւիրւում է դպրոցի ուսուցիչ Յ. Ք. Խաչվանքեանը։ Վերջինս ի նկատ առնելով դպրոցի նիւթական անբաւական պայմանները, յարգելով այդ և հոգաբարձութեան խնդիրը, համաձայնում է քիչ վարձատրութեամբ իր դասերի հետ վարել նաև այդ պաշտօնը 840 ր. ռոճկով։

Տարեայ սկիզբը հոգաբարձութիւնը ուզում էր, որ դպրոցի աւ. ուսուցիչը կազմէ ուսուցչական խումբը։ Նրա ուշ գալու պատճառով, խումբը կազմւում է օգոստոսի 28-ին այսպէս.—Թ. Ղազարեան աւարտել է Ներսիսեան դպրոց. Ժընեի համալսարանից (չաւարտած) 14 դաս ֆրանսերէն, ընդհանուր պատմութիւն, քաղաքացիական ուսմունք, հայոց լեզու, Գ. Միքայէլեան 26 դաս, Խ. Սահակեան ուսուչ. ինստիտուտ 26 դաս ռուս. լ. և պատմութիւն. Ռ. Աւետեան 18 դաս վերակացու և մանկաբարձ. ժողովի քարտուղար, Պ. Այվազեան 24 դ. Ա. Իսահակեան 18 դաս. քաղաքային դպրոցից, ունի ուսուցչական ցենզ. Ա. Դարբինեան 21 դաս, գրագրանապետ. Յ. Ք. Խաչվանքեան, Գ. Ճեմարան, 22 դաս կրօն, Հ. լեզու և պատմութիւն. Պ. Բաբայեան 14 դաս։ Հոգաբարձութիւնը բացել էայս տարի դ. դասարան,

հակառակ նիւթական անբաւական պարմանների։

Չորրորդ դասարանի բացումով դպրոցի բաժանմունքների թիւը լինում է 8-ը։ Աշակերտների թիւը 312. փոխադրել են 193 մնացել 60, աւարտել են 17 որոնցից 11 զբաղացինները, վերաքննելի 14, մնացածները դուրս են գնացել դպրոցից։ Փոխադրութեան համար հարցաքննութիւններ չեն եղել, այլ վերատուգութիւններ ուսուցչական խմբի և հոգաբարձութեան մասնակցութեամբ։

Մանկավարժական ժողովը ընդունելութիւնների խնդիրը վերջացնելուց յետոյ սկսում է իր աշխատանքը. նախ ընտրում է, նախապատուութիւն տալով առարկան դասաւանդող ուսուցչի կարծիքը, դասագրքեր։ Չորրորդ դասարան բացուած լինելով, նա զբաղւում է ծրագրի խնդրով և աշխատում է այն յարմարեցնել Ներսիսեան դպրոցի ուսման նոյն դասարանի ծրագրին։ Ուշք դարձնելով դասաւանդման եղանակների վրա, տարեայ սկզբում կազմակերպել է ժողովը մի քանի փորձնական դասեր, որից յետոյ տեղի է ունեցել փորձնական դասի քննութիւնը։ Դասատարակչական գործին զարկ տալու համար մանկավարժական ժողովը որոշում է ծնողական ժողովներ անել դպրոցում, տեղի ունեցած վեց ծնողական ժողովներին կարդացւում և խօսւում են ընտանիքի, նախադպրոցական կրթութեան, աշակերտների և ընտանիքի առողջապահութեան մասին և այլն։ Ժողովի որոշմամբ տեղի են ունեցել, ինչպէս

միշտ, դպրոցական հանդէսներ։

Ժողովներում արծարծել են դասաւանդման վերաբերեալ լուրջ խնդիրներ, որոնց մասին կարդացել են բեֆերատներ։ Այդպիսիներից է նաև ուսուցիչ Գ. Միքայէլեանի կարդացած բեֆերատը գրաւոր աշխատութիւնների մասին (XXII ժողով 17 փետրուարի)։

1910—11 Ուսումն. տարի.

Գործում է հոգաբարձական նոյն կազմը։ Դպրոցը դրամական տագնապի մէջ է, պարտքը բարձրացել է միայն պետական քաղաքային և համայնական հարկերն իր ժամանակին չտալու պատճառով տուգանքների հետ 3993 ր. 83 կոպ. որ հոգաբարձութիւնը Ե. Բաղդասարեանից պարտք վերցրած 4000 ր. է ծածկում։ Նախընթաց տարիների դեֆիցիտի մի մասը ծածկել է այսպէս. 1909 թի տրուում է տուրքերի պարտք 1076 ր. 15 կ. 1910-ին 1043 ր. 59 կ. որոնց մէջ այդ տուրքերն իր ժամանակին չվճարելու համար տուգանք 471 ր. 23 կոպ. բայց այնուամենայնիւ դպրոցի ֆինանսական տարին չի աղողուում առանց զգալի բացի ծածկել։ Միւս կողմից հոգաբարձութիւնն աշխատում է հնարաւոր ծախսերը կրճատել ու միայն կրճատում է աւագ ուսուցչին վճարելի ռոճկի $\frac{1}{3}$-ը։ Ինչպէս մենք գիտենք Յ. Ք. Խաչվանքեանը սիրայօժար կերպով յանձն է առնում պակաս վարձատրութեամբ դպրոցի այդ պաշտօնը, որ այնուհետև անանուում է արդէն տեսչութիւն։

Յուլիսի և ապա սեպտեմբերի 5-ի խառը հոգաբարձական և ուսուցչական ժողովում անում են դասաբաժանութիւնը.—Տեսուչ Յ. Ք. Խաչվանքեան 17 դաս. Գ. Միքայէլեան 25 դաս, Ռ. Աւետիսեան 24 դաս և մանկավարժական ժողովի քարտուղար, Պ. Այվասեան 22 դաս. Վիկտորիա Շահ-խաթունեան 24 դաս, Ա. Դարբինեան 24 դաս, Ա. Իսահակեան 24 դաս. Պ. Բաբայեան 14 դաս, Ա. Արշակունի 14 դաս. Ե. Գրիգորեան 24 դ. Կ. Աբովեան 4 դաս գերմաներէն։ Տարեայ մէջ մեռնում է ուսուցիչ Ե. Գրիգորեան։ Հոգաբարձութիւնն հետևեալ նիստերում զբաղուում է ընթացիկ գործերով - քննում է անցեալ տարեայ հաշուեմատեանը և վաւերացնում, ի նկատ է առնում ուսուցչաց բացակայութիւնը և որոշում առանց յարգելի պատճառի և թոյլտուութեան բացակայողներից հետ դնել ռոճկի համապատասխան մասը. դրպրոցի պարտքը վճարելու համար փոխարինարար վերցնում է 1911-ի փետրուարին Ե. Բաղդասարեանից 4000 ր. առանց %-ի։

Մինչ այս, վերջանում է դպրոցական տարին, հոգաբարձութիւնը լսում է տեսչի զեկուցումը և որոշում ռուս լեզուի և ռուս պատմութեան համար հրաւիրել ինստիտուտաւարտ, գիւղատնտեսական առարկաներ մտցնել դպրոցի մէջ և դրա համար հրաւիրել մասնագէտ գիւղատնտես, քանի որ Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը խոստանում է տարեկան 1500 ր. նպաստ տալ այդ դասընթացներին։ Ապա որոշած լինելով բարձրագոյն կրթութիւն ստացած տեսուչ հրաւիրել և ստանալով այդ

առթիւ ի միջի այլոց Արսէն Ղլաճեանի առաջարկութիւնը, որոշւում է հրաւիրել նրան դպրոցի տեսուչ 12 դասով և 1400 ր. տարեկան ռոճկով։

Դպրոցի այս տարւայ մուտքն է 15738 ր. 84 կ. ելքը 15432 ր. 42 կ. առաձեռն 286 ր. 42 կոպ. Մինչդեռ մուտքը պէտք է լինէր առ 1 սեպտեմբերի 14694 ր. 84 կ. ելքի մէջ չէ ցոյց տուած 4000 ր. Բաղդասարեանից և քաղաքային բանկից 450 ր. մուրհակով վերցրած պարտքերը, վերջինս ելք է գրւած 1911—12 թ. հաշուեմատեանի մէջ։ Ըստ այսմ 1910—11 ուս. տարւայ մուտքն է 14694 ր. 84 կ. ելքը 19902 ր. 42 կ. առ 1 սեպտեմբերի պարտք 5207 ր. 58 կ. էլ չենք ասում, որ 1910—11 տարւայ մի շարք վճարելիքներ արւել են յաջորդ 1911—12 տարւայ մէջ։ Ընթացիկ տարւայ մէջ ուսուցիչների և ծառայողների ամսական ռոճիկը հասնում է 652 ր. 32 կ. տարեկանը 6827 ր. 84 կ.

Մանկավարժական ժողովն արտայայտում է նոյնպիսի գործունէութիւն, ինչպէս և նախընթացը.—դասաբաժանութիւն, դասագրքերի ընտրութիւն, դասատիարակներ նշանակել, հոգացողութիւն աշակերտական ընթերցանութեան և դասարանական ընթերցանութիւն։ Խումբը կազմակերպել է դպրոցական հանդէսներ։ Հոկտեմբերին մանկավարժական ժողովը իբր փորձ փոխում է միանւագ կատարւող դասօրակա ըգը, բաժանելով դասերը ճաշից առաջ և ճաշից յետոյ։ Այս երկու շաբաթ միայն տեղ երկնւագ դասօրակարգը սակայն իր բացասական կողմերով, օրինակ բացակայութիւնների

շատանալը և այլն, հարկադրում է ժողովին (13 նոյեմբերի) վերադառնալ միանւագ դասօրակարգին։ Ապրիլի 30-ից սկսած ժողովն ըզբաղւում է դպրոցական ուսման ծրագրի քննադատութեամբ ու իւրաքանչիւր առարկայի մասին իր դիտողութիւնն անելով ուղարկում է թեմական խորհրդին։

Դպրոցը այս տարի ունի 8 բաժանմունք, 3 պատրաստական, գ-ը մի զուգընթացով և 4 հիմնական դասարան. աշակերտների թիւն է 270, աւարտել 8, մնացել 70, հեռացել 50.

1911—12 Ուսումն. տարի.

Այս տարւայ սկզբից գործում է հոգաբարձական հետևեալ կազմը—Համբարձում Տէր-Ղազարեան, Յակոբ Էլբակեան, Յովհաննէս Մատինեան, Համազասպ Իսահակեան, և երեսփոխան Միսակ Բուլկեան։ Հեռացող Ա. Դարբինեան, Տ. Վ. Շահ-խաթունեան, Աբովեան ուսուցիչների դասերը տրւում են ռուս լեզու և պատմութիւն 26 դաս Լ. Մանդինեանին, բնագիտական առարկաներ 15 դաս գիւղատնտես Կ. Զարիչեանին և գերմաներէն 4 դաս Ա. Ղլաճեանին։ Հոգաբարձութիւնը խմբի մէջ այլ փոփոխութիւն չի անում։ Վերակացութեան պաշտօնը, որ նախընթաց տարում ձրիաբար կատարում էին ուսուցիչները հերթապահութեամբ, այս տարի 150-ական ռուբլի վարձատրութեամբ տրւել Ա. Արշակունուն և Ա. Իսահակեանին, իսկ վերջինս այդ պաշտօնից նոյեմբերի սկզբին հրաժարւելու պատճառով

յանձնելէ ուսուցիչներ Ռ. Աւետիսեանին, Լ. Մանդինեանին և Պ. Այվազեանին՝ վարձատրութիւնն էլ նոցա մէջ բաժանելով։

Հոգաբարձութիւնը ձեռնարկելով ներկայ տարւայ նախահաշիւը կազմելուն, թողեց նախկին բոլոր տարիներում սովորական դարձած ձևը։ Նա իր նախահաշիւի մէջ աշխատել է դուրս բերել դպրոցն իր նիւթական ամբողջ պատկերով, ցոյց տալով դպրոցի նաև պարտքերը։ Միւս կողմից էլ հաստատ որոշած լինելով դուրս չգալ նախահաշիւի սահմաններից, իսկ այդ անհնար էր առանց նոր եկամուտների ուսուցի և բարձրացրել է դպրոցի կրպակների քրէհները չափաւոր կերպով, որով եկամուտը դառնում է 10212 ր. Զգալով դպրոցը բարձրացնել ըստ կրթականի, որոշեց դրա համապատասխան էլ բիւդճէ ունենալ, այսինքն բարձրացնել եկամուտները։ Այս մտքով նա դիմումն արաւ Էջմիածնի Սինոդին հոգևոր վիճակային դպրոցի հին շինութեան դեռ չշինուած մասն յանձնել հոգաբարձութեանս այն պայմանով, որ այդ տեղի վրա կրպակներ շինեին և եկամուտները բաժանեին 3 մասի, երկուսը դպրոցին և մէկը Էջմիածնին։ Բացի դրանից ի նկատ առնելով, որ աւարտողների ցուցակի համեմատ նոցա կէսից աւելին գիւղացիներ են, ի նկատ առնելով, որ սա գաւառիս միակ այս տիպի դպրոցն է, և ի նկատ առնելով, որ Երևանի թեմական դպրոցը մեր գաւառից ոչ ոք չի գնում, իսկ հայկական միջնակարգ կրթութիւն ստանալ ցանկացողը գնում է Թիֆլիս, որոշեց դիմել բարձրագոյն հոգևոր իշխանութեան, վիճակի եկամուտների թեմական դպրոցին գնացող մասը և առհասարակ նրա մի մասը թողնել Ալէքսանդրապոլի վիճակային դպրոցին, և այդ նաև այն պատճառաբանութեամբ, որ Երևանի թեմական դպրոցը ծառայելով Երևանին և իր շրջակայքին, այսքան տարի է օգտուել է մեր տեղական եկամուտներից, առանց որ որևէ օգուտ տար մեր գաւառին։ Հոգաբարձութիւնն այսպիսի միջնորդութիւն յարուցանելով ամենևին միտք չէ ունեցել վնասել Երևանի թեմական դպրոցին, որ ապահով է ու կարօտ չէ գաւառական մի դպրոց զրկելով պահպանելուն։ Հոգաբարձութեան միտքն է վիճակի դպրոցին յատկացնել տալ վիճակին պատկանող եկամուտը։

Այնուհետև խորհրդածութեան նիւթ անելով դպրոցիս գիւղատնտեսական դասընթացները, ու ձգտելով մեր դպրոցում ոչ միայն թուղթի գիւղատնտեսական գիտելիքներ անցնել, այլ եռամեայ դասընթացով տեսականի հետ գործնականն էլ զուգընթաց անցնել, նա դիմեց տեղիս քաղաքային խորհրդին, տալ 20 դեսեատին քաղաքի անջրդի հողերից և 2 դեսեատին ջրովի հողերից։ Քաղաքը տուեց 20 դեսեատին անջրդի և առ այժմ 2 դեսեատին ջրովի հող տարեկան որոշ կապալավարձով։ Հոգաբարձութիւնը դպրոցի մասնագէտ գիւղատնտեսի ձեռքով այդ տեղերի վրա ձեռնարկել է օրինակելի փորձ և ցուցադաշտ հիմնել ոչ միայն աշակերտների այլ և կողմնակի հետաքրքրուողների համար։ Հոգաբարձութիւնն այս ծրագիրն իրագործելու համար, հողը ձեռք բերելու հետ

միասին, դիմեց Ս. Պետերբուրգի հայ եկեղեցիների խորհրդին և խնդրեց ի նկատ առնելով մեր գաւառի ծով կարիքները, աւելացնել մեր դպրոցին նշանակած 1500 բուբլու վրա ևս 2000 բուբլի։

Հէնց տարեայ սկզբից, հոգաբարձութեան որոշման համաձայն հոգաբարձութեան անդամի իրաւունքով դպրոցի տեսուչը հրաւիրեց հոգաբարձական նիստերին։

Տեսչի զեկուցման հիման վրա հոգաբարձութիւնը որոշում է 1912 թի մայիսին տօնել մեր դպրոցի 70 ամեայ գոյութիւնը, որի համար կազմուում է մի խառն ժողով։

Դպրոցի 70 ամեակն ի նկատ առած դիմումներ են եղել մեր քաղաքացիներից հարուստներին, որևէ կերպ ապահովել մեր դպրոցն այնպէս, որ հնարաւոր լինի եկող տարի բանալ հինգերորդ դասարան, որ անհրաժեշտ է դառել գիւղատնտեսութեան դասընթացները մեր դպրոցում ծրագրած ծաւալով անցնելու պատճառով։

Ուսուցչական խումբն իր գործունէութիւնն արտայայտել է այսպէս. ունենալով տարեայ ընթացքում 25 նիստ, դասաբաժանութիւնից յետոյ զբաղուել է դպրոցի վերին դասարանների ուսման ծրագրով ու յանգել այն եզրակացութեան, որ այն պէտք է անպատճառ յարմարեցնել Ներսիսեան դպրոցի համապատասխան դասարաններին, սկսած երկրորդ դասարանից։ Այս տարի գործադրուեց այդ որոշումը միայն ընդհանուր պատմութեան վերաբերմամբ, թողնելով միւս առարկաները եկող ուսումն. տարեան։ Դասագրքերի, դասատիրակների ընտրութեանց խնդիրներից բացի զբաղուել է մանկավարժական ժողովը դասատիրակչական-կարգապահական խնդիրներով, կազմակերպել է դպրոցական հանդէսներ և 2 փորձնական դաս, եռանդուն մասնակցութիւն է ունեցել դպրոցիս 70 ամեայ տօնը կազմակերպելու բոլոր ձեռնարկութիւններին։

Դասարանների թիւը նոյնն է. դպրոցում եղել են 285 աշակերտ, տարեայ մէջ դուրս են գնացել 32, տարեայ վերջը կայ 253 աշակերտ։

Դպրոցի եօթանասունամեայ տօնը.

Դպրոցի յոբելեանը կատարելու համար նախապէս ընտրուեց տօնի ծրագիրը կազմող մի յանձնաժողով։ Այդ յանձնաժողովը մի շարք խորհրդակցութիւններից յետոյ, զեկավարուելով հոգաբարձական և մանկավարժական ժողովների ցուցումներով, որոշեց հանդէսն անել զուտ դպրոցական՝ գրական-երաժշտական բաժիններով։

Գրական բաժնի մէջ մտնում են ոտանաւոր և արձակ գրուածքների արտասանութիւնները՝ աշակերտների կողմից, իսկ երաժշտական բաժնի մէջ խմբական երգեր՝ դպրոցական նուագածուների ընկերակցութեամբ։ Գրական բաժնի մէջ մտնում են նաև հաշուետուութիւններ հոգաբարձութեան և դպրոցի տեսչի կողմից, իսկ մանկավարժական ժողովի կողմից բացատրուելու է մեր դպրոցի կուլտուրական նշանակութիւնը մեր քաղաքի և գաւառի համար։ Թէ

հոգաբարձութիւնը և թէ տեսուչն այնուհետև կանգ են առնելու մեր դպրոցի ապագայի վրա։

Հոգաբարձութիւնը հոգ տանելով մեր դպրոցի ապագայ բարձրացման մասին, հարկաւոր դիմումներ է արել մեր համաքաղաքացիներին նիւթական օժանդակութիւն ցոյց տալու համար։ Եղել են լաւ խոստումներ ու հոգաբարձութիւնն սպասում է, թէ այդ խոստումները կէրագործուին. Դպրոցի տօնի առթիւ եղել են և կամաւոր նուիրատուութիւններ, որոնց մասին իր ժամանակին կլինի հրապարակական հաշուետուութիւն։

Դպրոցի յօբելեանի մասին հրատարակուեց մի կոչ—դիմումն մեր համաքաղաքացիներին. ուղարկուեցին առանձին գրութիւններ զանազան հայկական դպրոցական հիմնարկութիւններին, թեմական առաջնորդներին, մեր վիճակում պաշտօնավարած վարդապետներին ու եպիսկոպոսներին ինչպէս և պալբերական հրատարակութիւններին։

Մայիսի 13-ին տեղի ունեցաւ դպրոցիս աշակերտների և համաքաղաքացիների մի ժողով, որտեղ որոշուեց աշխատել վիճակային դպրոցն ապահովող մի դրամագլուխ կազմել։

Տօնի նախընթաց օրերը պատրաստ լինելով դպրոցի սոյն համառօտ պատմութիւնը, հոգաբարձութիւնը որոշեց այդ տարածել տօնի օրը հասարակութեան մէջ և վաճառման զուտ արդիւնքը միացնել դպրոցի ապահովման ֆոնդին։

«Ազգային գրադարան»
NL0229964

51. 644